

ՀՀ գիտությունների սրբազին, ամուլենի
ՏՄՏԻՆՈՎԻ ԿԻՏԵՂ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿՈՄԻՏԵ



ԼԵԶՈՒ ԵՎ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

(Հայերենագիտական հանդես)

1 (32)
2025

ЯЗЫК И ЯЗЫКОЗНАНИЕ
(Журнал арменоведческих исследований)

LANGUAGE AND LINGUISTICS
(Journal of Armenian Studies)

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA

Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆԼԵԶՎԻՒՆՍԻՏԻՏԻՏ
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА
H. ACHARYAN INSTITUTE OF LANGUAGE

Լ Ե Ջ Ո Ւ
Ե Վ
Լ Ե Ջ Վ Ա Բ Ա Ն ՈՒԹՅՈՒՆ
(Հայերենագիտական հանդես)

•

ЯЗЫК И ЯЗЫКОЗНАНИЕ
(Журнал арменоведческих исследований)

LANGUAGE AND LINGUISTICS
(Journal of Armenian Studies)

1 (32)
2025



ԵՐԵՎԱՆ • ЕРЕВАН • YEREVAN

Հանդեսի հիմնադիրն է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը:
Լոյս է տեսնում 2003 թ., տարին երկու անգամ:

Գլխավոր խմբագիր՝ Վ. Գ. Համբարձումյան
Խմբագրի տեղակալ՝ Ն. Մ. Սիմոնյան
Պատասխանատու քարտուղար՝ Մ. Ա. Սարգսյան

Խմբագրական խորհուրդ

Բրուտյան Լ. Գ., Գալստյան Ա. Վ., Թրագուտ Յ. (Ավստրիա), Խաչատրյան
Գ. Կ., Կատվալյան Վ. Լ., Հովհաննիսյան Գ. Ռ., Մոլոդիչենկո Ե. (ՌԴ),
Մոհամմադի Մ. Մ. (Իրան), Տոնապետյան-Դեմոպուլոս Ա. (Ֆրանսիա), Մարկո
Բաիս (Իտալիա), Անդրեա Սկալա (Իտալիա), Մանանա Միկաձե (Վրաստան)

Բաժինների խմբագիրներ

Գալստյան Ա. Վ. (հայերեն), Բրուտյան Լ. Գ. (ռուսերեն), Հովհաննիսյան
Գ. Ռ. (անգլերեն)

Главный редактор - В. Г. Амбарцумян

Заместитель редактора - Н. М. Симонян

Ответственный секретарь - М. А. Саргсян

Редакционная коллегия

Брутян Л. Г., Галстян А. В., Катвалян В. Л., Молодниченко Е. (РФ),
Мохаммади М. М. (ИРИ), Оганисян Г. Р., Трагут Я. (Австрия), Хачатрян Г. К.,
Тонапетян-Демопулос А. (Франция), Марко Баис (Италия), Андреа Скала (Италия),
Манана Микадзе (Грузия).

Редакторы разделов

Галстян А.В. (армянский), Брутян Л.Г. (русский), Оганисян Г.Р.
(английский)

Editor-in- chief V. G. Hambardzumyan

Vice-editors N. M. Simonyan

Responsible secretary M. A. Sargsyan

Editorial Board

Brutyan L. G., Donabédian-Demopoulos A. (France), Galstyan A. V., Hovhannisyan
G. R., Katvalyan V. L., Khachatryan G. K., Mohammadi M. M. (Iran), Tragut J. (Austria),
Tonapetyan- Demopoulos A. (France), Marco Bais (Italy), Andrea Scala (Italy), Manana
Mikadze (Georgia).

Editors of sections

Galstyan A. V. (Armenian), Brutyan L. G. (Russian), Hovhannisyan G. R. (English)

ISSN 1829-0183

© Լեզու և լեզվաբանություն

© ՀՀ ԳԱԱ հրատարակչություն, 2025

Հ Ո Ղ Վ Ա Ծ Ն Ե Ր. C T A T Ե H. A R T I C L E S.

ԵՂԱՆԱԿԱՎՈՐՄԱՆ ԸՄԲՈՆՈՒՄԸ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ ԱՇՈՏ ԳԱԼՍՏՅԱՆ

ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի դեկան, ք. գ. դ. պրոֆ.
ash.galstyan@mail.ru

ԹԱՄԱՐԱ ԱՐՇԱԿՅԱՆ

ՀՊՄՀ ռոմանագերմանական լեզուների և նրանց դասավանդման
մեթոդիկայի ամբիոնի դասախոս, ՀՀ ԳԱԱ ԼԻ հայցորդ
t.arshakyan@hesc.am

DOI: 10.57236/1829-0183-2025.1(32)-3

Համառոտագիր

Հոդվածում ներկայացված է լեզվաբանության և տրամաբանության մեջ եղանակավորման կարգերի հասկացական դաշտերի հնարավոր սահմանազատումը: Առանձնացվել և համադրվել են *տրամաբանության մեջ եղանակավորման* հիմնական հասկացական հարացույցները: Դիտարկվել է եղանակավորման զարգացմանն առնչվող խնդրի վերաբերյալ լեզվաբանների կողմից առաջարկված սահմանումները, ըմբռնումները, լեզվաբանության մեջ եղանակավորման ճանաչողական և գործաբանական տեսակետների տարբերակները, ինչպես նաև համադրվել են լեզվամտածողության և եղանակավորման (ենթա)կարգերի ընդհանրությունները: Միևնույն ժամանակ, դիտարկվել են եղանակավորման լեզվական արտահայտչամիջոցները և տեսակները՝ ըստ իմաստների, ինչպես նաև լեզվաբանության դիտակետից:

Առանձնացվել են եղանակավորման՝ իբրև առարկայական (օբյեկտիվ) իրականության լեզվական արտահայտության քերականական սահմանումային (ուղիղ), և ոչ սահմանումային (անուղղակի) կարգերը: Հետազոտվել են լեզվի և մտածողության միջև ներքին կառուցվածքային փոխկապակցվածությունը, ընդգծվել շարահյուսության և իմաստաբանության միջև լեզվի սահմանային տիրույթը, բացահայտվել և նկարագրվել են լեզվում գոյություն ունեցող հատվածները, ինչպես նաև լեզվամտածողության և հասկացական համակարգի առնչակցությունը:

Դիտարկվել են լեզվական երևույթների դասակարգման բազմաշերտ գործառնությամբ ընդհանրությունը և նրանց եղանակավորող նշանակությունները, ինչպես նաև տարբեր լեզվահամակարգերում եղանակավորման միջոցները, բառապաշարի, քերականական տարբեր մակարդակների լեզվական միջոցների կիրառությունը:

Բանալի բառեր և բառակապակցություններ. մոդալ տրամաբանություն, եղանակավորման կարգեր, եղանակավորող իմաստներ, արտահայտության բովանդակություն և եղանակավորում, իմացաբանական և դեոնտիկ եղանակավորում, ցանկության, հեռաբանական, կամային և քանակական *եղանակավորում*:

THE PERCEPTION OF MODALITY WUTHIN THE LINGUISTIC PARADIGM

ASHOT GALSTYAN

Doctor of Philological Sciences, PhD

Dean of the Philological Faculty of the ASPU after Kh. Abovyan

ash.galstyan@mail.ru

THAMARA ARSHAKYAN

Lecturer at the Department of Romano-Germanic Languages and Methods of Teaching

Them at Khachatur Abovyan Armenian State Pedagogical University

t.arshakyan@hesc.am

Abstract

The article provides an overview of the conceptual fields of modality categories in logic and linguistics. The fundamental conceptual constructs of modality in logic are identified, analyzed, and compared. It also examines definitions and interpretations proposed by linguists regarding the development of modality. The article explores the distinctions between cognitive and functional perspectives on modality in linguistics, as well as the similarities between (sub)categories of language thinking and modality. At the same time, the linguistic markers of modality and types of modality are considered from a semantic perspective, along with linguistic markers analyzed through a linguistic lens.

Keywords and phrases: modal logic, modality categories in logic and linguistics, modal meanings, content of expression, modality of expression, epistemic and deontic modality, desiderative, teleological, volitional, and quantitative modality.

ВОСПРИЯТИЕ МОДАЛЬНОСТИ В ЛИНГВИСТИЧЕСКОЙ

ПАРАДИГМЕ

АШОТ ГАЛСТЯН

Д. ф. н., проф.

декан филолог. факультета АГПУ имени Х. Абовяна

ash.galstyan@mail.ru

ТАМАРА АРШАКЯН

Преподаватель кафедры ром.-герм. яз. и мет. их преподавания

АГПУ имени Х. Абовяна

t.arshakyan@hesc.am

Аннотация

В статье представлен обзор концептуальных полей категорий модальности в логике и лингвистике. Выделены, проанализированы и сопоставлены основные концептуальные конструкции модальности в логике. Также рассматриваются определения и интерпретации, предложенные лингвистами в контексте формирования модальности. Анализируются различия между когнитивным и функциональным подходами к модальности в лингвистике, а также сходства между (под)категориями языкового мышления и модальности. Одновременно исследуются языковые маркеры модальности и её типы с семантической точки зрения, а также языковые средства выражения рассматриваются с лингвистической позиции.

Ключевые слова и словосочетания: модальная логика, категории модальности в логике и лингвистике, модальные значения, содержание выражения, модальность выражения, эпистемическая и деонтическая модальность, желательная, телеологическая, волевая и количественная модальность.

Եղանակավորումը լայն կիրառություն ունեցող միջառարկայական հասկացություն/եզրույթ/ է, որը կիրառվում է փիլիսոփայության, տրամաբանության, հոգեբանության, լեզվաբանության մեջ: Եղանակավորման ընդհանրական սահմանումները լեզվաքերականական կարգերի միջև հատկանիշների որակի աստիճանավորումն է:

Լեզվաբանության մեջ եղանակավորումը համարվում է նախադասության՝ որպես լեզվական միավորի, ամենակարևոր բնութագրիչներից մեկը: Եղանակավորման կարգը ի սկզբանե ուսումնասիրվել է փիլիսոփայության և տրամաբանության մեջ: Գիտնականները տարբեր կերպ են մեկնաբանում նրա հայեցակարգերը: Սակայն կարգն ուսումնասիրելիս չենք կարող շրջանցել նրա փիլիսոփայական-տրամաբանական հիմքերը: Եղանակավորման վերաբերյալ դատողություններն ի սկզբանե արվել են Արիստոտելի կողմից: Նա հիմք է դրել եղանակավորող տրամաբանություն գիտությանը, որտեղ եղանակավորումը համեմատվում է

արտահայտությանը և ստորոգյալին: Արիստոտելը մոդալ տրամաբանության հիմնադիրն է, գիտություն, որում «մոդալությունը, տրամաբանական օպերացիաներին հավասար կիրառվում է ասույթների և պրեդիկատների առնչությամբ» [13, էջ. 372]. Նա նաև առանձնացնում է հնարավորի, իրականի և անհրաժեշտի հարաբերակցությունը: Ըստ Արիստոտելի՝ եղանակավորումը որևէ երևույթի գոյության կամ իրացման միջոց է:

Արիստոտելի կողմից են առանձնացվել նաև «անհրաժեշտ», «հնարավոր», «անհնար», «պատահաբար» եղանակավորում արտահայտող հասկացությունները: Ըստ նրա՝ խոսքի յուրաքանչյուր ուղղորդում վերաբերում է որևէ հղման, դրան հատուկ միջոցներով, որը տվյալ իրադրության համար հնարավոր է և ներհատուկ:

Ֆրանսիացի լեզվաբան Ֆ. Բրյունոն տարբերում է եղանակավորումների մի քանի տեսակ՝ դատողության, զգայական և կամքի: Վ. Վինոգրադովը, Տ.Պ. Լոմտևը, Գ.Ա. Զոլոտովան, Ե.Ն. Կլոբուկովը կարծում են, որ յուրաքանչյուր նախադասություն կարող է իրականության նկատմամբ որոշակի վերաբերմունք արտահայտել:

Յա.Գ. Տելեցը բնութագրում է եղանակավորումը որպես համընդհանուր լեզվական կարգ, որը տարբեր միջոցներով իր արտահայտությունն է գտնում բոլոր լեզուներում [2, էջ 236]: Նրա կարծիքով եղանակավորումը ներառում է մի շարք իմաստաբանական հակադրամիասնություններ, որոնք համապատասխանում են խոսողի, խոսակցի և հաղորդագրության տարբեր հարաբերությունների, այսինքն՝ խոսքային իրադրության դրսևորումներին: Եղանակավորումը սահմանվում է նախադասության տիրույթում, քանի որ նախադասությունը սովորաբար դիտարկվում է որպես խոսքի հաղորդակցության միավոր:

Վ.Ն. Տարասենկոյի աշխատություններում հատկապես ուշագրավ են աշխարհընկալման եղանակավորման արտահայտման ձևերը (կասկած, անորոշություն, երկընտրանք և այլն) և դրանց կառուցվածքային և իմաստաբանական հատկությունների իմաստային հարաբերությունների տարբերակման ուսումնասիրությունը: Վ. Ն. Տարասենկոյի մեկնաբանությամբ ալետիկ (արտահայտության ճշմարտացիության գնահատում) եղանակավորումը ընդգծում է որոշակի փաստերի, բնության օրենքների ընդհանրությունը, համադրվում է սուբյեկտիվ եղանակավորման հետ՝ արտահայտելով հնարավոր իրադարձությունների և երևույթների գնա-

հատում: Դիտարկումը բարդանում է նրանով, որ իմացաբանական եղանակավորման դեպքում նկատում ենք տարանջատում, ինչպես սուբյեկտիվ և օբյեկտիվ իմացաբանական (эпистемической) եղանակավորման մեջ, այնպես էլ դրա արտահայտության օբյեկտիվ և սուբյեկտիվ միջոցների միջև, որն էլ հենց սույն ուսումնասիրության առարկան է:

Եղանակավորման տրամաբանական կարգերը կարող են հիմք ընդունվել՝ լեզվական եղանակավորման իմաստների բազմաստիճան խըմբերը միավորելու համար:

Եղանակավորման կարգը առանձնացվել և ուսումնասիրվել է տրամաբանության մեջ: Այնուհետև մշակվել են եղանակավորումն արտահայտող միջոցների ընդարձակ կարգեր՝ սահմանելով եղանակավորման իմաստային կառուցվածքը: Տրամաբանության մեջ եղանակավորման հիմնական տեսակները և լեզվաբանության մեջ եղանակավորման կարգերը տարբեր ժամանակներում ստացել են տարաբնույթ սահմանումներ, որոնք արտահայտում են շրջապատող իրականության նման իրավիճակներ, սահմանում ներկայացված փաստերի իրականության, հուսալիության և ճշմարտացիության աստիճաններ: Պ. Պորտները նշում է, որ «եղանակավորման տրամաբանությունն առարկայի հիմնական սահմանների ընդգծումն ունի բացառիկ կարևորություն եղանակավորման կարգն ուսումնասիրող լեզվաբանների համար, քանի որ եղանակի կարգի իմաստաբանության վերաբերյալ տեսականորեն առաջին ճշգրիտ գաղափարներից մի քանիսը մշակվել են տրամաբանության շրջանակում: Տրամաբանությունը, անշուշտ, չի կարող հավակնել որպես լեզվական եղանակավորման իմաստային տեսությանը ամբողջությամբ անդրադարձ կատարող գիտակարգ, սակայն տրամաբանության հիմնական հասկացական հարացույցը կարող է հարմարեցվել լեզվական վերլուծությանը: Այնուամենայնիվ, եղանակավորման նոր իմաստային տեսություններ դիտարկելիս տրամաբանությունը գնահատման կարևոր չափանիշ է» [14, էջ 45– 46]:

Ի տարբերություն տրամաբանության լեզվաբանության տեսակետից եղանակավորման տեսակների տարանջատումն ըստ իմաստային և լեզվարտահայտչական կառուցվածքի, ավելի հստակ է: Տրամաբանությունը էական և ճշգրիտ ներկայացնում է եղանակավորման կարգերի անփոփոխականների իմաստաբանությունը և նրանց տրամաբանական շարադասությունը: Եղանակավորման կարգերի տրամաբանական-լեզվաբա-

նական մոտեցմամբ ուսումնասիրությունը նպաստում է հաղթահարելու հիմնական և առավել բարդ խնդիրները դրանք ուսումնասիրելիս, համակարգել (ընդհանրացնել) և դասակարգել եղանակավորող տարբեր իմաստներ: Այս առումով հնարավոր է միավորել լեզվական և տրամաբանական եղանակավորման հասկացությունները: Տրամաբանական և լեզվական եղանակավորումները հարստացնում և լրացնում են միմյանց, սակայն անհրաժեշտ է նշել, որ լեզվաբանության մեջ շատ կարևոր է լեզվական միջոցների ընտրությունը՝ խոսույթում հաղորդագրության ճշգրտության, տեղեկատվության նպատակային փոխանցման և ամբողջականության նպատակներով:

Այսպիսով, տրամաբանությունը կարևոր գիտաճյուղ է լեզվաբանության եղանակավորման կարգերն ուսումնասիրելիս և սահմանելիս, քանի որ այն ստեղծել է որոշակի իմաստների մշակված համակարգ, ձևավոել յուրահատուկ բաշխում:

Մենք մասնակից ենք դառնում իրադարձությունների կամ ստանում ենք տարբեր տեղեկատվություններ, որոնք առաջացնում են դրական կամ բացասական ասոցիացիաներ կամ հույզեր: Արտաքին աշխարհի հետ փոխազդելու, սեփական վերաբերմունքն արտահայտելու, իրադարձություններին արձագանքելու համար կան տարաբնույթ միջոցներ: Այդ միջոցներից ամենապարզը և միևնույն ժամանակ ամենաբարդը խոսքն է՝ ընդհուպ մինչև պարզ նախադասությունների միջոցով:

Խոսքն արտացոլում է իրականությունը գործնական, սոցիալական գիտակցության մեջ և արտահայտում է բովանդակության վերագրումը իրականությանը: Դա հնարավոր է դառնում տարբեր լեզվական միջոցների կիրառության շնորհիվ՝ լեզվական մշակույթներում առկա միջոցների հնարավորությունից ելնելով:

Ժամանակակից լեզվում առկա համապատասխան միջոցների հարացույցը/ համակարգը դուրս բերելու նպատակով անհրաժեշտ է ուսումնասիրել նրա քերականական, շարահյուսական, հնչյունական և բառային տարրերի իմաստային առանձնահատկությունների համակարգը: Այս բոլոր տարրերի ձևավորումը երկարամյա գործընթաց է՝ կապված լեզվի զարգացման և կատարելագործման հետ:

Եղանակավորման աստիճանական զարգացմանն առնչվող խնդիրը նշանակալի է և գտնվում է շատ լեզվաբանների ուշադրության կենտրոնում: Լեզվաբանության մեջ եղանակավորումը այն եզակի երևույթնե-

րից է, որը, չնայած իր երկարամյա գոյության պատմությանը, շարունակում է մնալ շատ լեզվաբանների ուշադրության կենտրոնում, քանի որ մինչ այժմ բացակայում են այդ երևույթի բնութագրման համար հստակ սահմանումներ: Եղանակավորումը կամ մոդալականությունը (լատ. modus - միջոց, մեթոդ) լեզվի, մտածողության և տրամաբանության հիմնասյունն է: Այն արտահայտության բովանդակության դրսևորում է իրողության նկատմամբ խոսողի /պատմողի/ տեսանկյունից:

Տարբեր լեզուներում եղանակավորումը իրացվում է տվյալ լեզվամտածողությանը բնորոշ առանձնահատկություններով:

Եղանակավորման տրամաբանական հարացույցում իրացման վերաբերյալ քննարկումներն ունեն երկար պատմություն: Դեռևս Արիստոտելից առաջ առաջին անգամ հիշատակվել է Պրոտագորասի կողմից: Նա խոսքի արտահայտումը բաժանել է չորս տեսակի՝ խնդրանք, հարց, պատասխան, հրաման՝ դրանք անվանելով «խոսքի ճյուղավորումներ»: Պրոտագորասի «խոսքի ճյուղավորում» հասկացությունը ժամանակակից գործաբանական լեզվաբանության մեջ համապատասխանում է խոսքային գործունեության եղանակավորման կարգի ավելի ընդգրկուն բնութագրմանը, որն առանձնանում է առաջադրված խնդրով՝ կապված խոսողի մտադրություններից [3, էջ. 33]: Պրոտագորասի տեսությունը ըստ էության կարելի է ասել հիմք է լեզվի հաղորդակցական համակարգի ձևավորման համար:

Եղանակավորող տրամաբանությունը XX դ. կեսերից ընդգրկվել է նաև մի շարք համալսարանների մասնագիտությունների ցանկում: «Այն շարունակում է զարգանալ և հարստանալ եղանակավորող նոր իմաստներով և կարգերով՝ ուսումնասիրության շրջանակի մեջ ներառելով եղանակավորման կարգը բնութագրող նոր հասկացություններ: Այդ հանգամանքը նպաստում է մոդալ տրամաբանության նոր հարազարգացումներին, որը նպաստում է, որ եղանակավորման վերաբերյալ ուսումնասիրությունները մշտապես լինեն ժամանակակից տրամաբանական հետազոտությունների կենտրոնում» [10, էջ 516]:

XIII-XIV դդ. Արիստոտելի աշխատությունների ազդեցությամբ առաջանում է մի նոր ուղղություն, որի ներկայացուցիչները հայտնի են որպես «Եղանակավորողներ» (մոդիստներ) [13, էջ 520]: Նրանք եղանակավորող տրամաբանության մեջ առանձնացնում են դիկտում (արտահայտության հիմնական բովանդակություն կամ օբյեկտիվ իրականություն) և

մոդուս (արտահայտության եղանակավորում կամ իրականության արտահայտումը սուբյեկտի տեսանկյունից, արտահայտության մեջ խոսողի վերաբերմունքը ներկայացված իրականությանը) տերմինները, որոնք բնութագրում են օբյեկտիվ իրականությունը և նրա սուբյեկտիվ դրսևորումները:

«Այդ ուղղության» ներկայացուցիչներն արտահայտության մեջ առանձնացնում են երկու բովանդակային պլան – «հաղորդում» (լատ. dictum), այսինքն՝ օբյեկտիվ բովանդակություն, որն ուղղակիորեն վերաբերում է իրականությանը, և «խոսողի վերաբերմունքը ասվածին» (լատ. modus), այսինքն՝ բովանդակության սուբյեկտիվ-գնահատողական բաղադրիչ» [13, էջ 137]:

Գիտական տրամաբանության մեջ հաղորդման և եղանակի (dictum and modus) տարբերակումը լեզվաբանների (հատկապես սխոլաստների) կողմից հատկանշական և տրամաբանական էր լեզվաբանական մտքի զարգացման համար: Այդ եզրույթների օգնությամբ XX դ. շվեյցարացի գիտնական Շ. Բալլին, զարգացնելով «Եղանակավորողներ»-ի գաղափարները, մեկնաբանեց իր հայեցակարգը եղանակավորման տեսության մեջ: Նա առանձնացրեց արտահայտության պլանի երկու բովանդակություն՝ հաղորդում (դիկտում) - առարկայական-տեղեկատվական բաղադրիչ և եղանակավորում (մոդուս) - սուբյեկտիվ-հուզական բաղադրիչ՝ ըստ էության հակադրելով փաստացի բովանդակությունը և ներկայացված փաստերի անհատական գնահատականը: Շ. Բալլին եղանակավորումը համարում էր «նախադասության ոգին», նրա «հիմնական բաղադրիչը», առանց որի պարզապես չի կարող գոյություն ունենալ նախադասությունը [4, էջ 44]: Բրիտանական անալիտիկ փիլիսոփայության մեջ հաղորդման և եղանակավորման հակադրությունն արտահայտվում է «նախադրանք» և «նախադրային դիրքորոշում» (пропозиция) տերմիններով:

Շ. Բալլիի հայեցակարգը օգտագործվել է Ա. Բոթիցկոյի, Չ. Ֆիլմորի եղանակավորման վերաբերյալ ձևակերպումներում [4, էջ 404]: Լեզվաբանության մեջ եղանակավորման ճանաչողական և գործաբանական (պրագմատիկ) տեսակետների տարբերակումը նպաստեց, ինչպես նաև անհրաժեշտություն առաջացրեց համադրել աշխարհի լեզուներում լեզվամտածողության կարգերի ընդհանրությունների և նրանց համապատասխանությունն ուսումնասիրելու անհրաժեշտությանը:

Եղանակավորման կարգը ավելի ընդարձակ ներկայացված է նաև Ա. Ա. Իվինի աշխատություններում. «Եղանակավորում կամ հաղորդակցության գնահատում, որը դրսևորվում է խոսքի արտահայտման մեջ, տարբեր տեսակետներից» [7, էջ 516]:

Եղանակավորման հստակեցումն իրականացվում են առավել հաճախ կիրառելով «անհրաժեշտ», «հնարավոր», «ապացուցելի», «հերքելի», «պարտադիր», «թույլատրելի», «լավ», «վատ» հասկացությունները [10, էջ 516]:

Ըստ Լ. Լ. Մեշչանինովի՝ եղանակավորումը պատկանում է այն հասկացական կարգերին, որոնք քննության են առնվում հենց լեզվում, նրա բառապաշարում, ձևաբանության և շարահյուսության մեջ, որն արտահայտում է մտածողությունը (գիտակցական) և ձևավորում որոշակի համակարգ: «Գիտակցության մեջ եղած ցանկացած հասկացություն կարող է փոխանցվել լեզվական միջոցների օգնությամբ: Այն իր արտահայտումն է գտնում նկարագրորեն, բառի առանձին իմաստաբանությամբ կամ փոխանցվում լեզվական միջոցների օգնությամբ՝ ձևավորելով որոշակի համակարգ» [12, էջ. 15]: .

Հայ լեզվաբան Վ. Գ. Համբարձումյանի մեկնաբանության համաձայն՝ եղանակավորումը՝ իբրև առարկայական (օբյեկտիվ) իրականության լեզվական արտահայտության քերականական միջոց, լինում է երկու կարգի՝ *սահմանումային* (ուղիղ), այսինքն՝ այնպիսին, ինչպիսին որ իրականությունն է, և որի վերաբերյալ խոսողն արտահայտում է համարժեք հայեցողություն, և ոչ *սահմանումային* (անուղղակի), այսինքն՝ այնպիսին, ինչպիսին որ պիտի լինի իրականությունը, որի նկատմամբ խոսողն արտահայտում է անհամարժեք («յուրովի») հայեցողություն [9, էջ 240-241]:

Հասկացական կարգերը հնարավորություն են տալիս հետազոտելու լեզվի և մտածողության միջև ներքին կառուցվածքային փոխկապակցվածությունը, ընդգծելու շարահյուսության և իմաստաբանության միջև լեզվի սահմանային տիրույթը, բացահայտելու և նկարագրելու լեզվում գոյություն ունեցող հատվածները, ինչպես նաև լեզվամտածողության և հասկացական համակարգի փոխառնչակցությունը:

Այդ կարգերը արտահայտվում են տարբեր լեզվական միջոցներով: Դրանք ստանում են քերականական ձևավորում և փոխանցվում են բառերի միջոցով, սակայն արտահայտության պլանում տարբերությունը

չպետք է հանգեցնի իմաստի փոփոխության: Ն. Բ. Մեչկովսայայի հեղինակած «Լեզվաբանական հանրագիտարանային բառարանում» այն բնութագրվում է հետևյալ կերպ. «Լեզվաբանության մեջ հասկացական կարգերը ընդհանուր բնույթի իմաստային բաղադրիչներ են: Դրանք բնութագրում են ոչ թե առանձին բառեր կամ կառուցվածքային համակարգեր, այլ բառերի՝ բազմաբովանդակ, խոր իմաստային կարգեր, որոնք լեզվում արտահայտվում են տարբեր միջոցների օգնությամբ» [6, էջ 385]:

Եղանակավորման կարգի բարդությունն ու բազմակողմանիությունը բացատրվում է նաև հասկացությունների և տրամաբանական տարբեր կառուցվածքների առկայությամբ: Այդ իսկ պատճառով էլ XX դ. կեսերին լեզվաբանության ուսումնասիրության պատմության մեջ լեզվաբանների ուսումնասիրություններում անդրադարձ կատարվեց լեզվական այնպիսի կարգերին, որոնք դուրս են պարզ քերականական կարգերի սահմաններից և կապեր են ստեղծում լեզվական տարբեր մակարդակներին պատկանող երևույթների միջև: Ըստ էության վերանայվեցին հիմնական քերականական և շարահյուսական կարգերի առանձնացման սկզբունքները:

XX դ. 50-ական թթ. սկզբին ռուս լեզվաբան Վ. Վ. Վինոգրադովն իր մի շարք աշխատություններում առանձնացրեց լեզվական չորս երևույթների դասակարգման բազմաշերտ գործառութային ընդհանրությունը, որն առանձնանում էր իր եղանակավորող նշանակությամբ. 1. եղանակի քերականական կարգ, 2. սպասարկու բառերի բառապաշարային համակարգը՝ նախադասության անդամներից բացառվող, դրանք առանձնանում են իրենց եղանակավորող նշանակությամբ, 3. իրադրային բառերի կարգ, որոնք արտահայտում են գործողության հնարավորություն և անհրաժեշտություն կամ գործողության կամ օբյեկտի նկատմամբ հուզական վերաբերմունք, 4. եղանակավորող բառեր (օրինակ՝ *իբր, թե, դեհ, հո, գեթ* և այլն):

Վերջիններս բավականին երկար ժամանակ որպես խոսքի մաս բացակայում էին քերականական հետազոտություններից:

Ըստ ռուս լեզվաբան Վ. Զ. Պանֆիլովի՝ եղանակավորման բազմաբնույթ դրսևորումները չեն կարող իրացվել բացառապես մեկ լեզվաբանական կարգի սահմաններում. «Խոսողի հաղորդակցական կողմնորոշումը արտահայտում է նրա հուզական վերաբերմունքը բովանդակու-

թյան վերաբերյալ և սուբյեկտիվ եղանակավորումը, թերևս կարող են նաև վերաբերել արտահայտության արդիականացնող բաղադրիչներին, սակայն դրանց լեզվական բնույթը և դրանց դերը նախադասության կառուցվածքի ձևավորման մեջ այնքան տարբեր են, որ հնարավոր չէ դրանք համատեղել մեկ քերականական կամ բառապաշարային քերականական կարգի մեջ» [10, էջ. 47–48]:

Դասակարգումներում նույնպես դժվար է գտնել որոշակի միանշանակություն: Մինևույն կարգի գնահատողական դասակարգման դեպքում էլ շատ լեզվաբանների կարծիքները չեն համընկնում: Որոշ լեզվաբաններ դրա մեջ տեսնում են եղանակավորման իմաստաբանական հիմքը, քանի որ բովանդակության փոխկապակցումը իրականության հետ անխուսափելիորեն առնչվում է գնահատմանը: Մ.Վ. Լյապոնի պնդմամբ՝ «Եղանակավորման կարգի սուբյեկտիվ գնահատումն արդեն հիմք է ենթադրելու, որ փոխանցվող տեղեկատվության մեջ կա սուբյեկտի վերաբերմունքը» [11, էջ. 232]:

Ըստ Բ. Ա. Պլոտնիկովի՝ *հաստատման* կամ *ժխտման* երևույթները եղանակավորման տեսակետից ունեն հատման կետ իրականության / անիրականության հակադրամիասնության միջև, սակայն այդ դրսևորումը «եղանակավորման տիրություն միանշանակորեն ընդունելի չի կարելի համարել, քանի որ այն պատմողի դիրքորոշման համեմատության տեսակետից գտնվում է ուրիշ հարթության վրա, որը ստեղծում է իմաստային միջուկ/կորիզ/ դիտարկվող լեզվական կարգում: Եղանակավորման իմաստի բազմաբնույթ հատկանիշների դասակարգման բարդությունն այն է, որ դրանք շատ հաճախ հատվում են: Երբեմն մինևույն իմաստը նույն աշխատանքում դիտարկվում է տարբեր կարգերում:

Անգլիագիտության մեջ այս կարգի վերաբերյալ ուսումնասիրությունները նույնպես բազմաթիվ և հակասական են: Տարբեր լեզվաբանների ըմբռնումներում և հարացույցներում եղանակավորման կարգը տատանվում է երկուսից յոթ: Պ. Պորտներն իր «Եղանակավորում» (Modality, 2009) գրքում առանձնացնում է՝ ա) *էպիստեմիկ* (epistemic) և *ոչ էպիստեմիկ* եղանակավորման հակադրությունը, բ) երեք կարգերի հակադրում. հիմնավորման, *համոզմունքի* (deontic) և *հարաշարժության* (dynamic) եղանակավորում [14, էջ. 136]: Նա միաժամանակ գտնում է, որ եղանակավորման կարգը կարելի է ներկայացնել հետևյալ դասերով՝ *իմացաբանական* և *դեոնտիկ* եղանակավորում, *ցանկության*, *հեռաբանական*, *կա-*

մային (volitional) և քվանտիֆիկացիոն (quantificational) եղանակավորում (վերջին երկու դասերն արտահայտում են հավանականություն) [14, էջ 137]:

Գերմանացի լեզվաբաններ Վ. Աբրահամը և Ե. Լայսը առանձնացնում են բարդ եղանակավորման մոդելներ (complex patterns of modality), որոնք դեռևս ուսումնասիրված չեն իրենց բարդության կարողությանը համապատասխան և չբացահայտված եղանակավորում (covert modality), որին միանշանակ վերաբերում է եղանակավորման կարգը (մոդալ բայեր, միջանկյալ բառեր և դարձվածքներ) [1, էջ. 1–2]:

ԱՄՆ լեզվաբան Կ. Ֆոն Ֆինթելը խոսում է եղանակավորման հետևյալ կարգերի մասին՝ ալետիկ (aletic), իմացաբանական, դեոնտիկ, ցանկության (օպտատիվ (bouletic modality)), ինչպես նաև դինամիկ, հեռաբանական եղանակավորումների մասին [8, էջ. 21]: Նկատենք նաև, որ Վ. Հովարդի առաջարկած դասակարգման մեջ եղանակավորումը տերմինաբանորեն տարբերվում է վերը նկարագրվածներից, սակայն բովանդակային առումով դուրս չէ դրանց շրջանակից. իմացաբանական (epistemic), զուտ դեոնտիկ (true deontic) եղանակավորում, ոչ եղանակավորման երկու համակարգային (էպիստեմիկ) եղանակավորում, հնարավորության եղանակավորում (ability) և նպատակաուղղված (goal oriented) կամ տելեոլոգիական (կամ նպատակային) եղանակավորում [7]:

Քիչ չեն այն լեզվաբանները, որոնք իրենց հետազոտություններում անդրադառնում են եղանակավորման հասկացական կարգին: Այսպես, Ա. Վ. Բոնդարկոյի լեզվի հասկացական կարգի համատիպը «գործառության կարգերն» են: Եղանակավորման յուրաքանչյուր կարգ կարող է ներկայացվել որպես գործառության իմաստաբանական դաշտ (իմաստաբանական կամ իմաստագործաբանական բովանդակություն, որը դիտարկվում է տվյալ լեզվում դրա ձևական արտահայտության միջոցների օգնությամբ): Նա առանձնացնում է հնարավորության, անհրաժեշտության, հուսալիության, ըղձականի և հրամայականի եզրույթները: Ըստ այդ դասակարգման՝ եղանակավորումը կարելի է սահմանել որպես գործառության-իմաստաբանական դաշտերի ամբողջություն՝ ուղղորդող բովանդակությամբ [10, էջ 62]:

Ըստ Ն. Բ. Մեչկովսկայայի՝ հաղորդակցության և լեզվի իմաստավորման պատմության ընթացքում հատկապես կարևոր են խոսքի բազ-

մագանությունը և տարափոխումը /варьирования/, ինչպես նաև հաղորդակցության միջոցները, սովորույթները և ոճը [13, էջ 71]:

Այդ իսկ պատճառով մինչ լեզվական և քերականական միջոցներն ուսումնասիրելը ավելի հետաքրքրական է նախ անդրադառնալ խոսքահեն հաղորդակցությանը: Եղանակավորման խնդիրը ներկայացված է այնպիսի գիտնականների աշխատություններում, ինչպիսիք են Ա. Մ. Պեշկովսկին (1928), Վ. Վ. Վինոգրադովը (1975), Վ. Զ. Պանֆիլովը (1977), Ֆ. Ռ. Պալմերը (Palmer, 1979), Կ. Այմերը (1980), Ե. Վ. Պադուշևան (1985), Ա. Վեժբիցկայան (1992) և ուրիշներ:

Այսպիսով՝ մեր ուշադրության առարկա թեմայի վերաբերյալ եղած աշխատանքների սեղմ ուսումնասիրությունը հաստատում է այն փաստը, որ գոյություն ունեցող լեզուներում եղանակավորման կարգի առաջացման վերաբերյալ կան մի շարք կարծիքներ, որոնց մեջ, ինչ-որ իմաստով, հստակեցված է եղանակավորման սահմանումը. այն տրամաբանությունից հայտնվել է լեզվաբանական հետազոտությունների տիրույթում: Նման հանգամանքը պայմանավորված է բայական համակարգի առանձնահատկությունների ուսումնասիրությամբ, ինչպես՝ օրինակ խոնարհումը տարբեր լեզուների համակարգերում, նրանցում եղանակավորման միջոցները, բառապաշարի, քերականական, տարբեր մակարդակների լեզվական միջոցների օգնությամբ:

Գրականության ցանկ

1. Abraham W., Leiss E. Introduction. In: Abraham W., Leiss E. Covert Patterns of Modality. Cambridge: Cambridge Scholars Publishing; 2012. p. 1–24.
2. Aristotle. Analitiki pervaya i vtoraya [Analitiki the first and the second]. Leningrad: Gospolitizdat; 1952. 439 p, 372. Russian.
3. Apresyan Y.D. [Basic mental predicates of the state in Russian language]. In: Levkievskaya EE, editor. Slavyanskije etyudy. Sbornik k yubileyu S. M. Tolstoi [Slavic etudes: collection for the jubilee of S. M. Tolstaya]. Moscow: INDRIC; 1999. p. 44–53. Russian.
4. Bally Sh. General linguistics and questions of the French language]. 2nd edition, stereotyped. Moscow: Editorial URSS; 2001. 416 p. Russian. English]. 2nd edition, supplemented. Moscow: URSS; 2009. 155 p. Co-published by «Librocom». Russian.
5. Bondarko A.V. [Modality. Introductory remarks. The main types of modal meanings distinguished in the linguistic literature]. In: Bondarko AV, editor. Teoriya funktsional'noi grammatiki. Temporal'nost'. Modal'nost' [Theory of

functional grammar. Temporality. Modality]. Leningrad: Nauka; 1990. p. 59–72. Russian.

6. Bulygina T.V., Krylov SA. [Conceptual categories]. In: Yartseva VN, editor. *Lingvisticheskii entsiklopedicheskii slovar'* [Linguistic encyclopedic dictionary]. 2nd edition, supplemented. Moscow: Bol'shaya rossiiskaya entsiklopediya; 2002. p. 385–386. Russian.

7. Deutschbein 1928 - Deutschbein M. *System der neuenglischen Syntax*. Leipzig: Quelle & Meyer; 1928. 328 S. German.

8. Fintel von K. *Modality and Language*. In: Borchers MD, editor. *Encyclopedia of Philosophy*. 2nd edition. New York: Thomson Gale; 2006. p. 20–27.

9. Hambardzumyan V.G. *Principles of Linguistics*, by «Asoxik», Yerevan 2019, 366 p.

10. Ivin A.A., editor. *Filosofiya: Entsiklopedicheskii slovar'* [Philosophy: encyclopedic dictionary]. Moscow: Gardariki; 2004. 1072 p. Russian. Ivin AA. *Logika* [Logic]. Moscow: Fair Press; 2000. 320 p. Russian.

11. Kostyuk VN. [Epistemic logic]. In: Styopin V.S., editor. [New philosophical encyclopedia. Volume 4]. Moscow: Mysl'; 2010. p. 450–451.

12. Meshchaninov II. [Conceptual categories in language]. [Works of the Military Institute of Foreign Languages]. 1945, 1–15. Russian.

13. Mechkovskaya N.B. [Philosophy of language and communication]. Moscow: Flinta; 2017. 520 p. Co-published by the «Nauka». Russian. Mechkovskaya NB. [Modality in Slovenian language]. In: Jachnow H, Mečkovskaya N, Norman B, Suprun A. *Modalität und Modus: Allgemeine Fragen und Realisierung im Slavischen* [Modality and mood: general questions and realization in Slavic languages]. Wiesbaden: Harrassowitz Verlag; 1994. p. 194 – 219. Russian.

14. Portner P. *Modality*. Oxford: Oxford University Press; 2009. 288 p.

**ՌԵՏՈՒՆԻՔԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ
(ԸՍՏ ՌԵՏՈՒՆՑԻՆԵՐԻ ՊԱՏՄԱԾ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ՀԵՔԻԱԹՆԵՐԻ)
ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,
առաջատար գիտաշխատող, Բ. Գ. Դ.
mesropyanhaykanush@gmail.com

DOI: 10.57236/1829-0183-2025.1(32)-17

Համառոտագիր

Պատմական Ռշտունիքը Մեծ Հայքի Վասպուրական նահանգի գավառներից է, որ ներկայացնում է բարբառային հայերենի մի ուրույն վիճակ իր հնչյունաբանությամբ և քերականական կառուցվածքով: Ըստ Գ. Բ. Ջահուկյանի դասակարգման՝ Վասպուրականի տարածքը պատկանում է բարբառների արևմտյան խմբակցությանը, Վանի բարբառ ընդհանուր անունն ունեցող ենթախմբի մեջ՝ Մոկսի, Շատախի, Բաստի, Ոզմի, Վան քաղաքի և Դիադինի ենթաբարբառներով, իսկ Ռշտունիքի տարածքն առանձին բնութագրված չէ:

Հայ ժողովրդական հեքիաթների XX հատորը պարունակում է Ռշտունիքի գավառի հայերեն բանավոր խոսքի տարբեր դրսևորումներ՝ գրի առնված այդ տարածքի գյուղերի նախկին բնակիչներից: Ժողովածուի մեջ տեղ գտած հեքիաթներն ունեն թե՛ ընդհանուր հայերենին վերաբերող բառաշերտ, թե՛ միայն բարբառին հատուկ հնչարտաբերությամբ բառերի որոշակի քանակ, քերականական ձևեր, դարձվածային, նկարագրական կառույցներ, որոնց էլ անդրադառնում ենք մեր այս աշխատանքում:

Բանալի բառեր և արտահայտություններ. Ռշտունիք, բարբառ, բարբառային հայերեն, ժողովրդական լեզու, լեզվամտածողություն, հեքիաթ, հնչյունաբանություն, բառաշերտ:

¹ Տերմինի ամենավաղ գործածությունը տե՛ս Հ. Մեսրոպյան, *Սուրբ բառի գործածության առանձնահատկությունները հայերենի տարբեր դրսևորումներում.* - «Հայոց սրբերը և սրբավայրերը», 2001, էջ 119:

**ON THE GENERAL CHARACTER OF DIALECTAL SPEECH OF
RSHTUNIK
(ACCORDING TO MATERIALS OF FOLK-TALE OF RSHTUNIK)
HAYKANUSH MESROPYAN**

Leading Researcher at the H. Acharyan Institute of Language of the
National Academy of Sciences of the Republic of Armenia,
Doctor of Philology, Associate Professor, Yerevan, RA

Abstract

The Rshtunik region of the Vaspurakan province of Greater Armenia was known under the names Tosp-Rshtunik, Aristonk, Manakert, Vostan, Gavash, Karchkan, and was located on the southern shore of Lake Van. By combining the relevant dialectological literature, manuscript materials from the Institute of Language of the National Academy of Sciences of the Republic of Armenia, data from the 20th volume of "Armenian Folk Tales", compiled by the Department of Folklore Textology of the Institute of Archaeology and Ethnography of the National Academy of Sciences of the Republic of Armenia, as well as oral testimonies from Armenian settlers from Rshtunik, it became possible to determine the linguistic boundaries of Rshtunik and the linguistic characteristics of its former inhabitants.

The Armenians of Rshtunik were called Vršhiks; their language was quite complex and rich in dissonant consonants.

According to linguistic data, the Van and Moks dialects were spoken in the Rshtunik area. These dialects included a number of features of the Van dialect and exhibited partial interdialectal differences. The 20th volume of "Armenian Folk Tales" includes the oral tradition of the Rshtunik province. This collection is not only a repository of dialectal and ethnographic material, but also contains unique linguistic and cognitive features inherited from Urartian times.

The Rshtunik dialect, although based on a number of linguistic and grammatical features typical for the region, also has a number of unique manifestations. Judging by the texts of the fairy tales, the Rshtunik dialects have a two-row consonant system (the vowels of Grabar are muted), diphthongs, palatal or palatal vowels, three types of the sound "a": simple, labial, and palatal, etc.

The dialect generally retains the grammatical features of Grabar, although there are also a number of interesting nominal, pronominal, and verb formations. At the syntactic level, the accusative case is expressed with the preposition "z."

Thus, the linguistic facts recorded in the tales of the Rshtunik people show that the dialectal speech of the Armenians of Rshtunik is characterized by a phonetic system that differs from the literary language, a rich and figurative vocabulary, grammatical variants, remarkable word-formation patterns, and stylistic features. The linguocultural values provided by the dialect speakers will help to overcome the linguistic difficulties associated with understanding the dialectal speech in the tales of the Armenians of Rshtunik.

Keywords and phrases: Rshtunik, dialect, people, linguistic thinking, folk speech, vocabulary, phonetics.

ОБЩАЯ ХАРАКТЕРИСТИКА ДИАЛЕКТНОЙ РЕЧИ РШТУНИКА (ПО МАТЕРИАЛАМ НАРОДНЫХ СКАЗОК РШТУНЦЕВ)

АЙКАНУШ МЕСРОПЯН

Ведущий научный сотрудник Института языка
имени Р. Ачаряна НАН РА, д. ф. н.

Аннотация

Область Рштуник провинции Васпуракан Великой Армении была известна под названиями Тосп-Рштуник, Аристонк, Манакерт, Востан, Гаваш, Карчкан и располагалась на южном берегу озера Ван.

Объединив соответствующую диалектологическую литературу, рукописные материалы Института языка НАН РА, данные XX тома «Армянских народных сказок», составленного отделом фольклорной текстологии Института археологии и этнографии НАН РА, а также устные свидетельства армянских переселенцев из Рштуника, стало возможным определить языковые границы Рштуника и особенности речи прежних жителей региона.

Армян Рштуника называли вршиками: их язык был довольно сложным и богатым диссонансными согласными.

Согласно лингвистическим данным, на территории Рштуника употреблялись ванский и мокский диалекты, включавшие в себя ряд черт ванского диалекта и имевшие частичные междиалектные различия. XX том «Армянских народных сказок» охватывает устную традицию Рштуника. Этот сборник является не только хранилищем диалектного и этнографического материала, но и содержит уникальные языковые и когнитивные особенности, унаследованные с урартских времен.

Язык рштунцев, хотя и базируется на ряде типичных для региона грамматических и языковых особенностей, имеет и ряд уникальных проявлений. Судя по текстам сказок, рштуникские говоры имеют двухрядную систему согласных (гласные грабара приглушены), дифтонги, нёбные или палатальные гласные, три типа звука «а»: простой, губной и нёбный.

Говор в основном сохраняет грамматические особенности грабара, хотя существует также ряд интересных именных, местоименных и глагольных образований. На синтаксическом уровне винительный падеж выражается с предлогом «з».

Таким образом, лингвистические данные, зафиксированные в сказках рштунцев, показывают, что диалектная речь армян Рштуника характеризуется фонетической системой, отличной от литературного языка, богатой и образной лексикой, грамматическими вариантами, примечательными словообразовательными реалиями и стилями. Лингвокультурные ценности, предоставленные носителями диалекта, помогут преодолеть языковые трудности диалектной речи сказок армян Рштуника.

Ключевые слова и словосочетания: Рштуник, диалект, диалектная речь, народный говор, языковое мышление, сказка, фонетика, лексика.

Ռշտունիքի սահմանների ուրվագծումը լեզվական փաստերի հիման վրա

Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Ռշտունիք գավառը, որը բնիկներն անվանում էին *Ըռըշտունիք // Ըռշտունիք // Ըռուշտունիք // Ռըշտունիք // Ռուշտունիք // Վուշիկ*, հայտնի էր *Տոսպ-Ռշտունիք, Ռշտունյաց երկիր* բաղադրյալ տեղանուններով, նաև *Ոստան, Արիստունք, Մանակերտ // Մանակերտո* հատկանուններով, տեղակայված էր Վանա լճի հարավային առափում։ Հետագա դարերին այն ժառանգվում է որպես *Գավաշ, Կարճկան, Ոստան* գավառակներ։

Տեղանունների այս շարքում ուշագրավ է Մանակերտ տարբերակը, որը ոչ միայն կոնկրետացնում է Ռշտունիքի տեղակայումը, այլև հետաքրքիր պատմական փաստեր է պարունակում գավառի մասին։ Ի շարս մի շարք իրակությունների՝ «Ենթադրվում է, որ Մանակերտը կառուցել է ուրարտական Մենուա թագավորը և կոչել իր անունով» [6, էջ 680-681]։

Գ. Բ. Զահուկյանը բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգմամբ Վասպուրականի տարածքի հայության հաղորդակցության միջոցը զետեղում է բարբառների արևմտյան խմբակցության կը ճյուղի Վանի կամ հարավային միջբարբառախմբի մեջ՝ մտնող Վանի բարբառ ընդհանուր անունն ունեցող ենթախմբի մեջ՝ Մոկսի, Շատախի, Բաստի, Ոզմի, Վան քաղաքի և Դիադինի Վարդենիս բնակավայրի ենթաբարբառներով [13, էջ 134-135]։ Ռշտունիքի տարածքն առանձին բնութագրված չէ, քանի որ պատմականորեն այն կազմում էր Վասպուրական աշխարհի մի մասը և հաղորդակցվում էր նշված բարբառախմբի խոսվածքներով։

Համադրելով բարբառագիտական գրականության, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի՝ «Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով» գրանցված ձեռագիր նյութերի, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության և տեքստաբանության բաժնի կազմած «Հայ ժողովրդական հեքիաթների» XX հատորում ընդգրկված բանահյուսական տեքստերի տվյալները, ինչպես նաև ոշտունցի հայ գաղթականների հաղորդած փաստերը՝ հնարավոր դարձավ տարրորոշել Ռշտունիքի մոտավոր սահմանները և այդ լեռնաշխարհի բնիկների լեզվական առանձնահատկությունները։

Ըստ Արևելյան Հայաստան ներգաղթած և հիմնականում Արարատյան դաշտի բնակավայրերում (Վեդի, Էջմիածին, Մասիսի Գեղա-

նիստ, Արալեզ, Գոռավան, Դաշտաքար, նաև Գեղարքունիքի Տրետուք և այլն) հաստատված բարբառակիրների² վկայության՝ ոչտունցիներ ապրում էին նաև Վերին Հայոց ձորի Հօրմօրուր, մոտակա Կղզի, Հանգըտանց, Խառնուրթներ, Աշպաշեն, Արատենց, Նոր Կեղ, Հընդըստան, Խէք, Իփսչըրանց, Պանտականց, Նարեկ, Տըշոխ, Հաթանան, Մարկըս, Պըլթենց, Քիշկ, Խուտկիւմ, Գավաշի Հանրաբեր // Հանրաբերտ, Փըշավանց³, Պօղօնիս, Պանվանց, Փաններ (<Փանգըխներ՝ ըստ XIX դ. վերջին Հանրաբերտում ծնված բարբառակիր Նուբար Հարությունյանի), Հիրիչ, Քանրատանց, Խոշաք գավառի⁴ Քոեր և այլն: Նշված բնակավայրերին մոտիկ էին Վըռկոնիա, Իշկերտ, Վանդանց քղաքնակ գյուղերը: Հուրթուկ, Դասեր, Լեյնիս, Փութ գյուղերը միմյանցից բավականին հեռու էին: Այդ գյուղերից մինչև Վան մոտ երկու օրվա ոտքի ճանապարհ էր: Հանրաբերտից Վան մեկ օրում ոտքով գնում, գալիս էին («*Վօրնօվ կերթէն, կըրտ՝ անէն*»):

Ռշտունիքի իշխանանիստ նստավայրը Ոստանն էր, որ հայտնի է նաև *Ոստանա կապան* անունով՝ տեղակայված Նարեկ գյուղի մոտ: Ոստանից այն կողմ Վանա տարածքն էր՝ Խորկիւմ, Իշխանիկիւմ, Խանրանց գյուղերով: Փըշավանցը Աղթամարին ամենամոտ գյուղն էր⁵: Գավաշի շրջկենտրոն Ոստանը, որը դարերի ընթացքում եղել է հայաբնակ, XIX դարավերջին, ըստ բարբառախոս բանասացի, բնակեցված էր թուրքերով ու քրդերով:

Ռշտունիքում բնակվող հայերին անվանում էին վըռըշիկներ: Այդ մասին վկայում է նաև Վանի բարբառի բառարանի հեղինակ վանեցի բարբառակիր Հ. Թուրշյանը: Նա գրում է, որ ոչտունցիներն ապրում էին

² Տե՛ս ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի՝ «Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով» գրանցված №№ 188 [Ոստանի Քանրատանց], 257 [Արտամերտ], 290 [Գավաշի Հանրաբերտ և Փըշավանց], 297 [Խոշաքի Քոեր] ձեռագիր նյութերը:

³ Ըստ բարբառախոս Նուբար Հարությունյանի՝ Հանրաբերտ և Փըշավանց գյուղերի խոսվածքները որոշ տարբերություններ ունեին:

⁴ Պատմական Անձևացյաց գավառ:

⁵ Տե՛ս ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի ձեռագիր տետր № 290, Գավաշի Հանրաբերտ, 1985 թ. գրանցեց Ա. Խաչատրյանը: Նաև՝ տետր №188, Ոստանի Քանրատանց, բարբառակիր Աղավնի Մանուկյան՝ ծնված 1903 թ. Քարադաշտում, լրացնող՝ Ժ. Միքայելյան:

Վանի հարավում՝ Մոկաց աշխարհը ներառյալ: Բառարանագիրը *Վրդրշիկ* բառը համարում է բազմիմաստ և վկայաբերում է նաև հետևյալ իմաստները՝ 1) «Ռշտունցու պատրաստած շատ ամուր կոշիկ, որ հյուսվում էր մազե թելից, առանց կաշվի և մեխի», 2) «առհասարակ գյուղացի» [5, էջ 207]: Հավանաբար *Վրդրշիկ* բառի երկրորդ իմաստը նկատի ունի Ռ. Տեր-Մինասյանը, երբ գրում է. «Ասոնք (իմա՝ երկրորդ խմբի տղաները՝ Չաթոն ու Շերոն, Դարմոն ու Փոխիկը, Աստոն ու Ախպերը եւ ուրիշ շատեր) գլխատրաբար Տաւրոսի վոշիկներն էին, անգրագէտ, յամառ, խոհուն եւ կը խօսէին լեզու մը, որուն խոխոռոցի մէջէն հագիւ կը նշմարէիր, թէ հայերէն էր» [14, էջ 23]: Պոլսի «Աւետաբեր» շաբաթաթերթը «առհասարակ գյուղացի» բացատրությանն ավելացնում է ծաղրական նրբիմաստ. «Ինչպէս Թիֆլիսու հայն Մշոյ հայուն «կոօ» կը կոչէ, նոյնպէս Պլանդգի եւ Խնուսի հայն գաւառացի հայուն «վոշիկ» կը կոչէ» [3, էջ 333] :

Ռշտունիքի լեզվական հաղորդակցության հիմնական միջոցի մասին

Վասպուրականի տարածքի հաղորդակցության հիմնական միջոցը Վանի բարբառն էր, որի հնչյունական, քերականական և լեզվական այլ հատկանիշների հետ ընդհանրություններ ունի նաև Ռշտունիքի տարածքում կիրառված հայերենը, որը, ինչպես բնորոշում է Ռ. Տեր-Մինասյանը, հնչում էր խոխոռոցի նման: Ըստ այսմ՝ կարելի է ենթադրել, որ բավականին խրթին և տարահունչ բաղաձայններով հարուստ լեզուն էր: Վանի «քաղաքամերձ գյուղերի, ինչպես նաև Հայոց Ձորի, Արճակի և Թիմարի գավառների հայերը խոսում էին Վանի բարբառով: Այդ բարբառի խոսվածքներով էին խոսում նաև Բերկրու, Արճեշի և Աջավազի հայերը: Վանի վիլայեթի հարավում՝ Ոստանի, Կարկառի, Գյավաշի, Կարճկանի, Շատախի, Մոկսի ու Ոզմի հայերը խոսում էին Մոկաց բարբառով» [5, էջ XVI]: Ըստ այսմ կարող ենք ասել, որ բարբառագիտական արդի գրականության մեջ հայոց լեզվի առանձին բարբառ համարվող Շատախի, Ոզմի տարածքային տարբերակները նախկինում ընկալվել են որպես Մոկսի բարբառի խոսվածքներ:

Վասպուրականի տարածքի հայությունը արևմուտքից լեզվական շփման մեջ էր Մշո բարբառի և Բաղեշի խոսվածքի, արևելքից՝ Ուրմիայի, Խոյի և Սալմաստի բարբառների հետ: Հարավում բնակվում էին քրդա-

խոս և արաբախոս հայեր, որոնք լեզվական փոխազդեցության մեջ էին բարբառախոս հայերի հետ: Այս շփումները և փոխազդեցությունները պատճառ են դառնում լեզվական և բառապաշարային որոշ տարբերությունների: Քաղաքաբնակների բառապաշարը տարբերվում էր գյուղաբնակների բառապաշարից. վերջիններս մայրենի բարբառն ավելի անաղարտ էին պահում և հիմնականում խուսափում էին օտար բառեր գործածելուց:

Հ. Թուրջյանը այս տարածքի հայերենի մասին վերհիշում է. «Հայերենը համեմատաբար անաղարտ էին պահում կանայք: Նրանք տանից հազվադեպ էին դուրս գալիս, չէին շփվում արտաքին աշխարհի հետ, շուկայի երես չէին տեսնում: Ինձ ծանոթ էին օր ծերության հասած պառավ կանայք, որոնք իրենց կյանքում թուրք չէին տեսել, սակայն դուրս ու ներս անող ամուսինների խոսքի ազդեցությամբ թուրքերեն բառեր էին գործածում: Նույն հարկի տակ ապրող տղամարդկանց բառարանում թուրքերեն բառերի քանակը հասնում էր երբեմն 40 տոկոսի, իսկ կանանց բառապաշարում՝ հազիվ 10 տոկոսի» [5, էջ XVII]:

Բերված փաստերից ելնելով՝ կարելի է ասել, որ Ռշտունիքի տարածքում գործածական են եղել Վանի և Մոկսի բարբառների խոսվածքները, ներառել են Վանի բարբառի մի շարք հատկանիշներ՝ դրսևորելով միջխոսվածքային մասնակի տարբերություններ [հմմտ. 2, 11, էջ 20-35, 12, էջ 108-183]:

Ա. Ղարիբյանը, անդրադառնալով բարբառային տեքստերի գրառման դժվարություններին, Մոկս-Վան լեզվական փոխհարաբերության մասին գրում է. «Բարբառագրության անհաջող կիրառման պատճառով է, որ հաճախ մի որևէ բարբառ դարձնում են մեկ ուրիշ բարբառի ենթաբարբառ կամ, նույնիսկ, խոսվածք: Հենց դրա պատճառով էլ Մոկսի խոսվածքը համարում են Վանի բարբառի ենթաբարբառը» [9, էջ 83]: Տարբեր հեղինակների կողմից միևնույն լեզվաորակին տրվող բարբառ – ենթաբարբառ – խոսվածք բնորոշումները խոսում են Վասպուրական աշխարհի հայության լեզվական ընդհանրության և մասնակի տարբերությունների մասին:

Ռշտունիքի բարբառային հայերենը՝ ըստ «Հայ ժողովրդական հեքիաթների» (հ. XX) նյութերի

Հիշյալ հատորն ընդգրկում է Ռշտունիքի գավառի հայերեն բանա-

վոր խոսքի դրսևորումները՝ գրի առնված Նարեկ, Ախավանք, Հաղուն, Փախներ, Պատականց, Փշավանց, Բելու, Բողոնիս, Հարբերդ, Նորգեղ, Մոխրաբերդ գյուղերի նախկին բնակիչներից [8]:

Ժողովածուում ընդգրկված բոլոր հեքիաթները բարբառային հայերենով են: Յուրաքանչյուր բարբառ, հիմքում ունենալով բնիկ, ընդհանուրհայերենյան բառաշերտ, բառապաշարի գործուն և կենսունակ մասնաբաժին, ունի նաև միայն իրեն հատուկ հնչարտաբերությամբ բառերի որոշակի քանակ, քերականական ձևեր, դարձվածային, նկարագրական կառույցներ և լեզվական այլ միավորներ, որոնք այլ բարբառներով հաղորդակցվողների համար կարող են լեզվական փոխըմբռնման դժվարություններ ստեղծել:

Բարբառը հասկանալի կդառնա, եթե ծանոթ լինենք տվյալ խոսքի հնչյունաքերականական օրինաչափություններին: Երբ որևէ բարբառին կամ խոսվածքին բնորոշ ինչ-ինչ հնչյուններ տառերով արտահայտված չեն մեսրոպյան այբուբենում, դրանց հնչերանգն արտահայտելու համար գործածվում են մի շարք պայմանական նշաններ: Ձայնավորների և բաղաձայնների՝ գրական լեզվից տարբերվող ձևերով կազմվում են հնչյունական զուգաբանություններ, որոնք գրավոր խոսքում արտահայտվում են գիտական տառադարձումների միջոցով [1, էջ 6-11, 10, էջ 45-46, 4, էջ 70-79, 7, էջ 19-24]: Բարբառային գրավոր խոսքում գրական լեզվի ուղղագրական կանոնները չեն գործում, քանի որ բանահյուսական ստեղծագործությունները, այդ թվում՝ հեքիաթները, գրի են առնված բանասացների արտասանությանը համապատասխան:

Հնչյունական զուգաբանությունները

Ռշտունիքի խոսվածքներն ունեն երկշարք բաղաձայնական համակարգ (գրաբարի ձայնեղները խլանում են), միայն *գ*, *կ*, *ք* եռաշարքին հատուկ *գ՛*, *կ՛*, *ք՛* քմայիններ, *ü*, *ü*, *ü*, *ö* քմային ձայնավորներ, *է*^o, *ի*^o, *ը*^b երկբարբառներ:

Հայտնի է, որ գրաբարում *ւ* հնչյունագրով սկսվող բառ չկա: Այն, միանալով *ա*, *ե*, *ի*, *ո* ձայնավորներին, կազմում է *աւ*, *եւ*, *իւ*, *ու* երկբարբառներ, *ւո* եռաբարբառ՝ *վուո*՝ արտասանական սերտ համակցումով, և հանդես էր գալիս միայն բառամիջում կամ բառավերջում: Վասպուրականի տարածքի խոսվածքներում *ւ* հնչյունը, ի հայտ գալով բառա-

սկզբում, *ո*-ի հետ կազմում է *տ* եռաբարբառ. օր.[՝] *տ՞ն* «ո՞վ» (Արծկեի Կոճերեր), *տնձնի* «ոզնի» (Արճակի Լիմ), *տրթիկ* «հորթ» (Արճակի Լիմ), *տրթկարած* «հովիվ» (Արճեշի Բոլորմակ) և այլն:

Ռշտունյաց նախարարական տոհմին պատկանող Ոստանի Քարատնշտ գյուղում ևս գրանցված է այս իրողությունը. օր.[՝] *տջխար*, *տսկոռ*, *տրթի*, *տրթ* «որդ», *տտեր* «ոտքեր» և այլն: Չի բացառվում, որ հնդեվրոպական լեզուներից մեզ ծանոթ նախագրաբարյան այս հնչարտաբերությունն ունենա ուրարտական կամ հարակից այլ հնագույն լեզվական արմատներ: Ըստ այսմ կարող ենք ասել, որ հեքիաթների այս ժողովածուն ոչ միայն բարբառային և ազգաբանական նյութերի շտեմարան է, այլև պարունակում է լեզվամտածողական յուրօրինակ հատկանիշներ, որոնք ժառանգվել են ուրարտական ժամանակներից:

Այժմ դիտարկենք, թե ինչ հատկանիշներ էին ի ցույց դնում Ռշտունյաց գյուղերի խոսվածքները՝ ըստ ժողովածուում ամփոփված հեքիաթների և վերը նշված բնակավայրերին վերաբերող ձեռագիր նյութերի: Ռշտունցիների լեզուն, հիմքում ունենալով տարածքին բնորոշ լեզվաքերականական մի շարք հատկանիշներ, ունի նաև որոշ մասնավոր դրսևորումներ: Լեռնագոտու գյուղերի խոսվածքների հնչյունական համակարգն ուներ հետևյալ ընդհանուր պատկերը:

Ճայնավորական հատկանիշներ

Տարածքին ընդհանրապես բնորոշ է քմայնացումը՝ առաջնալեզվայնության տարբեր աստիճաններ ունեցող ձայնավորների առկայությունը:

Խոսվածքն ունի երեք տեսակի *ա՝* պարզ *ա*, շրթնային *ա՛*, քմային *աի*:

Քմային ձայնավորները թույլ են արտասանվում: Ընդհանրապես ձայնավորների քմայնացումը թույլ է արտահայտված, երբեմն այն կարող է և չլինել:

Խոսվածքն ունի պարզեցման հակված երկբարբառներ:

Ե երկբարբառը նույնպես շատ թույլ է հնչվում և հաճախ նույնանում է պարզ *է-ի* հետ:

Ո երկբարբառն ունի շատ բաց հնչում՝ ^ոը: Կան բառեր, որոնցում թույլ ո երկբարբառը, որը հաճախ համընկնում է պարզ *օ-ին*:

Ը որոշիչ հոդը գործածական չէ: Գաղտնավանկ ը-ն շատ դեպքերում լիարժեք չի հնչում, հատկապես հոդերին նախորդելիս: Խոսվածքին բնորոշ են բաղաձայնների կուտակումները, արագ, միանգամյա արտաբերությամբ:

Նշված ընդհանուր հատկանիշներից բացի, հիշատակելի են նաև հնչյունական իրողությունների հետևյալ մասնավոր ձևերը:

ա) Շեշտանախորդ վանկերի ձայնավորների թուլացում, սղում կամ փոխարկում ը-ի. օր.[՝] *ամաչկոյր > ամչըկոյր, աւելանալ > հււվըլնւնլ, երկայնանալ > հերկըննալ, թեթևանալ > թէթվընալ, ժողովել > ժօղվել, նեղանալ > նէղնալ, ողողել > օղըղել, վախենալ > վււխել* և այլն: [*Տեղ տաս էնոնց ծիերուն, տավրներուն էլ, չուր էրթան: Տոան ճակտին թուխթըմ գրես*]⁶:

բ) Եռավանկ բառերի ձայնավորների սղում կամ փոխարկում ը-ի միջնավանկում. օր.[՝] *աղաջուր > աղճուր, առաջնակ > հււռճըննկ, գողանալ > կ'ողնալ, թաթախել > թաթխել, ճախարակ > չախրակ, լոգանալ > լողկընալ* և այլն:

գ) Շեշտի տակ գտնվող ա-ի դիմաց *ււ* քմային. օր.[՝] *թաթ > թււթ, թամբ > թււմբ, թանկ > թււնգ, լաց > լււց, չափ > չււփ, վախ > վււխ* և այլն:

դ) Հին հայերենի *բ, գ, դ, ձ*-ից առաջացած խուլերից հետո գտնվող պարզ ա-ի դիմաց *ււ* քմային ձայնավոր՝ ըստ «Աճառյանի օրենքի». օր.[՝] *բահ > պււխ, բամբակ > պււմբււկ, բան > պււն, բանջար > պււնջււր, բառնալ > պււռնալ // պււրցել, բարակ > պււրււկ* և այլն: Պււրև կըտա, *պււրև* կ'առնի, խըտ իրարու մեկտեղ զրցելով կ'էրթան ք'աղքի մեջ:

ե) *Մ, ն* ռնգայիններից առաջ գտնվող ա-ի դիմաց որոշ բառերում ի հայտ է գալիս քմային *ււ* ձայնավոր. *ապրանք > ապրււնք, բարեկենդան > պարկենդււնք, զանգ > զււնգ, զոքանչ > զօքււնչ* և այլն:

զ) Շչական բաղաձայնների հարևանությամբ երբեմն ա պարզ ձայ-

⁶ Հեքիաթներից մեջբերված օրինակներում հանդիպում է գրաբարից պահպանված *գ* ձայնեղի քմայնացում:

նավորի դիմաց շեշտակիր դիրքում առկա է քմային *ü*. օր.՝ *ժանգ > ժանգ, ճանճ > ճանճ, շարժ > ժանժ, արժել > ձանժել, բաժին > պանժին, շարժել > ձարժել* և այլն:

է) Միավանկ բառերի բառասկզբի *n*-ի դիմաց *in* կամ *ün* // *ün* եռաբարբառ ունեն հետևյալ բառերը. *նչ > լիչ, ով > լով // լիվ, որբ > վորբ, որձ > լորց* և այլն:

ը) Երկվանկ բառերի բառասկզբի *n*-ի դիմաց *ün*, *in*, *ün*, *in* հնչյունակապակցություններ, երբեմն էլ պարզ *o* ունեն որոշ բառեր. *նշխար > վոխար, ոռնալ > վոռնալ, ոսկի > վուսկի, վուրթիկ «հորթ», որդնել > վուրդնել, որոճալ > օրոճալ* և այլն:

թ) Հին հայերենի *p*, *q*, *r*, *š*, *z*-ից առաջացած խուլերից հետո գտնվող *n*-ի դիմաց *ni*, *ö* քմայիններ՝ ըստ «Աճառյանի օրենքի», երբեմն նաև պարզ *o*. օր. *բողկ > պոլկ, գոգ > կոլ, գոմ > կոմ, գործ > կործ, դող > փող, ձոր > ձոր, ջոջ > ճոճ* և այլն, բայց *ջոկ > չոկ*:

ժ) Բառամիջի շեշտակիր *n*-ի դիմաց փափուկ *ni*, *ö*, նաև պարզ *o*. օր.՝ *թոք > թոք, լող > լող, ծոմ > ծոմ, կոթ > կոթ, մոմ > մոմ, նոր > նոր, չոր > չոր, խաղող > խաղող, փորոն > փորոն, գոռալ > բոռալ, գովել > կովել, գործել > կործել* և այլն:

Կորչել բայի *կորուսանել* գրաբարյան համարժեքը Ռշտունիքի տարածքում գործածվում է *n > ni* հնչյունափոխությամբ՝ ստանալով *կուրուսել* ձևը:

ժա) Հին հայերենի *p*, *q*, *r*, *š*, *z*-ից առաջացած խուլերից հետո գտնվող *n*-ի դիմաց *ni* քմային ձայնավոր՝ ըստ «Աճառյանի օրենքի». օր.՝ բուրդ > պուրթ, բուք > պուք, գութան > կութան, գունդ > կունդ, դու > տու, դուրս > տուս, ձու > ձու, ձուկ > ձուկ, ջուր > ձուր և այլն: *Դուռն* բառում տեղի է ունեցել *ni > ni* հնչյունափոխություն՝ տուռ: Հեքիաթներում *ni > n* հնչյունափոխության է ենթարկված *շուր* բառը: «Թող ես շոտ քնեմ»: «Թակավոր շոտ առավոտ կըվազի կըլնի, կ'էրթա մըտ բաղվանչին»:

ժբ) Շեշտակիր *n*-ն հիմնականում պահպանվում է: *Ni > ni* հնչյունափոխություն է նկատվում *թուք > թուք, քուն > քուն, ուրիշ > հուրիշ* բառերում:

ժգ) Ու + ձայնավոր կապակցությունների դիմաց առկա է ըվ + ձայնավոր. օր.՝ աղուէս >աղվէս, դժուար >դըժվււր, շուարիլ >շիվրել, տվել (<տուեալ) > տըվէր, տված (< տուած) >տըվուկ, տվեց (<տուեց) >էտու:

ժդ) Միավանկ բառերում բառասկզբի ե-ի դիմաց ունենք է պարզ ձայնավոր, յե եռաբարբառ, ինչպես նաև յէ հնչյունակապակցություն. եզն >յեզ, եռալ >յէռալ // յեռալ, ես >յես, երդ >հէրտուս, եփել > էփել, երբ >յէփ և այլն:

ժե) Երկվանկ բառերի բառասկզբի ե-ի դիմաց գրանցված են է, ի, ը պարզ ձայնավորներ, ինչպես նաև յե եռաբարբառ և յէ հնչյունակապակցություն. օր.՝ ելանել > ըլնել, եղնիկ > յէղնիկ, երակ > էրակ, երես >իրես, երեք > իրեք՝, երկաթ > էրկաթ, երկայն > հէրկէն, երկու >էրկու, եփել >էփել և այլն:

ժզ) Բառամիջի շեշտակիր ե-ի դիմաց առկա են է, ի ձայնավորներ և ե երկբարբառ. դել >դել, թել >թել, ձել >ձել, աւելի >հ'ավէլի, ծեծել > ծէծիկ, շերեփ >շիրեփի և այլն. ե երկբարբառը շատ թույլ է. հաճախ հընչվում է որպես պարզ է:

ժէ) Ը-ից առաջ գտնվող բառասկզբի ե-ի դիմաց կա հ'ի, հ'ե, ի, է. հ'իրիկուն, իրես, էրէվալ, իրեք՝, հ'էրէկ, էրէց, էրընջակ: Ինչպես մի շարք այլ տարածքներում, Ռշտունիքում ևս ղ ձայնեղից առաջ եղբայր բառի ե-ն դառնում է ա՝ ախպէր:

ժը) Մարգարէ բառի վերջին պարզ է-ն դառնում է ö քմային կամ պարզ ա՝ Մարկ'ö// Մարք'ար:

ժթ) Ռշտունիքում ևս հին հայերենի շեշտակիր և շեշտանախորդ այ երկբարբառը վերածվում է պարզ է-ի, երբեմն բառամիջում տեղի է ունենում յ ձայնորդի անկում. օր. այդ > էտ, այլ > էլ, այծ >էծ, այն > էն, գայլ > կ'էլ, լայն > լէն, ծայր > ծէր, մայր > մէր, տայգր > տէք'ըր, այրի > վոռպըվէրի, այրել > էրէցել, վայրի > վէրի // վէրու, փայծաղն >փացեխ քայլել > ք'էլալ և այլն: Պայծառ ածականը անձնանուն նշելիս չի հնչյունափոխվում, իսկ հասարակ անվան դեպքում այ երկբարբառը դառնում է ը՝ պըծառ «կայծ»:

ի) Հին հայերենի ոյ երկբարբառի դիմաց հիմնականում հանդիպում է ու, ու, ու, հազվադեպ՝ օ, ö ձայնավորներ. օր.՝ անոյշ >անուշ, բոյթ > պոթ, բոյն >պոն (հոգնակին՝ պոններ), գոյն >կոն, զոյգ

>չ־յտ, գրոյց > շափազըրոց, զըրոց(ել), թոյլ > թիլ, լոյս > լիս, կոյր > կիր, հանգոյց > խանգիցկ, ոյժ > ուժ, պոոյր > պըրոյր, սովորոյթ > սովորութկ, քոյր և քիր և այլն:

ի) Հին հայերենի իւ երկբարբառը դառնում է ու, ու, է, ի կամ ե. օր.՝ ալիւր > ալուր, աղբիւր > հ'անխալուր, արիւն > արուն, հարիւր > խարիր, դիւր > փուր, ձիւն > ծուն, սիւն > սուն, ալեւորութիւն > խալիվորութէն, աջորութիւն > աճողութէն, գողութիւն > կ'ողութէն, եղբայրութիւն > ախպէրութէն և այլն:

Բաղաձայնական առանձնահատկություններ

Բառավերջին ք-երը կանոնավորապես քմայնանում են. հիմնականում քմայնացման շատ թեթև երանգ ունեն: Կ'էրթա կանգալով, խարցումով, կ'էրթա Խոջա Լու քաղաք՝ կ'էլնի տիւս:

Եթե ք-ով վերջացող բառին ուրիշ բառ է հաջորդում, հաճախ ք-ն դառնում է կիսաձայն յ՝ ք > յ:

Առկա է հ-խ անցում: Օղորմի տվեք թուջար Հ'անկոփու խոգ'ուն: Էրա խավք կըգ'ան, մարթ կ'էլնի վըր խավքու քամկին, էն խավք կըպանցրանա վըր էրա քաղքին:

< հագագը, որ ընդհանուր առմամբ համապատասխանում է հին հայերենի յ-ին, տատանում է տալիս խլության և ձայնեղության միջև. ան-ից առաջ գրեթե միշտ ձայնեղ հ' է հնչում՝ հ'անոու, հ'անգընալ «ուշանալ»: Թակավոր-վնգիր կ'ուրախանան, կ'ասեն՝ հ'անգընցալ:

Բառավերջի գ, կ, ք հնչյունները, եթե գտնվում են այլ բառից առաջ, փոխարկվում են յ կիսաձայնի. օր.՝ փանայ կը սըրենք «դանակ ենք սրում»:

Ետնալեզվային պայթականների քմայնացումը բառասկզբի և բառավերջի դիրքերում շատ թույլ է արտահայտված, հազիվ ընկալելի: Դրանք լիարժեք չեն փոխառյալ բառերում և առաջնալեզվայնացած ձայնավորի նախորդելու դեպքում. օր.՝ գ'նգ, կ'արուն, գ'անգանգուկ:

Նշված ընդհանուր հատկանիշներից բացի, Գավաշի Հարպերթ // Հարպերտ, Ոստանի Քարատաշտ և հարակից մյուս գյուղերի խոսվածքներում արձանագրված են հետևյալ բաղաձայնական հատկանիշները:

ա) Բառասկզբի *բ, գ, դ, ծ*, ջ ձայնեղների դիմաց *պ, կ, տ, ծ, ճ* խուլ հնչյուններ. օր.՝ *բազուկ > պնզուկ*, *բակ > պակ* «ավերակ», *բարի > պնրի*, *բերան > պերան*, *բոլոր > պոլոր*, *դեղնուց > տեղնուց*, *դիզել > տեզել*, *դրացի > տըրկէց*, *ծի > ծի*, *ծոր > ծոր*, *ջորի > ճորի* և այլն, բայց *գդակ > քըթակ*:

բ) Միջձայնավորային և բառավերջի երջայնավորային դիրքերում գտնվող *բ, գ, դ, ծ, ջ* ձայնեղների դիմաց խուլ *պ, կ // ք, տ, ծ, ճ*: Հագնել > խանկնել, գոգ > կ'օք, թագ > թաք, մարագ > մարնք, օգուտ > օկուտ, խաբել > խապել և այլն:

գ) Ինչպես վերը նշեցինք, *հ*-ն դառում է *խ*. հազալ > խանգնլ, հայ > խայ, հայելի > խայլի, հայել > ըխել, հինգ > խինգ, պահել > պախել, տիրուհի > տիրուխնի և այլն:

դ) Օտար բառերի բառասկզբի *ղ*-ի դիմաց առկա են կոկորդային խուլ պայթական կ' (արաբերենի նման) կամ հետնալեզվային խուլ պայթական *կ*. օր.՝ *ղազ > կ'ազ*, *ղազան > կ'ազան*, *ղալմաղալ > կալմակալ*, *ղայիմ > կահիմ*, *ղասաք > կասաք*, *ղարիք > կարիք*, *ղութի > կութի*, *Ղազար > Կանգնար* և այլն: *Ղուկաս* անձնանվան հնչյունափոխված ձևն է՝ *Խուկագ*, *ղսմաթ* գոյականինը՝ *քըսմնթ*:

Քերականական զուգաձևություններ

Տարածքի լեզվական հաղորդակցության միջոցը հիմնականում ժառանգել է գրաբարի քերականական առանձնահատկությունները: Սակայն գոյականական, դերանվանական և բայական հարացույցներում հանդիպում են մի շարք հետաքրքիր կազմություններ, այլաձևություններ, որոնք, ըստ հեքիաթների նյութերի, վերաբերում են Գավաշի և Ոստանի հայության լեզվին:

ա) Հիմնական հոգնակիակերտներն են՝ -եր, -ներ, -ք, -վի, -ան և սրանցով բաղադրված կազմությունները. օր.՝ *այգի > հանկի - հանկիք*, *վկա > վըկա - վըկէք*, *մադն > մադ - մադկեր // մադքեր*, *որդն > տորտ - տորտներ*, *ոտն > տորտ - տորքներ*, *ծունկն > ծունգ - ծընգներ*, *տեր - տիրվանք*, *էշ - էշեր // էշվանք*, *ճնճղուկ > ճընջըղուկ - ճընջըղներ*, *մեղու > մէղուն - մէղունք* և այլն // *մէղնիտեր*, տագերկին > տէկերկին - տէկերկընքտեր և այլն:

Ոստանի Քարադաշտ գյուղի խոսվածքի զուգաձևություններից են հետևյալները. կացիներ - կացիներ, փեսաներ - փեսեք, լեզուներ - լեզվորներ, ճանապարհներ - ճամբիւրներ, կրիա-կրիաներ // կըրիւրա - կըրիւրեք, չուխաներ - չուխեք, սափանաներ - սափնեք, առուներ - հառվորներ, ասփղեր - ասփղներ, հորաքույրներ - խօրքիւրեր, սանամայրեր - սանամէրեր, քեռակիներ - քեռու կընթորներ, տագեր-կանայք - տէքոր կընթորներ, մարդիկ - մարթներ, քույրեր - քիւրեր և այլն:

բ) Հոլովական ձևերը հիմնականում ընդհանուր հայերենյան են: Ուշագրավ հոլովաձևեր են ի հայտ բերում մի շարք գոյականներ և դերանուններ:

Եզակի սեռական հոլովաձևեր. գառան - կ'անու, ձեռքի - ձեռաց, ոտքի - տոտաց, աչքի - աչից, արջի - արճու, գայլի - կ'ելու, հորթի - տորթըկա, ուլի- ուլու, վառեկի - վառկու, աղքատության - շիվարության, երկարության - հերկէնության, մեծության - ճիւճության, կարճության - կօլօտության, քաջության - կօչախության, Սաթիկի - Սաթկէ, Երևանի - Հէրէվանա, Կարսի - Կ'արսան, Վանի - Վ'անան, Մուշի - Մըշու, Սասուն - Սասունի // Սասում - Սասմա, Հարպերտ - Հ'արպերտ'ան և այլն:

Հոգնակի սեռական հոլովաձևեր՝ անունների - անունքտերաց, գազանների - կ'ազընքտերու, գողերի - կ'աղէրու, տերևների - թաֆէրու, փետուրների - փ'անէրու և այլն:

Ոստանի Քարադաշտից ունենք՝ անէրի «աներոջ», ինգիրոջ «ընկերոջ», կընգ'ա «կնոջ», կիսուրի/կիսուրոջ, տալի, տէքոր, քըրոջ, խօրքըրոջ, մօրքըրոջ և այլն:

Բացառական հոլովի ձևեր: Ըստ Ոստանի և Գավաշի տարածքի գաղթականների հաղորդած տվյալների՝ այս հոլովն ունի -ից // ուց, -էն վերջավորություններով, մոտէն կապով ձևեր. աշխարհից - ախշըրք'էն // ախշըրից, քթից - ք'ընթից // ք'ընթէն, թոնրից - թօրվընէն, Արշակից - Արշակի մոտէն, հորից - խօրից // խօրէն // խօր մոտէն, Բաղդադից - Բաղդադուց, Վանից - Վ'անան, Սասունից - Սասումից և այլն:

Հոգնակի բացառականը. կազմվում է հոգնակիի ձևերին - ուց վերջավորություն ավելացնելով. աղվեսներից - աղվըսներուց, բերաններից - պէրնէրուց, բրդերից - պըրթէրուց, գայլերից - կ'էլէրուց, գետերից - կ'էտէրուց, հացերից - խացէրուց, տներից - տընէրուց և այլն:

Գործիական հոլովը. հիմնականում կազմվում է -ով վերջավորությամբ. գլխով –*կըլխով* (յէմ *կըլխուց շար պան ընցէ* «իմ գլխով շար բան է անցել»), դռնով –*տըռնով* (*տըռնից չի մըտնի*): Գրանցված են նաև գործիականի իմաստ արտահայտող հետևյալ բաղադրյալ ձևերը. աղբարով – *ախքարով* // *խըր ժողովկարանին* // *ժողովկարանի խեյր*, *հաչարուրի խեյր* // *խըր մարդով* – *մարտի խեյր* // *խըր մարտին* // *մարտով*, *քրոջով* – *քուրոջ խեյր* // *քորով* և այլն: Նամակ խըրկեց *խըր ուր քուրոջ* // *քուրոջ խեյր*:

Ներգոյական հոլովն արտահայտվում է առաջադաս մըջ և ետադաս մէջ «մէջ» կապով, նաև գոյականի ուղիղ ձևով. *ախշարք՝* // *ախշըրքի մէջ* // *մըջ ախշըրքին*, *գեպում- մըջ կ'եպին* // *կ'եպ, գյուղում – կ'եղ* // *մըջ կ'էղին*, *հողում – խող* // *մըջ խողէն* // *խողին* // *խողի մէջ* և այլն: Հոգնակի ներգոյականի դեպքում ևս (մըջ // մէջ) կապը նախադաս և հետադաս կիրառություն ունի. *մըջ պէրըներուն* // *պէրըներու մէջ*, *մըջ կ'էպէրուն* // *կ'էպէրու մէջ*, *մըջ կ'էղէրուն* // *կ'էղէրու մէջ*, *մըջ սընդըկներուն* // *սընդըկներու մէջ* և այլն:

Թվական անվան հարացույցում առանձնանում է տասնավորների կազմությունը. այն ընդունված ձևին զուգահեռաբար արտահայտվում է նաև *դասը* թվականի հարադրությամբ. օր.՝ *յէռսուն* // *իրեք՝ դաս*, *ք'անսուն* // *չոռս դաս*, *հիսուն* // *խինգ՝ դաս*, *վաթսուն* // *վեց դաս*, *յօթանասուն* // *յօթ դաս*, *ութանասուն* // *ույթ դաս* և այլն:

Դերանվանական հարացույցում անձնական դերանունների տրականն ունի մոտ խասցավ *ծի*, *ք'է*, *մե*, *ծե* ձևերը (մոտեցավ *ինծ*, *քեզ*, *մեզ*, *ծեզ*): «*էկեք՝ խը ծի*, *մեկ դաս-տըսնըխինգ՝ ավուր խամար*, *ծե ամսական դաս*»: Հայցական հոլովի արտահայտությունն է. *կ'ուզի ծի*, *ք'է*, *մե*, *ծե* (սիրում է *ինծ*, *քեզ*, *մեզ*, *ծեզ*): Բացառական և գործիական հոլովներում անձնական դերանունները ստանում են –*է* // –*ից*, նաև մոտէն բառաձևը և հոլովվում են գոյականական զուգաձևությունների նման: Ինձանից –*ձէնէ*, յէմ մոտէն, ծիզնից: Քեզանից – *ք'էնէ*, *ք'ու մոտէն*, *ք'էզնէ*, *ք'էզնից*: *Ձեզանից-ձէզնէ*, *ծէզնից*, *ծե մոտէն*: *Ձիզնով* (*ինձանով*), *ք'էզնով*, *մէզնով*, *ծէզնով*:

Բայի խոնարհումը հիմնականում կատարվում է արևմտյան խմբակցության կը ճյուղին բնորոշ բարբառային հատկանիշներով:

ա) Կարելի է նշել, թերևս, ընթացակցական դերբայի զուգաձևությունների մասին. *ուրելեն // ուրելով կերթեր, վազելեն // վազելով էկավ, զըրուցելեն // զըրուցելով էկան մոտ, ծըծղալեն // ծըծղալով//խեպ ծըծղաց//ծըծղաց խեպ կընսց* և այլն:

բ) Անցյալ կատրյալի եզակի երրորդ դեմքի դրսևորումը մի խումբ բայերում հիմնականում արմատական հիմքով ու նախահավելվածով է, որոնք ունեն նաև ներգործաձև վերջավորություններով զուգահեռ տարբերակներ. օր.՝ *բացեց – էպւաց // պւացեց, բերեց – էպէ // պէրեց, դրեց – էրի // տըրեց, զարկեց // էզւար // զւարկեց, թողեց – էթօղ // թողեց, լացեց – էլւաց // լւացեց, տվեց – էտու // տըվեց: Գոլեն տեսավ, որ Համո պարկերք էխան փոեց վըր ծնգներուն: Գոլ էպե վարոց, շաժեց վը ծի:*

Առնել բայը անցյալ կատարյալի եզակի երրորդ դեմքում ներգործաձև վերջավորությամբ է՝ առավ – առեց: Ամեն քննադատն էլ կան էկավ, էտա քաղըքներու մեջ մեկնեն որ շատ տուր էկավ, էստեղ ուր դյուքան պոնեց, առեց առուտուր անել:

Կրավորաձև վերջավորությամբ են *հասավ – խասավ, նստեց – նըստավ, տեսավ – տըեսավ* չեզոք սեռի բայերը:

գ) Օժանդակ բայի կցական յուրահատուկ կազմություն ունի անցյալ անկատար ժամանակը՝ *խոսում էի – կասեմէր, խոսում էիր – կասեսէր, խոսում էր – կասէր, խոսում էինք – կասենքէր, խոսում էիք – կասեքէր, խոսում էին – կասենէր:*

դ) Վաղակատար ժամանակը կազմվում է արևոյան բարբառներին հատուկ – էր վերջավորություն ունեցող վաղակատար դերբայով և օժանդակ բայի խոնարհված ձևերի զուգորդմամբ. օր.՝ *գրել եմ – կըրէր էմ, գրել ես – կըրէր էս, գրել է- կըրէր ա, գրել ենք – կըրեր էնք, գրել եք – կըրէր էք, գրել են – կըրեր էն* և այլն:

ե) Հարկադրական եղանակն արտահայտվում է պիտի եղանակիչից առաջացած տը (ձայնավորից առաջ՝ տ) մասնիկի և խոնարհվող բայի ըղձական եղանակի ժամանակների համաձուլով. օր.՝ *պիտի գրեմ > տըկըրեմ, պիտի գրես > տըկըրես, պիտի գրի > տըկըրա, պիտի գրենք > տըկըրենք, պիտի գրեք > տըկըրեք, պիտի գրեն > տըկըրեն, պիտի գրեի > տըկըրի, պիտի գրեիր > տըկըրի, պիտի գրեր > տըկըրի, պիտի գրեինք > տըկըրենք, պիտի գրեիք > տըկըրեք, պիտի գրեին > տըկըրեն:*

Շարահյուսական մակարդակում առանձնահատուկ է՝ ա) ուղիղ խնդիրը դրսևորվում է գ նախդրիվ հայցականով. օր.՝ *Թյուջար զլաճ կը դնի խըր դավրեշներուն*: *Կըքոնի զտղեն կըփսակի վըր ախչկան*:

բ) Նպատակի պարագան կարող է արտահայտվել անորոշ դերբայի ուղիղ ձևով, դերբայի տրական հոլովով, նաև դիմավոր բայի սահմանական և ըղձական եղանակների ներկա ժամանակով: Կ'նացին *քալալուկ* քաղել // քաղելու: («Գնացին մոշ քաղելու»): Կ'ընաց արտ ճըրել // կը ճըրն: («Գնաց արտը ջըրելու»): Էկավ խաց ուտել // ուտելու // ուտա: («Եկավ հաց ուտելու»): Էկաժ ախչիկ ուզել // ուզելու («Եկան աղջիկ ուզելու»):

գ) Տեղի պարագան դրսևորվում է հայցական հոլովով, նաև *մէշ* // *մըչ* կապի միջոցով: Բախչէն // կ'եղ կըպ'անի: («Աշխատում է այգում // գյուղում»): Ժողվաժ տնշտ: («Հավաքվել են դաշտում»): Կ'եղ կապրի: («Ապրում է գյուղում»): Ամընի մէշ ճո՛ւր չըկա: («Ամանում ջուր չկա»): Տաշտ // տաշտի մէշ // մըչ տաշտին խաց չըկա: («Տաշտում հաց չկա»):

Կապերի շարահյուսությունը հատկանշվում է և՛ առաջադաս, և՛ ետադաս դիրքով: Ետադաս գործածության ժամանակ կապի խնդիրը կարող է ունենալ ոչ թեք, ուղիղ ձև կամ հոլովվել: Այսպես՝ *ք'անրի մոտ* // *մըրտ ք'անր*, *ախաթ'որ մոտ* // *մըրտ ախալեր*, *խօր խէր* // *խըրտ խէր* «հոր հետ», *ընգ'երնէրու խեք* // *խըրտ ընգ'երնէրուն*, *ճանքիսի վէրէն* // *վըր ճամբ-խին*, *ճանքանխվե* «ճանապարհով», *տանսի վէրէն* // *վըր տանսին* «տանիքի վրա», *տան հէռճէվ* «տան առաջ», *կ'էրի մէշ* // *մըչ կ'էրին* «գետի մեջ», *ճըրի մէշ* // *մըչ ճըրին* և այլն: «Աղեկ, օ'ց, ծի մը խեղդի, էրթանք՝ մըտ գ'ետ»: «Կ'էրթա խըտ իրիկ»: «Խա՛, ես կը գ'ամ խը ք'ե»:

Այսպիսով, փաստերը ցույց են տալիս, որ Վասպուրական աշխարհի Ռշտունիք գավառի հայության բարբառային խոսքին բնորոշ են գրական լեզվից տարբերվող հնչյունական համակարգ, հարուստ ու պատկերավոր բառապաշար, քերականական այլաձևություններ, բառակազմական ուշագրավ իրողություններ և ոճեր: Բարբառի կրողների հաղորդած ստույգ տվյալները լիովին օգնում են ոշտունցիների հեքիաթների բարբառային խոսքի լեզվական դժվարությունները հաղթահարելուն:

Գրականության ցանկ

1. Acharian H., Hay barbaragitutyun (Armenian Dialectology), Moskva-Nor Nakhijevan, 1911.
2. Acharian H., K'nnutyun Vani barbari (Study of the Van Dialect), Yerevan State University Press, Yerevan, 1952.
3. "Avetaber", k'rognakan, usumnakan, yndtanekan yev k'azakan shabatater (Religious, Educational, Family, and Political Weekly), K. Polis, 15 oktyeberi, 1887, h. 40, t'iv 42.
4. Grigoryan A. V., Hay barbaragitutyun dasents'utyun (Armenian Dialectology Course), Yerevan, 1957.
5. Turshyan H., Bararan Vani barbari (Dictionary of the Van Dialect), Yerevan, "Gitutyun" Press, 2018.
6. Hakobyan T. Kh., Melik-Bakhshyan St. T., Barsghyan H. Kh., Hayastani yev harak'ts' shurk'neri teghanunneri bararan (Dictionary of the Toponyms of Armenia and Adjacent Regions), Yerevan State University Press, Yerevan, 1986.
7. "Hayereni barbaragitakan atlas nyuteru havakman ts'ragir" (Program for Collecting Materials for the Armenian Dialectological Atlas), Yerevan, 1977.
8. "Hay zhoghovurdakan hekiatner, h. XX, Rshdunik' (kazmoghner: A. S. Ghaziyan, T. L. Hayrapetyan)" (Armenian Folktales, Vol. XX, Rshdunik' (Compilers: A. S. Ghaziyan, T. L. Hayrapetyan)), NShA AN RA, h'nagitakan ev azgagrakan institut'yi hratarak', Yerevan, 2025.
9. Gharibyan A. S., "Sasuntsi Davit" zhoghovrakan vep'i lezun (- "Sasuntsi Davit", hobeilyanak' chovot'uk' nunyats' eposi 1000-amiakyan), KHSR GA hayk' fil'ial, Armfan hratarak', Yerevan, 1939.
10. Gharibyan A. S., Hay barbaragitutyun (Armenian Dialectology), Yerevan, 1953.
11. Muradyan M. H., Moksi barbari hnixunahnch'ut'yan hraran arandznahakutyunner (Main Features of the Phonetic System of the Moks Dialect).- "Lraber hasarakakan gitutyunneri", 1978, 9 (20).
12. Muradyan M. H., Urvagits' Moksi barbari (Outline of the Moks Dialect).- "Hayereni barbaragitakan atlas", HSSR GA hratarak', Yerevan, 1982.
13. Jahukyan G. B., Hay barbaragitutyun nerats'utyun (Introduction to Armenian Dialectology), HSSR GA hratarak', Yerevan, 1972.
14. Ruben, Hay yeghpayrakanin y mshakataner (Memories of an Armenian Revolutionary), h. B. Depi Yerkir (Van, Lernapar, Taron), Teheran, 1982.

**ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԱՐԱՏ ՂԱՐԻՔՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ՎԱՐՍԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ**

ՀՊՄՀ մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ, ԳՊՀ,

բ. գ. թ., դոց.

varsik.nersisyan@mail.ru

DOI: 10.57236/1829-0183-2025.1(32)-36

Համառոտագիր

Ժամանակակից հայերենի բառակազմության տեսությունը, ինչպես հայտնի է, ուսումնասիրվել և մշակվել է տարբեր լեզվաբանների կողմից, սակայն որոշ հարցերում առկա տարակարծությունները երբեմն խնդիրներ են ստեղծում հատկապես դասավանդման գործընթացում, և անհրաժեշտություն է առաջանում նորանոր հետազոտությունների՝ բացահայտելու, ճշգրտելու տարբեր լեզվաբանների մոտեցումները հիմնախնդրի վերաբերյալ: Այդ առումով կարևորվում է հայերենագիտական տարբեր աշխատությունների ուսումնասիրությունը ինչպես առհասարակ ժամանակակից հայերենի բառակազմության ուսմունքի զարգացման ընթացքը ներկայացնելու, այնպես էլ այդ ուղղությամբ առանցքային նշանակություն ունեցող ձևակերպումների համեմատական վերլուծություն կատարելու տեսանկյունից:

Արդի հայերենի բառակազմության տեսության ամբողջացմանը նպաստելու նպատակով պայմանավորված՝ սույն հոդվածում փորձ է արվում ներկայացնելու Արարատ Ղարիբյանի (1899-1977) հիմնարար աշխատություններում (դպրոցական դասագրքերում և բուհական ձեռնարկներում) արտացոլված տեսական մոտեցումներն ու ձևակերպումները ժամանակակից հայերենի բառակազմության, ինչպես նաև նրա դասավանդման հարցերի վերաբերյալ: Ներկայացվել են տարբեր հայերենագետների գնահատականները հայ մանկավարժական լեզվաբանության հիմնադիր լեզվաբանի՝ խնդրո առարկա և հարակից այլ ոլորտներում իրականացրած գործունեության վերաբերյալ: Մասնավորապես ցույց է տրվել, որ Արարատ Ղարիբյանի ներդրումը բառակազմության ոլորտում հիմնականում դասավանդման հարցերի համակարգումն ու մեթոդական քայլաշարի մշակումն է:

Ղարիբյանի աշխատություններում առաջին անգամ հայ լեզվաբանության պատմության ընթացքում մշակվել են ինչպես լեզվի մյուս բաժինների, այնպես էլ բառակազմության դասավանդման մեթոդական քայլաշարն ու նրբությունները, որոնք հիմնականում արտացոլված են «Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա» և «Մանկավարժական լեզվաբանություն» աշխատություններում, իսկ տե-

սական ձևակերպումներն ու դրանց գործնական կիրառումը՝ տարբեր տարիների հրատարակված դասագրքերում, մասնավորապես «Հայոց լեզվի քերականություն» դպրոցական դասագրքում, որոնցից առանձնացված կարևորագույն հատվածները սույն հոդվածում ներկայացված են հնարավորինս մանրամասնորեն՝ դրանք մեկ անգամ ևս ուշադրության արժանացնելու նպատակով:

Ուսումնասիրությունը կատարվել է նկարագրական-վերլուծական և համեմատությունների մեթոդներով:

Բանալի բառեր և բառակապակցություններ. բառակազմություն, մանկավարժական լեզվաբանություն, դասագիրք, ածանցում, բարդ ածանցավոր բառեր:

ANALYSIS OF THEORETICAL AND PEDAGOGICAL ASPECTS OF WORD-FORMATION IN THE WORKS OF ARARAT GARIBYAN VARSIK NERSISYAN

Associate Professor at the Chair of Mother Tongue and Its Teaching Methodology at the Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan, Senior Researcher at the Department of the Modern Armenian Language at the NAS RA Institute of Language after

H. Acharyan, GSU lecturer, Ph.D., Associate professor

Yerevan, the Republic of Armenia

varsik.nersisyan@mail.ru

Abstract

The theory of word formation in modern Armenian, as is well known, has been studied and developed by various linguists, but the differences of opinion on some issues sometimes create problems, especially in the teaching process, creating the need for new research to identify and clarify the approaches of various linguists on the issue.

In this regard, the study of various works in Armenology is important both from the perspective of presenting the development of the doctrine of word formation in modern Armenian as a whole and from the perspective of conducting a comparative analysis of formulations of key importance in that direction.

With the aim of contributing to the advancement of a comprehensive theory of word-formation in the modern Armenian language, this paper attempts to present the theoretical approaches and formulations reflected in the fundamental works of Ararat Gharibyan (1899–1977), including school textbooks and university manuals, which address both the word-formation of the modern Armenian language and issues related to its teaching. The paper presents evaluations by various Armenologists regarding the activities of the founder of Armenian pedagogical linguistics in the given and related fields. Specifically, it is highlighted that Ararat Gharibyan's main contribution was the systematization of issues related

to the teaching of word-formation and the development of methodological algorithms.

For the first time in the history of Armenian linguistics, Gharibyan's works developed both the methodological approach and subtleties for teaching not only other sections of the language but also word formation, which are mainly reflected in his works *Methods of Teaching the Armenian Language* and *Pedagogical Linguistics*. The theoretical formulations and their practical application can be found in textbooks published over the years, particularly in the *Grammar of the Armenian Language* school textbook. Key sections from these works are presented in this article in as much detail as possible, with the aim of drawing attention to them once again.

The study was conducted using descriptive-analytical and comparative methods.

Keywords and phrases: word-formation, pedagogical linguistics, textbook, affixation, compound-affixal words.

АНАЛИЗ ТЕОРЕТИЧЕСКИХ И ПЕДАГОГИЧЕСКИХ ВОПРОСОВ СЛОВООБРАЗОВАНИЯ В ТРУДАХ АРАРАТА ГАРИБЯНА ВАРСИК НЕРСИСЯН

доцент кафедры родного языка и его преподавания Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна, старший научный сотрудник отдела современного армянского языка Института языка им. Гр. Ачаряна
НА НРА, преподаватель ГГУ.

кандидат филологических наук, доцент. Ереван, Республика Армения
varsik.nersisyan@mail.ru

Аннотация

Как известно, теория словообразования современного армянского языка изучалась и развивалась различными лингвистами, однако разногласия по некоторым вопросам иногда создают проблемы, особенно в учебном процессе, и возникает необходимость в новых исследованиях для выявления и уточнения подходов разных лингвистов к проблеме.

В этом смысле изучение различных работ арменоведов важно как с точки зрения представления процесса развития преподавания словообразования современного армянского языка в целом, так и с точки зрения проведения сравнительного анализа ключевых важных формулировок в этом направлении.

С целью содействия созданию целостной теории словообразования современного армянского языка в данной статье предпринята попытка представить теоретические подходы и формулировки, отраженные в

фундаментальных трудах Арарата Гарибяна (1899–1977) – школьных учебниках и вузовских пособиях, — касающиеся словообразования современного армянского языка, а также вопросов его преподавания. Представлены оценки различных арменоведов относительно деятельности основателя армянской педагогической лингвистики в исследуемой и смежных областях. В частности, продемонстрировано, что вклад Арарата Гарибяна заключается главным образом в систематизации вопросов преподавания словообразования и разработке методических алгоритмов.

Впервые в истории армянской лингвистики в работах Гарибяна были разработаны как методические шаги и тонкости преподавания не только других разделов языка, но и словообразования, что в основном отражено в его работах *«Методика преподавания армянского языка»* и *«Педагогическая лингвистика»*. Теоретические формулировки и их практическое применение можно найти в учебниках, издававшихся на протяжении нескольких лет, особенно в школьном учебнике *«Грамматика армянского языка»*. Важнейшие фрагменты этих работ представлены в статье более подробно с целью еще раз привлечь внимание к ним. Исследование проведено с использованием описательно-аналитического и сравнительного методов.

Ключевые слова и словосочетания: словообразование, педагогическая лингвистика, учебник, аффиксация, сложно-суффиксальные слова.

Ներածություն

Ժամանակակից հայերենի բառակազմության տեսությունը, ինչպես հայտնի է, ուսումնասիրվել և մշակվել է տարբեր լեզվաբանների կողմից, սակայն որոշ հարցերում առկա տարակարծությունները երբեմն խնդիրներ են ստեղծում հատկապես դասավանդման գործընթացում, և անհրաժեշտություն է առաջանում նորանոր հետազոտությունների՝ բացահայտելու, ճշգրտելու տարբեր լեզվաբանների մոտեցումները հիմնախնդրի վերաբերյալ: Այդ նպատակով ուսումնասիրել ենք հայերենագիտական տարբեր աշխատություններ և ցույց տվել ինչպես ժամանակակից հայերենի բառակազմության ուսմունքի զարգացման ընթացքը, այնպես էլ այդ ուղղությամբ առանցքային նշանակություն ունեցող ձևակերպումների համեմատական վերլուծությունը: Այդ առումով հետա-

1 Հմմտ. Վ. Ներսիսյան, *Բառակազմության հարցերի քննությունը Ա. Այվրընյանի «Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի» աշխատության մեջ*.- Գիտական հոդվածների ժողովածու՝ նվիրված Ղ. Ալիշանի ծննդյան 200-ամյակին, ԳՊՀ, մաս 2, 2020, էջ 210-221: Նույնի, *Բառակազմության հարցերի քննությունը Սյրեփանոս Պալասանյանի աշխատություններում*.- ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու,

քրքրական է նաև Ա. Ղարիբյանի գիտական գործունեությունը, որին անդրադարձել ենք սույն հոդվածում՝ բառակազմության տեսության և դասավանդման հարցերի տեսանկյունից:

Ա. Ղարիբյանը, ինչպես հայտնի է, բազմաթիվ արժեքավոր աշխատությունների հեղինակ է, որոնցից են՝ «Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն» (Ե., 1937), «Հայերեն բարբառների մի նոր ճյուղ (ԵՊՀ գիտական աշխատություններ, 1939, հ. 9), «Համառոտություն հայ բարբառագիտության» (Ե., 1941), դպրոցական դասագրքեր (առաջին շրջան): Երկրորդ շրջանում գրվածների մեջ կարելի է առանձնացնել «Հայ բարբառագիտություն» (Ե., 1953), «Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա» (Ե., 1952, 1954), «Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ» (Ե., 1958) աշխատությունները, բազմաթիվ հոդվածներ, բառարաններ: Է. Աղայանը, հանգամանորեն վերլուծելով և որոշ հարցերում քննադատելով Ղարիբյանի տեսակետները լեզուների, բարբառների ծագումնաբանական հարցերի շուրջ, միաժամանակ հետևյալ կարևոր եզրակացությունն է անում. «.... մեզ մնում է խոսել այն մասին, թե Ա. Ղարիբյանը ինչպիսի՝ բարեխղճությամբ է ուսումնասիրում լեզվական նյութը, ինչպիսի՝ զգացումով է ղեկավարվում: Բարբառների նկարագրությունը, բնականաբար, պահանջում է խիստ մանրակրկիտ աշխատանք. քերականական մի սխալ գրություն, հնչյունական օրենքների շփոթություն և այլն կարող են բարբառագիտական աշխատանքների մեջ հսկայական թյուրիմացությունների տեղիք տալ» [Աղայան 1962: 303]:

Ղարիբյանը հեղինակ կամ հեղինակակից է դպրոցական ութ դասագրքերի, որոնցից կարևորագույնը «Հայոց լեզվի քերականությունն» է՝ 1934 թ. և հետագա հրատարակություններով, որոնցից առաջինը, ըստ Աղայանի, «...բնականաբար, դեռևս շատ անկատար էր, մակերեսային,

հ. 11, էջ 272-285: Նույնի, *Ածանցման հարցերի քննությունը Մանուկ Աբեղյանի աշխատություններում.* - «Ջահուկյանական ընթերցումներ» հանդես, հ. 1-2 (17-18), ԳԱԱ ԼԻ հրատ., Ե., 2022, էջ 130-145: Նույնի, *Բաղադրյալ բառերի դասակարգումը Մանուկ Աբեղյանի աշխատություններում.* - Գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2023, 14, էջ 249-268: Նույնի, *Բառակազմության հարցերի քննությունը Գուրգեն Սևակի աշխատություններում.* - «Ջահուկյանական ընթերցումներ» հանդես, 1(19), ԳԱԱ ԼԻ, Ե., 2023, էջ 50-69: Նույնի, *Բառակազմության տեսական հարցերի քննությունը Գրիգոր Ղափանցյանի աշխատություններում.* - «Հայոց լեզվի ուսումնասիրման և ուսուցման խնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութեր, ՀՀ ԳԱԱ ԼԻ, Ե., 21 փետրվարի, 2024, էջ 110-121:

շատ ու շատ սահմանումներ անճիշտ էին ու տարտամ, բայց հետագայում, պարբերական հրատարակությունների ժամանակ վերամշակվելով, դասագիրքը բարելավվեց» [Աղայան 1962: 279]: Ա. Ա. Աբրահամյանն այն «նշանակալի երևույթ» է համարում հայ դպրոցի կյանքում և այդ առթիվ գրում է. «Դասագիրքը բազմաթիվ վերահրատարակություններով գործածության մեջ մնաց ավելի քան 30 տարի: Նա (իմա՝ Ղարիբյանը, Վ.Ն.) հայոց լեզվի դասագրքեր է գրել նաև ոչ հայկական դպրոցների աշակերտների համար: Ուշագրավ է «Краткий курс армянского языка» ինքնուսուցման ձեռնարկը, որն առաջին անգամ հրատարակվեց 1944 թ., ապա ունեցավ մի քանի հրատարակություն: Բազմաթիվ դասագրքերի հեղինակը բնականաբար չէր կարող մեկուսի մնալ լեզվի դասավանդման մեթոդիկայի գիտական հիմունքների մշակումից: Եվ, իրոք, Ա. Ղարիբյանն իր գիտամանկավարժական գործունեության սկզբնական շրջանից մինչև վերջ եղավ ու մնաց նաև որպես գիտնական մեթոդիստ, խորհրդատու հայոց լեզվի ուսուցիչների համար: Գրեց տասնյակ հոդվածներ, ինչպես և գրքեր, որտեղ լուսաբանեց մեթոդական շատ հարցեր» [Աբրահամյան 1979: 24]:

Տեսամեթոդական հիմքեր

Սույն ուսումնասիրությունը կատարելիս որպես հիմք ենք ընդունել Ա. Ղարիբյանի այն աշխատությունները, որոնցում այս կամ այն չափով անդրադարձ է կատարվել ժամանակակից հայերենի բառակազմության տեսության և դասավանդման մեթոդիկայի հարցերին: Մասնավորապես դիտարկել ենք Ղարիբյանի «*Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա*» միջնակարգ դպրոցների ուսուցիչների և մանկավարժական բուհերի ուսանողության համար գրված ձեռնարկը (Երևան, 1954, 563 էջ), «*Հայոց լեզու*» V-VII դասարանների դասագիրքը (9-րդ վերահրատ., Երևան, 1961), «*Հայ մանկավարժական լեզվաբանություն*» աշխատությունը (Երևան, 1969): Ուսումնասիրության ընթացքում քննել ենք նաև Է. Աղայանի «*Հայ լեզվաբանության պատմություն*» (հատոր 2, Երևան, 1962) աշխատության՝ Ա. Ղարիբյանի գիտական գործունեությանը վերաբերող վերլուծական նյութը, «*Ընդհանուր և հայկական բառագիտություն*» (1984) աշխատության տվյալները, որոշ դեպքերում դիտարկումներ արել Գ. Սևակի տեսական ձևակերպումների համեմատությամբ:

Ուսումնասիրության մեթոդներ

Ուսումնասիրությունը կատարելիս կիրառել ենք նկարագրական-վերլուծական, ինչպես նաև համեմատությունների մեթոդները:

Ստացված արդյունքներ

Մեր ուսումնասիրության թեմայով պայմանավորված՝ կանդիդատ-նանք նախ «Հայոց լեզու» դպրոցական դասագրքի քննությանը, որտեղ էլ ներկայացված է բառակազմությունը: Դասագրքի «Բառի կազմությունը» բաժնում ամենից առաջ սահմանվում է բառակազմությունը. «*Լեզվի գիտության այն մասը, որը սովորեցնում է բառեր կազմելու եղանակները, կոչվում է բառակազմություն*» [Ղարիբյան 1961: 56]: Ապա սահմանվում է արմատը. «*Բառի հիմնական իմաստն արտահայտող այն մասը, որ առանց այդ իմաստը կորցնելու այլևս չի բաժանվում բաղադրիչ մասերի, կոչվում է արմատ*» [Ղարիբյան 1961: 56]: Նույն տեղում գաղափար է տրվում արմատական բառերի և առանձին գործածություն չունեցող արմատների մասին (նկատենք, որ բերված օրինակները մինչ օրս կրկնվում են գրեթե բոլոր դասագրքերում, ինչպես՝ *հի-անալ, կարդ-ալ* ևն): «*Այն մասնիկը, որը ավելացվելով արմատի կամ բառի սկզբից կամ վերջից՝ փոխում է նրա իմաստը, նոր բառ է կազմում, կոչվում է ածանց*» [Ղարիբյան 1961: 57]: Ածանցները բաժանվում են նախաձանցների և վերջաձանցների, տրվում են դրանց իմաստները՝ համապատասխան օրինակներով [տե՛ս Ղարիբյան 1961: 57-61]:

«*Բարդ կոչվում են այն բառերը, որոնք կազմված են լինում երկու կամ ավելի բառերից կամ արմատներից*» [Ղարիբյան 1961: 61]: Ըստ Ղարիբյանի՝ ինչպես բարդ, այնպես էլ ածանցավոր բառերը կարող են բարդվել կամ ածանցվել [Ղարիբյան 1961: 61]: Ներկայացնում է բարդ բառեր կազմելու ձևերը հայերենում, բերում համապատասխան օրինակներ: Մասնավորապես առանձնացվում են հետևյալ կետերը.¹ Բարդ բառի մեջ սովորաբար առաջին բաղադրիչը լինում է երկրորդի լրացումը (*մարդասեր- մարդ սիրող* ևն), 2. բաղադրիչ մասերը սովորաբար միացվում են *ա* ձայնավորով, որ կոչվում է *հոդակապ (մարդ-ա-նման* ևն), 3. երբ բարդվող բառերից երկրորդն սկսվում է ձայնավորով, հոդակապ չի դրվում և երկրորդ բառի ուղղագրությունը պահպանվում է (*հանր-*

² Բոլոր մեջբերումներում կետադրությունը և ուղղագրությունը ներկայացվում են ըստ բնագրի:

օգույր ևն), 4.իբրև բացառություն՝ *ա* հոդակապը գրվում է *ամեն* բառից հետո, երբ հաջորդում է նաև ձայնավորով սկսվող բառ (*ամենաազնիվ* ևն): Եթե այն նշանակում է *ամեն բան*, ձայնավորից առաջ *ա* հոդակապ չի ստանում (ամենիմաց), հազվադեպ *ա* հոդակապը մնում է *հակա-*, *կիսա-* մասերով բարդվելիս (*հակասառաջարկ*, *կիսաառողջ*), 5. հաճախ, երբ առաջին բառը վերջանում է ի ձայնավորով՝ *ի*-ն, միանալով *ա*-ին, դառնում է *ե* (*գինի-ա-տուն—գինետուն* ևն), 6. երբ առաջին բառը վերջանում է ու ձայնավորով, վերջինս *ա* հոդակապի հետ միասին տալիս է *վա* վանկը (*ծու* և *կեր—ծվակեր*), 7. կան նաև անհոդակապ բարդություններ (հացթուխ ևն): Երբ բարդ բառը ստանում է *ածանց*, *կոչվում է բարդ ածանցավոր* (*գրավարժ*-ություն ևն) [տե՛ս Ղարիբյան 1961: 61]: Այսինքն՝ դասագրքում որպես բարդածանցավոր բառեր չեն դիտարկվում երկու և ավելի արմատներից կազմված և իրենց կազմում ածանց կամ ածանցներ ունեցող բառերը, ուստի դրանք բարդ, ոչ թե ածանցավոր բառերի մեջ են ներկայացվում: Մինչդեռ ըստ Գ. Սևակի՝ «*Բարդածանցավոր են կոչվում այն բառերը, որոնք կազմված են մեկից ավելի հիմնական ձևույթներից (արմատներից) և մեկ կամ ավելի բառակազմական ձևույթից (ածանցից), օր.՝ ան-գրա-գետ*» [Սևակ 1955: 221] (հոդակապն արմատին կից է տրվում):

Ղարիբյանի դասագրքում հարադիր բառերի կազմության հետևյալ կետերն են նշվում. ա) Մեկ բառի նշանակություն ունեցող հարադիրները մեծ մասամբ բայեր են, ինչպես՝ *թույլ տալ*, *ցույց տալ* ևն, բ) երբեմն հարադիր բարդ բառերը միանում են շաղկապով կամ կապով, և յուրաքանչյուր բաղադրիչ շեշտ է կրում, ինչպես՝ *ջա՛րդ ու փշու՛ր* ևն, իսկ եթե միայն մեկն է շեշտվում, բաղադրիչները գրվում են միասին՝ դառնալով *կցական* բարդություն, գ) հարադիր բարդ բառերը լինում են նաև առանց շաղկապի, բաղադրիչների միջև գծիկ է դրվում, ինչպես՝ *գոռում-գոչյուն* ևն, դ) բաղադրիչներից մեկը փոխում է ձայնավորը կամ բաղաձայնը, կամ բառի վրա նոր հնչյուն կամ վանկ է ավելանում, ինչպես՝ *ծակ ու ծուկ*, *պարապ-սարապ* ևն, ե) հարադիր բարդ բառերը հաճախ միևնույն բառի կրկնություններն են լինում և կոչվում են կրկնավոր բարդություններ, ինչպես՝ *դառը-դառը*, *քիչ-քիչ* ևն, դրանց արանքում գծիկ է դրվում: Փաստորեն նախորդները, որ հնչյունափոխված բաղադրիչով կրկնություններ են, կրկնավոր չի համարում: Ըստ Ղարիբյանի՝ բարդ բառերի մի տեսակն էլ կոչվում է կցական բարդություն, որը կազմ-

վում է հարադիր բարդությունից, որի բաղադրիչները միասին են գրվում, ինչպես՝ *առևտուր, երթևեկություն* ևն [տե՛ս Ղարիբյան 1961: 62-65]:

Բարդության մի տեսակն էլ համարում է նորագույն հապավումները (ինչպես դա անում էր Գ. Սևակը՝ ավելի մանրակրկիտ քննությամբ [տե՛ս Սևակ 1948: 158-159], թեև ըստ Է. Աղայանի՝ հապավումների և դրանց տեսակների մասին ընդհանուր գիտելիքներ է տվել նախ Ա. Ղարիբյանը՝ ավելի վաղ հրատարակված՝ հայոց լեզվի քերականության դպրոցական նոր դասագրքում [տե՛ս Աղայան 1984: 294-295])՝ հետևյալ բաժանումով. 1) Առաջին բառի կամ բառերի սկզբնամասերով և վերջին ամբողջ բառով, ինչպես՝ *պեքոպեքա* ևն, 2. բառերի սկզբնամասերով, ինչպես՝ *կենտրոմ* ևն, 3. բառերի սկզբնատառերով, ինչպես՝ *ԱՄՆ* ևն. այս դեպքում եթե հապավվող բառերը հասարակ անուններ են, հապավումը գրվում է փոքրատառերով, իսկ եթե հատուկ անուններ են, գրվում են մեծատառերով [տե՛ս Ղարիբյան 1961: 68-69]:

Բառակազմության հարցերը Ղարիբյանը քննել է նաև ձևաբանության բաժնում՝ յուրաքանչյուր խոսքի մասի անդրադառնալիս: Դրանցում ներկայացված են միայն տվյալ խոսքի մասը կազմող ածանցները՝ իմաստային որոշ մեկնաբանություններով: Որպես գոյականակերտ ածանցներ են ներկայացված *ակ, ան, անք, անակ, արան, արք, եստ, իք, իչ, մունք, յակ, յուն, որդ, ու, ութուն, ուհի, ում* (սրա հին ձևն է *ումն*, նաև՝ *ունք* ածանցով՝ *ուսմունք, արարմունք* ևն), *ույթ, ույք, ունք, ուստ, պան, վածք, վոր, ավոր, ք* [տե՛ս Ղարիբյան 1961:129-131]: Ածականակերտ վերջածանցներն են՝ *ական, ային, անի, ատ, ավետ, (ա)վոր, (ա)վուն, եղ, եղեն, ենի, ե, ի, ալի, ելի, ին, կոտ, յա, ովի, ոտ, ու, ուն*³: Ժխտական ածանցներն են՝ *ան* (դրվելով գոյականների վրա՝ կազմում է ժխտական ածականներ՝ *անտուն, անտուն, անտուն*, դրվելով բայարմատների վրա՝ կազմում է ածական՝ *անզգա*, դրվելով ածականների վրա՝ ժխտում է նրանց նշանակությունը՝ *անհավասար*), նշվում է, որ *ան*-ը ամեն ածականի վրա չի կարող դրվել, ինչպես մյուս ժխտական նախածանցները՝ *ապ* կամ *ապա, տ, դժ, չ* [տե՛ս Ղարիբյան 1961: 141-143]:

Թվականները բաժանում է *պարզ, բարդ* և *բաղադրյալ* տեսակների: *Բարդ* է համարում այն թվականները, որոնք կազմված են մեկից

³ Ղարիբյանն ածանցներից առաջ կամ հետո գծիկ չի դնում, ուստի մենք ևս այդպես ենք ներկայացնում:

ավելի արմատից և գրվում են մեկ բառով՝ *տասներեք, հիսունութ* ևն (11-99), *բաղադրյալ* են այն թվականները, որոնք բաղկացած են երկու և ավելի անկախ բառերից. ամեն մի բառ գրվում է առանձին. *վեց հազար երկու հարյուր հիսունչորս* [տե՛ս Ղարիբյան 1961: 148]:

Բայաժանցներին ևս անդրադարձ կա. ըստ Ղարիբյանի՝ «Անորոշ դերբայն ունենում է *ել* կամ *ալ* մասնիկներ, որոնք դերբայական ածանց են. բաղաձայնը անորոշ դերբայի բուն ածանցն է, *ե* և *ա* ձայնավորները *խոնարհիչներ* են (լծորդներ)» [տե՛ս Ղարիբյան 1961:168]: Որպես բայ-ածանցներ ներկայացված են՝ «*ն, չ, են, ան, վ, ացն, եցն, ցն, ուր, ալ* (հազվագյուտ՝ *կուր, սլ, շլ* և նմ.)» [տե՛ս Ղարիբյան 1961:169]: Նշենք, որ Ղարիբյանը միայն անորոշ դերբայի հիմքն է առանձնացնում, իսկ մյուս դերբայների կազմությունը հենց անորոշի հիմքով է բացատրում: Ածանցներ է համարում նաև անկատարի *ում*, ապառնու *ելու*, *ալու* վերջավորությունները (վերջինների համար գրում է՝ *աժանցներ* կամ *վերջավորություններ*), վաղակատարի բուն վերջավորությունն է («դերբայական ածանցը) *ել*, իսկ *աց* և *եց* մասնիկները հիմքաձանցներն են»: Հարակատար դերբայը «վերջավորվում է *ած* և *ացած*, կամ *եցած* ածանցներով, բուն ածանցն է՝ *ած*, ենթակայականի բուն ածանցն է՝ *ող*» [տե՛ս Ղարիբյան 1961: 167-181]:

Բառակազմության հարցերին Ա. Ղարիբյանն անդրադարձել է նաև մեթոդական գրականության էջերում: Մասնավորապես «Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա» աշխատության մեջ հանգամանորեն ներկայացնելով բառակազմության ուսուցման քայլերը հինգերորդ դասարանում՝ միաժամանակ սահմանում է համապատասխան գիտակարգերն ու բերում օրինակներ: Այսպես՝ կարևորելով բառակազմության ուսուցման դերը բառապաշարի հարստացման գործում՝ նշում է, որ «...բառերի վերլուծությունը կամ մասերի տարրալուծելը հնարավորություն է տալիս բառը ստուգաբանել և այդ միջոցով հասկանալ» [Ղարիբյան 1954: 129]: Այդ գործում առանձնացնում է երկու նպատակ՝ «1.որ սովորողը կարողանա հեշտությամբ պարզել իր համար բառի կազմությունը և այդ միջոցով հասկանալ բառի իմաստը և 2.որ սովորողը կարողանա բառերով, արմատներով և ածանցներով նոր բառեր կազմել և օգտագործել իր խոսքի մեջ» [Ղարիբյան 1954: 130]:

Բառակազմության ուսուցումն առաջարկում է սկսել բառի մասին «հասկացությունը թարմացնելով»՝ գրել անիմաստ հնչյունակապակցությո-

յուններ և դրանք հակադրել իմաստ ունեցող համապատասխան միավորների հետ՝ ընդգծելով, որ դա որևէ կոնկրետ լեզվի կարող է վերաբերել: Ըստ նրա՝ «...առաջին քայլը պետք է լինի բառի արմատի մասին գաղափար տալը, դրա հետ կապված է նաև ածանցի ուսուցումը, որովհետև, երբ սովորողները գաղափար են կազմում արմատի մասին, ինքնաբերաբար հասկանալի է դառնում ածանցի նշանակությունը:վերցվում է մի ածանցավոր բառ և աստիճանաբար դուրս նետվում մեկ ածանցը մյուսի հետևից, մինչև որ մնում է արմատը. օրինակ՝ *անհավանականություն*» [Ղարիբյան 1954: 131]: Տվյալ դեպքում հասնելով «հավան» բաղադրիչին՝ սահմանվում է արմատը. «*Այսպիսով, բառի հիմնական իմաստն արտահայտող այն մասը, որն առանց իմաստը կորցնելու այլևս չի բաժանվում բաղադրիչ մասերի, կոչվում է արմատ*», ավելի համառոտ՝ «...բառի հիմնական իմաստն արտահայտող անբաժանելի (աննվազելի) մասը կոչվում է արմատ» [Ղարիբյան 1954: 132]: Ուշագրավ է այն, որ ըստ նրա՝ ուսուցիչը պետք է մի շարք բառեր գրի գրատախտակին, առաջարկի դասարանին կարդալ, մտովի բաժանել մասերի և գտնել արմատները: Աշակերտը պետք է բացատրի, թե ինչպես գտավ արմատը, իսկ եթե սխալվում է, ուսուցչի թույլտվությամբ այն ուղղում է դասարանը [տե՛ս Ղարիբյան 1954: 132-133] (ակամա ուզում ես հարցնել՝ սա սովորողակենտրոն մոտեցում չէ՞ արդյոք, որը մեր օրերում համարվում է «նորարարություն»՝ «հինը» որակելով որպես «ուսուցչակենտրոն»): Այնուհետև պետք է աշխատանք տանել արմատների անկախ և կախյալ լինելու վերաբերյալ: Արմատի մասին հաստատուն գիտելիքներ տալուց և դրանք ամրապնդելուց հետո նոր պետք է անցնել ածանցների ուսուցմանը: Այդ աշխատանքը պետք է կատարել ընտրված արմատներին մասնիկներ ավելացնելով, դրանցով պայմանավորված իմաստային տարբերությունները բացատրելով: Ուսուցիչը եզրակացնում է, որ՝ 1. Հայերենում կան հատուկ մասնիկներ, որոնք առանձին վերցրած նշանակություն չունեն, բայց համապատասխան արմատների միանալով նոր բառեր են կազմում: 2. Այդ մասնիկներն ավելանում են կա՛մ արմատի վերջից, կա՛մ արմատի սկզբից: 3. Ամեն մի արմատի ամեն տեսակ մասնիկ միացնել չի կարելի: Արմատներն ու մասնիկները իրենց բովանդակությամբ համապատասխան պետք է լինեն բառ կազմելու նպատակներին» [Ղարիբյան 1954: 135]: Ապա պետք է ասել, որ այդ մասնիկները կոչվում են *ածանցներ*, և տալ սահմանումը. «Այն մասնիկը, որը ավելացվելով

արմատի կամ բառի վրա, փոփոխում է նրա իմաստը, նոր բառ է կազմում, կոչվում է ածանց» [Ղարիբյան 1954: 135]: Հաջորդիվ ներկայացվում են վերջաձանցներն ու նախաձանցները, առանձնացվում են ժխտական նախաձանցները: Մանրամասնելով, թե ինչ կարգի առաջադրանքներ պետք է կատարել և ինչ փուլերով, այնուհետև ցույց է տալիս բարդ բառերի ուսուցման քայլաշարը [տե՛ս Ղարիբյան 1954: 137]: «Ուշադրություն հրավիրելով բարդ բառերի երկու բաղադրիչ արմատների մեջ ընկած ա ձայնավորի վրա,—շարունակում է Ղարիբյանը,— ուսուցիչը բացատրում է, որ այդ երկու արմատները կապվում են *ա* հնչյունով, որը կոչվում է հոդակապ, ըստ որում հայերենում կա միայն մեկ հոդակապ, որն է՝ *ա*» [Ղարիբյան 1954: 137]:

Փոքրապատ-փոքր տառ, խնկածաղիկ-խունկի ծաղիկ և նմանատիպ օրինակներով ցույց է տրվում, որ «առաջին արմատը լինում է միշտ երկրորդի լրացումը, հատկապես հոլովական լրացումը՝ սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական, ներգոյական հոլովներով: Ածականը սովորաբար լինում է գոյականի լրացումը [տե՛ս Ղարիբյան 1954: 138]: «Դրանից հետո արդեն ուսուցիչը կատարում է եզրակացություն. բառերը բարդվելիս հաճախ արտահայտում են լրացական կապակցություն, որի մեջ առաջին արմատը լրացնում է երկրորդը (լրացյալ), ուրեմն՝ լրացնող բառը պետք է դնել իբրև առաջին բաղադրիչ, իսկ լրացվողը՝ երկրորդ բաղադրիչ: Այդ բաղադրիչների արանքում դրվում է հոդակապը՝ *ա*» [Ղարիբյան 1954: 138]: Այս կանոնով կազմվում են իսկական բարդությունները: Ուշագրավ է բարդաձանցավոր բառերի բացատրությունը: Ըստ Ղարիբյանի՝ պետք է սովորեցնել, որ բարդ բառերը նույնպես կարող են ածանցվել, ինչպես պարզ բառերը. այդ դեպքում նրանք կոչվում են «բարդ ածանցավոր» բառեր: Դրանք որպես բարդ բառի տեսակ են ներկայացվում, և եզրույթն էլ առանձին բաղադրիչներով է գրվում՝ «բարդ ածանցավոր»: Ըստ Ղարիբյանի՝ «*Այն բարդությունները, որոնք այդ կանոններից շեղվում են, կոչվում են անիսկական*» [Ղարիբյան 1954: 139]: Ինչպես տեսնում ենք, Ղարիբյանը ոչ միայն մանրակրկիտ ներկայացնում է բառակազմության համակարգը, այլև մատնանշում է նրա ուսուցման քայլերն ու նրբությունները, որոնք այսօր էլ արդիական են և շատ օգտակար կարող են լինել դասավանդողներին առհասարակ: Ավելի ուշ «Հայ մանկավարժական լեզվաբանություն» աշխատության մեջ Ղարիբյանը գրում է. «Մի անգամ ևս վերանայելով

լեզվաբանության պատմությունը՝ հանգեցինք այն եզրակացության, որ լեզվաբանական գիտության սկզբնավորման շրջաններից սկսած մինչև մեր օրերը գոյություն է ունեցել և հետևողականորեն զարգացել ու կիրառվել է մի ուղղություն, որ մենք կոչեցինք *մանկավարժական լեզվաբանություն*» [Ղարիբյան 1969: 2]: Ղարիբյանի դիտարկմամբ՝ այս աշխատության մեջ անդրադարձ է կատարվել վերոհիշյալ ուղղության արդի խնդիրներին: Այստեղ գրեթե նույն սկզբունքով, սակայն ավելի համառոտ ներկայացվում են բառակազմության հիմնական հասկացությունները, դրանց սահմանումներն ու ուսուցման քայլերը: Ըստ կազմության՝ բառերը բաժանում է պարզ, բարդ, ածանցավոր, բարդ ածանցավոր տեսակների, տալիս է դրանց սահմանումները: «Պարզ են կոչվում արմատական բառերը, որոնց կազմությունը *անձեռնմխելի է և որոնցից առանց իմաստի աղճատման ոչ մի հնչյուն առնել չի կարելի*: Օրինակ՝ *պատր, տուն, սեղան* և նման բառերը եթե որևէ հնչյուն կորցնեն, կորցնում են նաև իրենց արտահայտած իմաստը, դադարում են բառ լինելուց» (ընդգծումները՝ Վ.Ն.) [Ղարիբյան 1969: 115]: *Անգործություն* բառի օրինակով ցույց է տալիս, որ կան բառեր էլ, «որոնք բաղկացած են արմատից և մասնիկներից, որոնց կորուստը չի զրկում արմատն իր իմաստից», և դրանք ածանցավոր բառերն են [տե՛ս Ղարիբյան 1969: 116]: Համառոտ ներկայացնում է նախածանցներն ու վերջածանցները, դրանց ծագումն ու առաջացումը, կենսունակ և ոչ կենսունակ լինելը, մոտավոր քանակը, քերականական արժեքը՝ նկատի ունենալով տարբեր խոսքի մասեր կերտելու առանձնահատկությունը, իմաստային նրբերանգները ևն [տե՛ս Ղարիբյան 1969: 116-118]: Բարդ բառերի մասին գրում է. «*Բարդ բառերը կազմված են լինում երկու և ավելի արմատներից: Հայոց լեզուն բարդություններ կերտելու շեշտված հատկություն ունի, այդ պատճառով էլ նրա բառապաշարի մեջ բարդությունները կազմում են բավական մեծ թիվ: Բարդության միջոցով հայերենը հնարավորություն ունի շար ավելի բառեր թարգմանելու, քան շար այլ լեզուներ*», «*Հայերենի բառաբարդությունը կատարվում է երկու կանոնով՝ ձևաբանական և շարահյուսական: Ձևաբանական բարդությունները նրանք են, որոնք արտահայտում են հոլովական կապակցությունների իմաստ և վերջին հաշվով, նույնպես շարահյուսական կապակցություններ են....*» [տե՛ս Ղարիբյան 1969: 118-120]: Բերում է համապատասխան օրինակներ՝ ներկայացնելով իսկական, հարադիր, կցական բարդությունները:

Եզրակացություն

Ա. Ղարիբյանի ներդրումը բառակազմության ոլորտում հիմնականում դասականի հարցերի համակարգումն ու մշակումն է:

Ղարիբյանի մոտեցումները ժամանակակից լեզվաբանների համեմատությամբ հիմնականում չեն տարբերվում: Նա նույնպես, ինչպես Գ. Սևակը, ընդունում է բառերի բարդացման ցանցի տեսակը, թեև ձևակերպումների առումով կան տարբերություններ: Սակայն Ղարիբյանի մոտեցումն այլ է. «*Երբ բարդ բառը ստանում է ածանց, կոչվում է բարդ ածանցավոր (գրավարժ-ություն են)*» [տե՛ս Ղարիբյան 1961: 61]:

Ուշագրավ է նաև ածանց չընդունող բարդ բառերի վերաբերյալ դիտարկումը, ըստ որի՝ այդպիսի բառերն անհսկական բարդություններ պետք է համարել: Ղարիբյանը, ինչպես նախորդող լեզվաբանները, շարունակում է ածանց համարել դերբայական վերջավորությունները (*-ելի, -ալու* են)՝ դրանք դիտարկելով իբրև անորոշի հիմքին ավելացող մասնիկներ:

Գրականության ցանկ

1. Abrahamyan A. A. S. Gharibyan (Ts'ndyan 80-amyaki ar'thiv). "Patmabanasirakan handes", h. 2, Yerevan, 1979, page 17-27. [Abrahamyan A. A. S. Gharibyan (On the Occasion of the 80th Anniversary). "Historical-Philological Journal", vol. 2, Yerevan, 1979, pp. 17-27.]

2. Aghayan E. B. Hay lezvabanut'yan patmout'yan, hator 2. Yerevan State University Press, Yerevan, 1962, 286 pages. [Aghayan E. B. History of Armenian Linguistics, Volume 2. Yerevan State University Press, Yerevan, 1962, 286 pages.]

3. Aghayan E. B. Endzhorov u haykakan barbaragitut'yan. Yerevan State University Press, Yerevan, 1984, 372 pages. [Aghayan E. B. General and Armenian Lexicology. Yerevan State University Press, Yerevan, 1984, 372 pages.]

4. Gharibyan A. Hayots' lezvi dasavandman metodika, dzernark mijndark' dprots'neri usuts'ich'neri yev mankavardakan buheti usanoght'yan hamar. Haypethrat, Yerevan, 1954, 563 pages. [Gharibyan A. Methodology of Teaching the Armenian Language, a Handbook for Secondary School Teachers and Students of Pedagogical Universities. Haypethrat, Yerevan, 1954, 563 pages.]

5. Gharibyan A. Hayots' lezv, dasagir'k V-VII dasaranneri hamar. 9-rd verahrat, Haypetusmankhrat, Yerevan, 1961, 282 pages. [Gharibyan A. Armenian Language, Textbook for Grades V-VII. 9th Edition, Haypetusmankhrat, Yerevan, 1961, 282 pages.]
6. Gharibyan A. Hay mankavardakan lezvabanut'yan. "Loys" hrat, Yerevan, 1969. [Gharibyan A. Armenian Pedagogical Linguistics. "Loys" Press, Yerevan, 1969.]
7. Sevak G. Zhamanakakank' hayereni hamarrot' patmout'yan, GA hrat, Yerevan, 1948, 276 pages. [Sevak G. A Brief History of Modern Armenian Language, Academy of Sciences Press, Yerevan, 1948, 276 pages.]
8. Sevak G. Zhamanakakank' hayots' lezvi dasavandts'vats', Yerevan State University Press, Yerevan, 1955, 357 pages. [Sevak G. Course on Modern Armenian Language, Yerevan State University Press, Yerevan, 1955, 357 pages.]

ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ. ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ. DISCUSSIONS

ԲԱՌԵՐԻ ՆՈՐ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅ ՄԻՋԱԴԱՐՅԱՆ ԲԺՇԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ (ԳՐԻԳՈՐԻՍ, «ՔՆՆՈՒԹԻՒՆ ԲՆՈՒԹԵԱՆ ՄԱՐԴՈՅ ԵՒ ՆՈՐԻՆ ՑԱՒՈՑ», «ԲԺՇԿԱՐԱՆ ՁԻՈՅ ԵՒ ԱՌՀԱՍԱՐԱԿ ԳՐԱՍՏՆՈՅ») ՀԱՍՄԻԿ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ

Ավագ գիտաշխատող, Բ.Գ.Թ.

hasmiktadevosyan333@gmail.com

DOI: 10.57236/1829-0183-2025.1(32)-51

Համառոտագիր

Միջնադարյան բժշկարանները կարևոր սկզբնաղբյուր են միջին հայերենի բառապաշարի ուսումնասիրության համար: Բազմաթիվ նորակազմություններից և փոխառություններից բացի՝ բժշկարաններում կան նաև հին հայերեն բառերի (նաև միջինհայերենյան և բարբառային)՝ նոր իմաստներով կիրառություններ: Դրանք առօրյա-խոսակցական բառեր են, որոնք հիմնականում նմանության զուգորդությամբ կիրառվել են նոր նշանակությամբ, բայց շարունակել են պահպանել իրենց հիմնական իմաստները:

Նպատակ ունենալով բացահայտելու միջին հայերենի շրջանում գործածված իմաստային նոր դրսևորումները և պարզելու դրանց հետագա զարգացման ընթացքը՝ հոդվածում դիտարկվում են նոր բառիմաստներ, որոնք թերևս առաջին անգամ գործածվել են XIII դ. երկու՝ «Քննութիւն բնութեան մարդոյ եւ նորին ցաւոց» (Գրիգորիս) և «Բժշկարան ձիոյ եւ առհասարակ գրաստնոյ» բժշկարաններում: Շարադրված լինելով միջին հայերենով՝ հիշյալ բժշկարանները երևան են հանում բառիմաստային ուշագրավ նոր դրսևորումներ: Համագործածական բառերի զգալի մասն այստեղ գործածվել է բժշկական տերմինի (կազմախոսական բառեր, հիվանդության անվանումներ) նշանակությամբ: Քանի որ նոր բառիմաստների գերակշռող մասն արձանագրված է «Միջին հայերենի բառարան»-ում հենց քննվող բժշկարանների վկայմամբ, նոր բառիմաստները ներկայացվում են ըստ այդ բառարանում վկայված լինելու՝ առանց իմաստափոխության մեջ ընդունված դասակարգումների: Ըստ այդմ՝ առանձնացվում են քննվող իմաստների երկու խումբ՝ «Միջին հայերենի բառարան»-ում վկայված բառեր և «Միջին հայերենի բառարան»-ում չարձանագրված բառեր:

Ուսումնասիրությամբ պարզվում է, որ նոր բառիմաստները բնորոշ են միջին հայերենին և չեն անցել արդի հայերենին: Դրանցից երկուսը միայն տերմինային նշանակությամբ կիրառվել են նաև XV դարում, երկու բառ համանման իմաստներով պահպանվել են հայերենի որոշ բարբառներում, մնացածը բնորոշ են նշված բժշկարաններին: Քննված նոր իմաստներից երեքը արձանագրված չեն «Միջին հայերենի բառարան»-ում:

Բանալի բառեր և բառակապակցություններ. նոր բառիմաստ, իմաստափոխություն, նմանության զուգորդություն, գրաբար, միջին հայերեն, բարբառ, բժշկարան, բժշկական տերմին:

**NEW WORD-MEANINGS ACCORDING TO THE MEDICAL BOOKS
("ANALYSIS OF THE NATURE OF MAN AND HIS AILMENTS"
(GRIGORIS), "BOOK OF HORSE CURES")**

HASMIK TADEVOSYAN

NAS RA Institute of Language after H. Acharyan

Senior researcher, PhD

hasmiktadevosyan333@gmail.com

Abstract

Medieval medical books are an important source for presenting the vocabulary of Middle Armenian. In addition to numerous neologisms (newly formed words) and borrowings, new meanings of old Armenian words (as well as Middle Armenian and dialectal) are also found in these medical books. These are everyday colloquial words that have generally been used with a new meaning due to their similarity, but they have continued to preserve their primary meanings.

This article discusses new word-meanings, which were probably used for the first time in the 13th-century medical books, "*Analysis of the Nature of Man and His Ailments*" (Grigoris) and "*Book of Horse Cures*". The aim is to identify new semantic manifestations used in the Middle Armenian language and to clarify the process of their further development. These medical books, written in Middle Armenian, reveal remarkable new manifestations of word meanings. Most of the collaborative words are used here as medical terms (anatomical words, disease names). Since the majority of new semantic manifestations are recorded in the "*Dictionary of Middle Armenian*" based on the evidence of the discussed medical books, the new word-meanings are presented according to their evidence in that dictionary, without the classifications accepted in semantic change. Accordingly, two groups of word-meanings are distinguished: words recorded in the "*Middle Armenian Dictionary*" and words not recorded in the "*Middle Armenian Dictionary*".

The study shows that the new word-meanings, being typical of Middle Armenian, did not pass into New Armenian. Only two of them were used as terms in the 15th century; two words have been preserved with similar meanings in some Armenian dialects, while the others are specific to the mentioned medical books. Three of the examined new meanings are not recorded in the "*Dictionary of Middle Armenian*".

Keywords and phrases: new word-meaning, semantic change, combination of similarities, Grabar, Middle Armenian, dialect, medical book, medical term.

**НОВЫЕ ЛЕКСИЧЕСКИЕ ЗНАЧЕНИЯ ПО ЛЕЧЕБНИКАМ
(“АНАЛИЗ ПРИРОДЫ ЧЕЛОВЕКА И ЕГО НЕДУГОВ” (ГРИГОРИС),
“ЛЕЧЕБНИК ЛОШАДЕЙ И ВООБЩЕ ВЬЮЧНЫХ ЖИВОТНЫХ”)
АСМИК ТАДЕВОСЯН**

Институт языка им. Р. Ачаряна НАН РА
Старший научный сотрудник, к.ф.н.
hasmiktadevosyan333@gmail.com

Аннотация

Средневековые лечебники являются важным источником для представления словарного запаса среднеармянского языка. Помимо многочисленных новообразований и заимствований, в лечебниках встречаются и древнеармянские слова (также среднеармянские и диалектные) с новыми значениями. Это повседневные разговорные слова, которые в основном из-за их сходства использовались в новых значениях, но продолжали сохранять свои основные значения.

В статье рассматриваются новые лексические значения слов, которые, возможно, впервые были использованы в двух лечебниках 13-го века: *«Анализ природы человека и его недугов»* (Григорис) и *«Лечебник лошадей и вообще вьючных животных»*. Целью является выявление новых семантических проявлений, используемых в среднеармянском языке, и выяснение процесса их дальнейшего развития. Вышеупомянутые лечебники, написанные на среднеармянском языке, выявляют интересные лексические новые проявления. Значительная часть разговорных слов здесь употребляется в значении медицинского термина (анатомические слова, названия болезней). Поскольку большинство новых семантических проявлений зафиксировано в *«Словаре среднеармянского языка»* на основе свидетельств рассматриваемых лечебников, то и новые лексические значения представлены согласно их свидетельствам в этом словаре, без классификаций, принятых в изменении значения.

Соответственно выделяются две группы рассматриваемых значений: слова, зафиксированные в *«Среднеармянском словаре»*, и слова, не зафиксированные в *«Среднеармянском словаре»*.

Исследование показывает, что новые лексические значения, будучи типичными для среднеармянского языка, не перешли в новоармянский язык. Только два из них использовались в значении термина в 15-ом веке. В некоторых армянских диалектах сохранились два слова с похожими значениями, остальные типичны для упомянутых лечебников. Три из рассмотренных новых значений не зафиксированы в *«Среднеармянском словаре»*.

Ключевые слова и словосочетания: новое лексическое значение, изменение значения, сочетание сходства, грабар, среднеармянский язык, диалект, лечебник, медицинский термин.

Ներածություն

Հայոց լեզվի պատմության միջին շրջանը (XII-XVI դդ.) ուշագրավ է բառապաշարի հարստացման, իմաստային զարգացման ու քերականական փոփոխությունների տեսանկյունից: Միջնադարում հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցած հասարակական տեղաշարժերն իրենց անմիջական անդրադարձն են ունենում հայերենի բառապաշարի վրա և նպաստում վերջինիս զարգացմանն ու հարստացմանը: Թեև միջին շրջանում մեր լեզվում ակտիվ կիրառությամբ սկսում են աչքի ընկնել արաբերեն, պարսկերեն, թուրքերեն և եվրոպական լեզուների շատ բառեր, սակայն բառապաշարը շարունակում է զարգանալ նախ և առաջ հայերենի ներքին հնարավորություններով՝ բառակազմությամբ և իմաստափոխությամբ:

Միջին հայերենի ամբողջական բառապաշարը ներկայացնելու տեսանկյունից շատ կարևոր սկզբնաղբյուր են հատկապես միջնադարյան բժշկարանները: Ժամանակի հայտնի բժիշկների կողմից շարադրված այդ գրքերում բազմաթիվ փոխառությունների ու նորակազմությունների կողքին առկա են ինչպես հին հայերեն, այնպես էլ միջին հայերեն և բարբառային առօրյա-խոսակցական բառեր, որոնք հիմնականում *նմանության զուգորդությամբ* [Աղայան 1984: 79] կիրառվել են նոր նշանակությամբ:

Ուսումնասիրության շրջանակում քննվել են XIII դարի երկու բժշկարաններ՝ Հերացու հետևորդ, բժշկապետ Գրիգորիսի «Քննութիւն բնութեան մարդոյ եւ նորին զանազան կրից և պատճառանաց ցաւոց»-ը [Գրիգորիս 1962], որը միջնադարյան հայ բժշկագիտության ընդհանուր ախտաբանության տեսական ու գործնական հարցերին նվիրված կարևոր աշխատանք է, և «Բժշկարան ծիոյ եւ առհասարակ գրաստնոյ» [Բժշկարան ծիոյ 1980] ձիաբուժական ձեռնարկը (1296-1298), որը Սմբատ թագավորի հրամանով կազմել է ասորի բժիշկ Ֆարաջը, իսկ գրելիս նրան օգնել է Թորոս քահանան: Նշենք, որ հիշյալ բժշկարաններում արձանագրվում են առաջին անգամ կամ եզակի վկայությամբ գործածված բազմաթիվ բառեր, որոնց զգալի մասը բժշկական տերմինի արժեք ունեցող ախտանուններ, դեղանուններ և կազմախոսական բառեր են:

Նոր բառիմաստների առաջանալը պայմանավորված է իմաստափոխական տարբեր երևույթներով, որոնց հիմքը հասկացությունների առնչությունն է: Հայտնի է, որ «միջին հայերենի իմաստափոխության դրսևորումները գլխավորապես պայմանավորված են բառիմաստի ընդլայնման և նեղացման երևույթներով» [Ղազարյան 2001: 81-82]: Միջնադարյան բժշկարաններում բառերը շարունակում են պահպանել իրենց գրաբարյան հիմնական իմաստները, սակայն ձեռք են բերում նաև նոր, հաճախ ավելի նեղ՝ ախտանվան, կազմախոսական բառի կամ բժշկությանն առնչվող այլ նշանակություն:

Սույն հոդվածում դիտարկվում են 14 նոր բառիմաստներ, որոնք, թերևս առաջին անգամ գործածվել են XIII դ. վերոհիշյալ բժշկարաններում: Քննությունը կատարվել է ինչպես համաժամանակյա (նկարագրական, վերլուծական), այնպես էլ տարաժամանակյա (պատմահամեմատական) մեթոդների կիրառմամբ:

Նշենք, որ բառիմաստային նոր դրսևորումների գերակշռող մասն արձանագրված է «*Միջին հայերենի բառարան*»-ում (այսուհետև՝ ՄԲ) [Ղազարյան, Ավետիսյան 2009] հենց քննվող բժշկարանների վկայմամբ, եզակի հանդիպող բառիմաստների օրինակները համընկնում են մեր կողմից բերվողներին: Վերոնշյալ հանգամանքը հաշվի առնելով՝ նոր բառիմաստները ներկայացնում ենք ըստ այդ բառարանում վկայված լինելու, առանց իմաստափոխության մեջ ընդունված դասակարգումների [Աղայան 1984: 101-107]: Ըստ այդմ՝ առանձնացնում ենք քննվող իմաստների երկու խումբ.

1. «Միջին հայերենի բառարան»-ում վկայված բառեր

Բաղարջ բառը գրաբարում ունի գոյականական «անթթմոր հաց» և ածականական «անխմոր, չխմորված» իմաստները [Աւետիքեան և այլք 1836-1837ա: 426]: Գրիգորիսի բժշկարանում հիմնական իմաստից բացի *բաղարջը* միջին հայերենին բնորոշ *բաղարճ* հնչյունական տարբերակով կիրառվել է նաև «չմարսված, անմարս» մակբայական նշանակությամբ. «...զի չկարէ փոխել զկերակուրն զոր մարսէ, և զոր ելնէ՝ հում ելնէ և *բաղարճ*» [Գրիգորիս 1962: էջ 146]: Նույն իմաստով գտնում ենք նաև *բաղարճնալ* «չմարսվել» բայը. «Յերբ չհալի կերակուրն, նայ *բաղարճնայ* և հում հասանի ի լերդն» [Գրիգորիս 1962: 149]:

Բոլոր բառը գրաբարում բազմիմաստ է և ունի ածականական «ամբողջ», «կլոր», գոյականական «շրջան, պտույտ», «ամբողջություն»,

«ծաղկի կոկոն» իմաստները [Աւետիքեան և այլք 1836-1837ա: 500]: Հ. Ա-
 ճառյանը նշում է նաև «զգեստի գնդաձև զարդ» և «գրի մի տեսակ, բոլո-
 րագիր», որից էլ ծագում են *բոլորել, շուրջը պատել* բառերը [Աճառյան
 1971: 461]: «Բժշկարան ձիոյ»-ում «շրջան, պտույտ» իմաստի ընդլայն-
 մամբ գործածվել է «ձիու վրա տեղ-տեղ շրջանաձև ոլորված մազեր»
 նշանակությամբ. «Յաղագս գուներոյն և նշաննոյն ու *բոլորնոյն*, որ կե-
 նայ ի գրաստն»։ «*Բոլորնին*, որ կենայ ի գրաստն, նա տասն և ութ են։
 ...նայ մէկն այն *բոլորն* է, որ ի շլինքն խեչ ճտացն կենայ» [Բժշկարան
 ձիոյ 1980: 55, 58]: *Բոլոր*-ին զուգահեռ բժշկարանում նշված իմաստով
 կիրառվել է նաև *պտոյտ* գոյականը. «Վասն գոյներոյ եւ *պտուտնոյ* ի
 ձին»։ «Վասն *պտուտնոյ*, որ ի մազն լինի»։ [Բժշկարան ձիոյ 1980: 37,
 38]: *Պտոյտ* բառի համար «ոլորված մազեր» իմաստը ևս նոր է, քանի որ
 վերջինս գրաբարում ունի միայն «հորձանք, ջրապտույտ» իմաստը
 [Աւետիքեան և այլք 1837: 665]: Նկատենք, որ *պտուտնոյ*՝ համանման
 «գազաթի վրա մազերի գալարապտույտ աճի բևեռ» նշանակությունը կա
 նաև Սեբաստիայի բարբառում [ՀԼԲԲ 2008: 130]:

Ել բառը գրաբարում բազմիմաստ կիրառություններ ունի. «դուրս
 ելնելը», «ելնելու տեղ», «վերջ, վախճան», «միջոց, հնարք», «արևի կամ
 լուսնի ծագում», «ծախս», «բխում», «հրաժարվելը, հեռանալը» և այլն
 [Աւետիքեան և այլք 1836: 648]: Միջին հայերենում վերջիններիս
 ավելանում է նաև «կղանք, արտաթորանք» իմաստը [Ղազարյան, Ավե-
 տիսյան 2009: 180], որը հանդիպում է Գրիգորիսի բժշկարանում. «Եթէ
 այս *եյս*, որ ելնէ՝ սակաւ խառնուրդ ունէ ի յարենէ և ի շարաւէ, նայ գանն
 ի յանօթի աղիքն է»։ «..զի կարէ լինել, որ ուտելն քիչ է և *եյն* շատ, և կարէ
 լինել՝ որ ուտելն շատ է և *եյն* քիչ» [Գրիգորիս 1962: 139, 183]: Նկատենք,
 որ «աղբ, կղանք» իմաստը *եյ*-ի հոգնակի *եյք* ձևի համար նշում է նաև Ն.
 Բյուզանդացին՝ բերելով հետևյալ օրինակը. «Եթէ անկանի ի վերայ *եյից*
 իշոյ եւ կամ այլ աղտեղի իրաց» [Բյուզանդացի 2000: 180]:

Ջարկ գոյականը գրաբարյան «հարված»-ից բացի, միջին հայերե-
 նում ունի նաև «վերք» իմաստը [Ղազարյան, Ավետիսյան 2009: 201]:
 Մեր քննության առարկա երկու բժշկարաններում *-ք* հոգնակերտով՝
 զարկք ձևով, բառը գործածվում է «աչքի արյունազեղում» բժշկական
 տերմինի նշանակությամբ. «Սըպըլ և տղուկն և *զարկք*՝ որ ի յաչուն դի-
 պի»։ «Եւ *զարկքն* ևս արին է, զի երակքն կտրին ի զարկուցն. և յերբ
 երակքն կտրին, նայ սպիտկուց աչիցն կարմրի» [Գրիգորիս 1962: 78,

80]: «Յաղագս տարֆայի, որ է *զարկք* ի յաչքն» [Բժշկարան ձիոյ 1980: 149]: ՄՀԲ-ն *զարկքի* համար առանց հստակեցման նշում է «աչքի հիվանդություն» իմաստը [Ղազարյան, Ավետիսյան 2009: 201], բայց նկատի ունենալով, որ վերջինս գործածվել է իբրև արաբերեն *տարֆայ* (*tarfa, tārāfa*) բժշկական տերմինին համարժեք [Ղազարյան, Ավետիսյան 2009: 753], կարծում ենք՝ ճիշտ է շեշտել հենց աչքի կոնկրետ հիվանդության տեսակը՝ «աչքի արյունազեղում»: Երկու դար անց Ա. Ամասիացին տերմինը կիրառել է նաև իբրև «սալջարդ». «Օգտէ *զարկուց* և ջղացաւութեան»: «Թէ ի ջուրն վարդի տերև խառնես եւ Գ տարպա ի բաղանիքն ւաժես՝ *զարկուց* որ յանձ սեւցել լինի, տանի» [Ամասիացի 1926: 335, 454]:

Ճաղ բարբառային բառը Հ. Աճառյանը փոխառված է համարում վրացերեն ჯაღი *ճալի* «ցից, սայլի կողքի ճաղերը» բառից, նշում է նաև, որ ուտիերենն ունի «ցանկապատ, վանդակապատ» իմաստը, նույնը՝ նաև թուրքերենը: Հնագույն վկայությունը նա համարում է XV դարը (Թլկուրանցի, 49), թեև նշում է, որ «անշուշտ, շատ ավելի հին է, ինչպես ցույց է տալիս դ ձայնը՝ փխ. լ» [Աճառյան 1977: 178]: «Բժշկարան ձիոյ»-ն հաստատում է Աճառյանի ենթադրությունը, քանի որ այստեղ արձանագրվում է *ճաղ*-ի նոր իմաստով կիրառությունը: Միջին հայերենի համար նշվում են երեք նոր իմաստներ՝ «սրունքի երկու ոսկորները՝ ոլոք և նրբուլոք», «գուլպա գործելու շյուղ», «փայտե ձող» [Ղազարյան, Ավետիսյան 2009: 467], որոնք բոլորն էլ *ճաղ*-ի նմանությամբ են կիրառվել: Առաջին՝ կազմախոսական «սրունքի ոսկոր» իմաստի համար ՄՀԲ-ն բերում է հենց «Բժշկարան ձիոյ»-ի օրինակները: Պետք է նկատենք, սակայն, որ, ինչպես և պարզվում է բնագրի օրինակներից, նոր բառիմաստը ոչ թե կոնկրետ «սրունքի ոսկոր»-ն է, այլ առհասարակ «ոսկոր», որն ունի նաև բազուկը. «....ջղերն փըռած ի վրայ բազկացն յերեվան և *ճաղերն* ի թաղման»: «Եւ կայ, որ խլի բազկին *ճաղն*: Եւ ոմանք մի ասցել են, թէ չէ այն բազկին *ճաղն*, ապա այն երակ է ու ի դուրս կու գա»: «Եւ թէ *ճաղներն* յայն տեղն ելնէր, ուր *ճաղն* կայր, և ինքս պեղծ ցաւ է, և յոտքն այլ պեղծ ցաւ է, քան ի ձեռքն» [Բժշկարան ձիոյ 1980: 46, 99]: Նկատենք նաև, որ Բ. Չուգասցյանը բժշկարանի քննական բնագրին կցված բառարանում *ճաղ*-ի համար նշում է «բազկոսկր և սրունքի երկու ոսկորները՝ ոլոք և նրբուլոք» իմաստները [Բժշկարան ձիոյ 1980: 211]: Նշենք, որ *ճաղ*-ի բոլոր նշանակությունները պահպանվել են հայերենի բարբառներում, իսկ

Ղարաբաղի և Նոր Նախիջևանի բարբառներն ունեն «կողոսկր» իմաստը [ՀԼԲԲ 2004: 364]:

Շարադրութիւն գոյականը, որ գրաբարում ունի «կապակցություն», «շարադրանք», «դրություն» և «հարաբերություն» իմաստները [Աւետիքեան և այլք 1837: 469-470], Գրիգորիսի բժշկարանում քանիցս գործածվել է «համաչափություն, համաչափ լինելը» նշանակությամբ. «....նա երակնին յուլանան շարժողականքն, և ոչ ունենան *շարադրութիւն* ի շարժման և վերջն այն նեղութեանս ուժովնայ ցան և ապա յայն ժամն առնուն շարժողական երակքն *շարադրութիւն* շարժմանցն»: «....և չունենայ երակն զառողջութեան *շարադրութիւն*»: «Շնչալն յոյլ և վատուժ, և ոչ ունի *շարադրութիւն* շունչն»: «.... և չունի երակն *շարադրութիւն*, այլ մի և երկու, երկուք և մի» [Գրիգորիս 1962: 6, 14, 58, 68]: Ասվածը հստակեցնելու համար նշենք, որ վերոբերյալ օրինակներում *երակը* կիրառվել է միջին հայերենին բնորոշ «պուլս, սրտազարկ» իմաստով [Ղազարյան, Ավետիսյան 2009: 186]:

Փառաւոր ածականը գրաբարում հայտնի է իր «փառք ունեցող». «մեծանուն», «ազնվական», «շքեղ» իմաստներով [Աւետիքեան և այլք 1837: 934]: Գրիգորիսի բժշկարանում բառը բազմիցս գործածվում է «կենսական կարևորություն ունեցող, գլխավոր» նշանակությամբ. «Եւ թէ հանդիպի ինքս ի *փառաւոր* անդամսն լինել, որ կայարանքն են կենդանութեան մարդոյն, նա այն ժամն զմահն ցուցանէ»: «Եւ արինն ի կրծոցն լինի կամ ի թոքէն, կամ ի յայլ *փառաւոր* անդամոցն»: «Եթէ ծայրն (ելունդի) ի դրուցէ լինի և մորթին, նայ բարի է, զի ի *փառաւոր* անդամոցն ի յետ է» [Գրիգորիս 1962: 45, 114, 211]:

Անխել ածականը գրաբարի բառարաններում արձանագրված չէ, չնայած որ դրանով բաղադրված *անխելութիւն* «անխելքություն» գոյականը առկա է [Աւետիքեան և այլք 1836: 160, Ղազարեան 2000: 96]: Բառը «անխելք, հիմար» իմաստով ունի միջին հայերենը [Ղազարյան 2009: 54]: Գրիգորիսի բժշկարանում *անխել*-ը մեկ անգամ գործածվել է նաև «անգիտակից, գիտակցությունը կորցրած» նշանակությամբ. «Եւ այլ նշան այս նեղոյս, որ լինի ի քուն և ընդ արթուն ի մէջ, և աչքն ի բաց և *անխել*» [Գրիգորիս 1962: 59]: Նույն իմաստով բառը XV դարում կիրառել է նաև Ամիրդովլաթ Ամասիացին. «Իր հունտն աղէկ է *անխել* մարդոց» [Ղազարյան 2009: 453]:

Ջուգաւոր ածականը ևս առկա չէ գրաբարի բառարաններում, սակայն դրանից կազմված *զուգաւորութիւն* գոյականը «զուգություն, հավասարություն, չափակցություն» արձանագրված է [Աւետիքեան և այլք 1836: 749, Ղազարեան 2000: 449]: Ըստ Ստ. Մալխասյանցի՝ իմաստով համարժեք լինելով *զուգ* բառին՝ *զուգաւոր*-ը նշանակում է «երկու նման իր՝ որոնցից մէկը միւսին լրացնում է, կամ որոնք նկատվում են իբրև մի ամբողջութիւն» [Մալխասեանց 1944: հ. 2, 36]: Գրիգորիսի բժշկարանում *զուգաւոր*-ը կիրառվել է նաև «խառն, տարբեր բաղադրություն ունեցող» [Ղազարյան 2009: 209] իմաստով. «Եւ թէ ժամանակ տաքութեանն յամէ, և ոչ հատնի ի յառաջին ատուրսն և նմանէ նշանին ի *զուգաւոր* տաքութեանն» «Կայ որ լինի ի *զուգաւոր* մաղծէ»: «....թէ միաւոր նեղն ի պաղութենէ լինի. և խառնեցաւ յինքն պղղամն՝ եղավ *զուգաւոր*» [Գրիգորիս 1962: 14, 52, 126]:

Շողհար ածականը միջին հայերենում և բարբառներում գործածվում է «արևահար» նշանակությամբ [Ղազարյան 2009: 600, ՀԼԲԲ 2007: 268]: Գրիգորիսի բժշկարանում հանդիպում է նաև «բշտի տեսակ» գոյականական իմաստով. «Եւ այլ ազգ յայս շտերոյս, որ լինին մանր և նմանին ի մանր կորեկ, իւր ընծայումն ի նօսր և ի կծու խարտէշ մաղծէ [լինի], որ խառնի ընդ արիւնն զոր ասեն *շողհար* և ինքս ի յամառն շատ լինի» [Գրիգորիս 1962: 40]: *Շողհարի* համար նշված իմաստը՝ բժշկական տերմինի նշանակությամբ արձանագրում է միայն ՄՀԲ-ն հենց վերը բերված օրինակով: Բնագրից կարելի է ենթադրել միայն, որ տվյալ հիվանդության կամ բուշտի առաջացումը:

2. «Միջին հայերենի բառարան»-ում չարձանագրված բառեր

Ստամոք(ս) կազմախոսական բառը, որ փոխառվել է հունարենից [Աճառյան 1979: 269], գրաբարում ունի «մարսողության գործարան», նաև լայն առումով՝ «կուրծք, փոր, որովայն» իմաստները: Գրիգորիսի բժշկարանում նշվածներից բացի, *ստամոք*-ը գործածվել է «ախորժակ» նշանակությամբ. «Եւ այս նեղս *ստամոք* ոչ ունենայ բնաւին»: «....և այսոր նշանն է թուլութիւն ձեռացն և ոտիցն, և չունենայ *ստամոք*»: «....և *ստամոքաց* պակասելն, և շէն *ստամոքն*, և խափանել ստամոքացն, և ցավել սրտին դրգալին, և ծարաւելն, և մնալն կերակրոյն ի վերայ ստամոքացն բերնին, և այս զոր ասացաք, ստամոք բերնին նեղերն են»: «...քիչ *ստամոք*, և ծարաւ յոլու. և այս խարտէշ մաղծին նշանքն են» [Գրիգորիս 1962: 107, 130, 125, 181]:

Ոռ գոյականը, որ բնորոշ է ժողովրդախոսակցական լեզվին և բարբառներին [ՀԼԲԲ 2007: 323], գրավոր մատենագրության մեջ հանդիպում է միջին հայերենի շրջանում: «Նոր հայկազյան բառարանը» բառը բերում է ռամկորեն նշումով՝ «նստատեղ», «առարկայի տակ» իմաստներով [Աւետիքեան և այլք 1837: 517]: Աճառյանի հավաստմամբ վերջինս բնիկ հայերեն բառ է [Աճառյան 1977: 564]: ՄՀԲ-ն ոռ-ի համար նշում է «առարկայի տակ», «հետույք», «հետանցք, սրբան» նշանակությունները միայն [Ղազարյան 2009: 610]: «Բժշկարան ձիոյ»-ում, սակայն, նշվածներից բացի, բառը մեկ անգամ հանդիպում է նաև կազմախոսական «աղիք» իմաստով. «Վասն որ ոռն ի դուրս գայ և շրջի» [Բժշկարան ձիոյ 1980: 40]: Նկատենք, որ տվյալ բժշկարանում նույն նշանակությամբ կիրառվել է նաև *ոռաղի* բառը. «Մտո՛յ զձեռքս ընդ գրաստուն *ոռաղին* ու սրբէ» [Բժշկարան ձիոյ 1980: 112], որը վկայված է ՄՀԲ-ում հենց տվյալ օրինակով [Ղազարյան 2009: 610]:

Միաւոր ածականը գրաբարում բազմիմաստ բառ է, ունի «միայն մի», «միասնական», «միայնակ», «մեկ անձի մեջ միավորված» «միօրինակ» իմաստները [Աւետիքեան և այլք 837: 273]: Գրիգորիսի բժշկարանում *միաւոր*-ը ի հակադրություն *զուգավորի*՝ կիրառվել է նաև «մեկ պատճառ, հիմք ունեցող» նշանակությամբ. «և կամ լինի *միաւոր* ցաւ, որ չունի զուգաւորութիւն հետ այլ անդամոցն: Եվ այն, որ *միաւոր* գլխայցաւութիւն է, նայ կայ՝ որ է յատուկ ցաւն ի գլուխն միայն»: «...*միաւոր* նեղերն այս են, զոր իմաստունքն ասացին, թէ որ ի տաքութենէ լինի կամ ի պաղութենէ»: «Իսկ վատելն ստամոքացն և սակաւ ուտելն պատճառն այն է, զի *միաւոր* տաքութիւնն թուլցնէ զստամոքբերանն և արծակէ» [Գրիգորիս 1962: 51, 126, 129]:

Եզրակացություն

«Քննության առարկա բժշկարաններից առանձնացված նոր բառիմաստները բնորոշ են միջին հայերենին և չեն պահպանվել արդի հայերենի բառապաշարում: *Անխել* և *զարկ* («սալջարդ») բառերը, իբրև տերմին, կան նաև XV դ. (Ամասիացի, «Անմգիտաց անպէտ»), *ճաղ* և *պտուր* (*պտոյր*) բառերը կազմախոսական նշանակությամբ կան Ղարաբաղի, Նոր Նախիջևանի և Սեբաստիայի բարբառներում: Գրիգորիսի բժշկարանում սկզբունքորեն նոր իմաստներով են կիրառվել *ել*, *շարադրութիւն*, *զուգաւոր*, *միաւոր*, *փառաւոր* և *ստամոք* բառերը, մյուս բառիմաստները հանդիպում են մեկ-երկու կիրառություններով: Քննված նոր

բառիմաստներից երեքը՝ *ստրամոքս* «ախորժակ», *ոռ* «աղիք» և *միավոր* «մեկ պատճառ ունեցող», արձանագրված չեն «*Միջին հայերենի բառարան*»-ում:

Գրականության ցանկ

1. Aghayan, E. B. Endzhorov yev haykakan barbaragitut'yan. Yerevan: Yerevani hamalsarani hratarakchut'yun, 1984. [Aghayan, E. B. General and Armenian Lexicology. Yerevan: Yerevan University Press, 1984.]
2. Acharian, H. H. Hayeren armatakan barraran, h. 1, Yerevan: Yerevani hamalsarani hratarakchut'yun, 1971. [Acharian, H. H. Armenian Radical Dictionary, vol. 1, Yerevan: Yerevan University Press, 1971.]
3. Acharian, H. H. Hayeren armatakan barraran, h. 3, Yerevan: Yerevani hamalsarani hratarakchut'yun, 1977. [Acharian, H. H. Armenian Radical Dictionary, vol. 3, Yerevan: Yerevan University Press, 1977.]
4. Acharian, H. H. Hayeren armatakan barraran, h. 4, Yerevan: Yerevani hamalsarani hratarakchut'yun, 1979. [Acharian, H. H. Armenian Radical Dictionary, vol. 4, Yerevan: Yerevan University Press, 1979.]
5. Amassiatzi, A. Angitsats anpet. Vienna: Mkht'arean t'paran, 1926. [Amassiatzi, A. The Useless Ignorance. Vienna: Mkhitarian Press, 1926.]
6. Avetikian, G., Syurmelyan, Kh., Avgerian, M. Nor barrgirk' haykazeen lezvi, h. 1, Venice: Surb Ghazar, 1836. [Avetikian, G., Syurmelyan, Kh., Avgerian, M. New Dictionary of the Armenian Language, vol. 1, Venice: Surb Ghazar, 1836.]
7. Avetikian, G., Syurmelyan, Kh., Avgerian, M. Nor barrgirk' haykazeen lezvi, h. 2, Venice: Surb Ghazar, 1837. [Avetikian, G., Syurmelyan, Kh., Avgerian, M. New Dictionary of the Armenian Language, vol. 2, Venice: Surb Ghazar, 1837.]
8. Bzhshkaran dzioy yev arhasarak grasdnov (ZhG dar), ashkatasirut'yamb B. L. Chughaszyan, Yerevan: HSSH GA hratarakchut'yun, 1980. [The Veterinary Dictionary and Generally of the Horse and Other Livestock (18th Century), edited by B. L. Chughaszyan, Yerevan: Academy of Sciences of the Armenian SSR Press, 1980.]
9. Byuzandatsi, N. Barrgirk' storin hayereni i matenagrout'yan ZhA-ZhE darout's (M. Minasiani hratarakchut'ov). Zhnev, 2000. [Byzantine, N. Dictionary of Early Armenian in Manuscripts of the 9th-10th Century (Published by M. Minasian). Geneva, 2000.]
10. Grigoris, K'nnout'yan bnout'yan mardoy yev norin ts'avots, Yerevan: HSSH GA hratarakchut'yun, 1962. [Grigoris, Examination of the Nature of Man and His Sufferings, Yerevan: Academy of Sciences of the Armenian SSR Press, 1962.]
11. Hayots' lezvi barbarayin barraran, h. 3, Yerevan: HH GA "Gitutyun" hratarakchut'yun, 2004. [Armenian Language Dialectal Dictionary, vol. 3, Yerevan: Academy of Sciences of the Republic of Armenia "Gitutyun" Press, 2004.]
12. Hayots' lezvi barbarayin barraran, h. 4, Yerevan: HH GA "Gitutyun" hratarakchut'yun, 2007. [Armenian Language Dialectal Dictionary, vol. 4, Yerevan: Academy of Sciences of the Republic of Armenia "Gitutyun" Press, 2007.]

13. Hayots' lezvi barbarayin barraran, h. 5, Yerevan: HH GA "Gitutyun" hratarakchut'yun, 2008. [Armenian Language Dialectal Dictionary, vol. 5, Yerevan: Academy of Sciences of the Republic of Armenia "Gitutyun" Press, 2008.]
14. Ghazarian, R. S., Avetisyan, H. M. Mijhin hayereni barraran, Yerevan: Yerevan State University Press, 2009. [Ghazarian, R. S., Avetisyan, H. M. Dictionary of Middle Armenian, Yerevan: Yerevan State University Press, 2009.]
15. Ghazaryan, R. S. Grabar barraran, h. A, Yerevan: Yerevani hamalsarani hratarakchut'yun, 2000. [Ghazaryan, R. S. Classical Armenian Dictionary, vol. A, Yerevan: Yerevan University Press, 2000.]
16. Ghazaryan, R. S. Mijhin grakan hayereni barrapashary, Yerevan: Yerevani hamalsarani hratarakchut'yun, 2001. [Ghazaryan, R. S. Lexical Inventory of Middle Literary Armenian, Yerevan: Yerevan University Press, 2001.]
17. Malkhasian, St. Hayeren bap'atrakan barraran, h. 2, Yerevan: Haykakan SSR Petakan hratarakchut'yun, 1944. [Malkhasian, St. Armenian Explanatory Dictionary, vol. 2, Yerevan: Armenian SSR State Press, 1944.]

ԱՐՑԱՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ Ի ՎԵՐՋՆԱՀԱՅՈՒՆ ԲԱՂԱԴՐԻՉՈՎ
ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ,

ԼՈՒՍԻՆԵ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ

գիտաշխատող, Բ.Գ.Թ.

margaryan.lusine@yandex.com

DOI: 10.57236/1829-0183-2025.1(32)-63

Համառոտագիր

Հոդվածում քննվում է *-ի* վերջնահնչյունի իմաստագործառական արժեքը Արցախի բնականություններում, որոնք դասակարգվում են երեք խմբի. 1. Բառակազմական *-ի ձևույթ*¹ հնչյունափոխությամբ: Այս խմբում ընդգրկված են բնականություններ, որոնց *-ի* վերջածանցը բարբառում ենթարկվում է հնչյունափոխության, օրինակ՝ Հացի/Հացե, Հաղորտի/Հըղորտե, Քոասնի/ Քըոասնե: 2. Բառակազմական *-ի ձևույթ*¹ առանց հնչյունափոխության: Բնականություններ, որոնց *ի* վերջածանցը բարբառում չի հնչյունափոխվում: Օրինակ՝ Գիշի, Ննգի, Շուշի: 3. Արմատական կամ իմաստային չեզոք ձևեր: Այս խմբում ընդգրկված են բնականություններ, որոնց *ի* վերջնահնչյունը չունի բառակազմական արժեք: Օրինակ՝ Եղցի (եկեղեցի բառի բարբառային տարբերակ), Ջիվանի (նոր բնակավայր՝ անվանված աշուղ Ջիվանու պատվին), Մշենի (-ենի ածանցի վերջնահնչյուն):

Հատկանշվում է, որ *ի*-ով վերջավորվող տեղանունները հաճախ տեղակայված են աշխարհագրորեն մերձ տարածքներում, և ենթադրելի է, որ դրանք կարող են արտահայտել որոշակի տարածքային ամբողջականություն և ունենալ տեղագրական առանձնահատկություններ: Նման տեղանուններ են Գիշին, Ննգին, Կաղարծին, Հաղորտին:

Ակնարկային ձևով տրվում է նաև Արցախի տեղանվանական համակարգի *ի*-ով վերջացող բնականությունների զուգադրություն Հայաստանի Հանրապետության համանուն բնականություններին:

Բանալի բառեր և բառակապակցություններ՝ Արցախ, բնականուն, *-ի ձևույթ*, Հացի, Տումի, Կաղարծի, Հաղորտի, Գիշի, Ննգի, Քոասնի, Շուշի, Ծալուռի, Ջիվանի, Կումայրի, Եղցի, Մշենի, Չափնի:

¹ Հոդվածը 2024 թ. նոյեմբեր 14-ին գեկուցումով ներկայացվել էր ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կողմից կազմակերպված Բարբառագիտական ընթերցումներ գիտաժողովին:

AN ANALYSIS OF THE PLACE NAMES OF ARTSAKH ENDING IN THE FINAL SOUND “-I”

LUSINE MARGARYAN

RA NAS Language Institute, Ph.D
margaryan.lusine@yandex.com

Abstract

The article examines the semantic-functional value of the final sound *-i* in the oykononyms of Artsakh.

In this article oykononyms ending in *-i* are classified into three groups: 1. Derivational morpheme *-i* with phonetic changes. This group includes names where the *-i* suffix undergoes phonetic transformations in dialects, such as Hatsi/Hats'e, Hagorti/Heghorté, Krasni/Krasné. 2. Derivational morpheme *-i* without phonetic changes. This group encompasses names where the *-i* remains unchanged in dialects. Examples include Gishi, Nngi, Shushi. 3. Root or semantically neutral forms. This category includes names where the *-i* lacks morphological value, such as Yeghtsi (a dialectal form of the word "church"), Jivani (a newly established settlement named after ashugh Jivani), and Msheni (the final sound of the suffix *-eni*). It is noted that oykononyms ending in *-i* are often located in geographically adjacent areas, suggesting they may reflect certain territorial integrity and topographic features. Examples include Gishi, Nngi, Kagharci and Hagorti.

The article also briefly compares Artsakh's toponymic system with similar names in the Republic of Armenia (RA).

Keyboards and phrasess: Artsakh, oykononyms, suffix *-i*, Hatsi, Tumi, Kagharci, Hagorti, Krasni, Gishi, Nngi, Shushi, Cakuri, Jivani, Kumayri, Eghci, Msheni, Chapni.

ИССЛЕДОВАНИЕ ТОПОНИМОВ НАСЕЛЕННЫХ ПУНКТОВ АРЦАХА С ФИНАЛНЫМ КОМПОНЕНТОМ “-И”

ЛУСИНЭ МАРКАРЯН

Институт языка ум. Р. Ачаряна, НАНРА, к.ф.н.
margaryan.lusine@yandex.com

Аннотация

В статье рассматривается семантико-функциональная значимость конечного звука *-и* в ойконимах Арцаха.

В статье ойконимы с окончанием на «и» классифицируются на три группы: 1. Словообразовательная форма «и» с фонетическими изменениями. В эту группу входят имена, у которых суффикс «и» подвергается фонетическим изменениям в диалектах, например: Хаци/Хацэ, Агорти/Хыгортэ, Кырасни/Кыраснэ. 2. Словообразовательная форма «и» без фонетических изменений. В эту группу входят имена, в которых «и» не изменяется в диалектах. Например: Гиши, Ннги, Шуши. 3. Корневые или семантически нейтральные формы. Сюда относятся имена, в которых «и» не

имеет словообразовательного значения. Например: Егци (диалектная форма слова «церковь»), Дживани (название населенного пункта в честь ашуга Дживана), Мшени (-ени — конечная буква суффикса). Отмечается, что ойконимы с окончанием на «и» часто находятся в географической близости, что может указывать на выражение определенной территориальной целостности и топографических особенностей. Примеры таких топонимов: Гиши, Ннги, Кагарци, Агорти.

В статье также сравниваются топонимические системы Арцаха с аналогичными названиями в Республике Армения.

Ключевые слова и словосочетания: Арцах, ойконим, суффикс «и», Хаци, Туми, Кагарци, Агорти, Красни, Гиши, Ннги, Шуши, Цакури, Дживани, Кумайри, Егци, Мшени, Чапни.

Ներածություն

Բառակազմական կաղապարների ուսումնասիրությունը տեղանվանական համակարգի առանձնահատկությունների ճանաչողության հնարավորություններից է: Գ. Ջահուկյանը բուն հայկական տեղանունների բառակազմական կաղապարների քննությամբ հաստատում է, որ խիստ սակավաթիվ են նախաձանցավոր կազմությունները և այն վերջաձանցավոր կազմությունները, որոնք պարունակում են բուն *հայկական* ծագման հիմքեր և ածանցներ [19, 415]: Առավել հաճախադեպ են ածանցավոր հիբրիդ տեղանունները՝ մայրենիի սերող և փոխառյալ բաղադրող հիմքերի կամ փոխառյալ սերող և մայրենիի բաղադրող հիմքերի համադրությամբ: Եվ ի-ով վերջավորվող բնականությունների քննությունը, ի մասնավորի, բառակազմական այդ կաղապարի ամբողջական բնութագրության հնարավորություն է, առհասարակ՝ տեղանվանական համակարգում բառակազմական հնարավորությունների բացահայտման ևս մեկ փորձ:

Արցախի տեղանուններից մի շարք բնականություններ վերջավորվում են ի-ով. ինչպես՝ *Հացի, Տումի, Կաղարծի, Հաղորդի, Գիշի, Ննգի, Քոասնի, Շուշի, Ծակուռի, Ջիվանի, Կումայրի, Եղցի, Մշենի, Չափնի*: Քննելով այդ բնականությունները՝ ճշգրտվում են *-ի* վերջնահնչյունի լեզվական նկարագիրը և նրա գործառական արժեքը:

-ի վերջաձանցի պատմական ծագումը: *-ի*-ն հին հայկական վերջաձանց է [18, 806]: Այն բազմիմաստ ածանց է. նրանով արտահայտվում են տարբեր իմաստներ. ա/ ծառատեսակների, բ/ մարդկային հատկանիշի, գ/որակային և գունային հատկանիշի, դ/ երկրաչափական մարմինների, ե/ առարկայացնող, որոշակիացնող [11, 417]: *-ի*-ն, այդ բոլոր նշա-

նակություններով հանդերձ, կենսունակ ձևույթ էր հին հայկական տեղանունների կազմության ժամանակ: Գ. Ջահուկյանը հնդեվրոպական ծագման ածանցներից առաջին հերթին նշում է *-h-*-ն, որն ընկալվում է նաև որպես համապատասխան սեռականի կազմիչ [19, 415]:

-h--ով վերջավորվող տեղանունների լեզվապատմական քննությունը բացահայտում է նշյալ ձևույթի գործառության սահմանները, հնարավորություն տալիս ճշգրտելու Արցախի տեղանվանահամակարգում բառակազմական այդ կաղապարի կենսունակությունը և այն զուգադրաբար դիտարկելու համահայկական տարածքում:

Քննելով *h-*-ով վերջավորվող բնականունները և հիմք ընդունելով նշյալ բնականունների պատմալեզվաբանական տեղեկանքները՝ դրանք որոշակի սկզբունքով դասակարգել ենք 3 խմբի. **ա)** բնականուններ, որոնց վերջնահնչյուն *-h-*-ն բառակազմական ձևույթ է և բարբառում հնչյունափոխության է ենթարկվում՝ *ի>է*. ինչպես՝ *Հացի/Հացէ, Հաղորտի/Հըղորտէ, Քոասնի/Քըոասնէ, Տումի/ Տումէ, Կաղարծի/ Կըղարծէ, Բ* բնականուններ, որոնց վերջնահնչյուն *-h-*-ն բառակազմական ձևույթ է և բարբառում հնչյունափոխության չի ենթարկվում. ինչպես՝ *Գիշի, Շուշի, Ննգի*. **գ)** բնականուններ, որոնց վերջնահնչյուն *-h-*-ն կամ արմատական հնչյուն է, կամ ածանցական հնչամասնիկ և չունի բառակազմական արժեք. ինչպես՝ *Ջիվանի, Կումայրի, Եղցի, Մշենի, Չափնի*:

Ըստ տրված խմբերի՝ յուրաքանչյուր խմբի միավոր բնականուն կքննվի պատմական, լեզվաբանական և բարբառային համատեքստում:

h-ով վերջավորվող բնականունների վերլուծություն

Առաջին խումբ. բառակազմական ձևույթ՝ հնչյունափոխությամբ

1. *Հացի*: Այս բնականվան ծագումը մեկնաբանվում է տարբեր վարկածներով³: Հ. Հյուբշմանը տեղանունը կապում է *հացի* ծառատեսա-

²Քննվող տեղանունների ստուգաբանական տեղեկանքների շարքում կան վարկածներ, որոնք լեզվաբանորեն հիմնավորելի չեն, բայց որպես դիտարկումներ ուշագրավ են: Դրանք կներկայացվեն տողատակի ծանուցումներով: Ու քանի որ գերթե բոլոր բնականունների մասով այդպիսիք կան, հղումը տրվում է բնականվան առաջին նշագրությանը:

³ Լ. Հարությունյանը նշում է, որ գյուղանունն իմաստային առումով չի կապվում հաց բառի հետ, այլ աղերսվում է անտառ հասկացությանը: Ած/հաժ հին լեզվում նշանակում էր ընծյուղ, ծիլ, շիվ, խոտ [14, 57]: Ս. Սարգսյանն էլ տեղանվան ծագումը հաս-ին է աղերսում, իսկ այն կաս-խաս-հաս-հաց-հացի անցումներով հիմք է տվել բնականվանը: Նա Հացի-ն մեկնաբանում է սուրբ, սրբավայր նշանակությամբ՝ նկատի առնելով նաև Բոի եղցի վանական համալիրը գյուղի մոտ [22, 74]:

կի հետ [15, 161]: Մեկ այլ տարբերակով անվան առաջացումը բացատրվում է հացահատիկի առատությամբ: Ղ. Աղայանի «Անահիտ» հեքիաթում նշվում է *Հացիկ* անունով: Այդ բնակավայրի հետ է կապված Վաչագան Բարեպաշտ թագավորի և նույն գյուղի աղջիկ Անահիտի հանդիպման պատմությունը [16, 243]: Դիվանում նշված է *Հացի* գյուղ [10, 153]:

Այցելելով այդ բնակավայր /2014թ./՝ ականատես եղանք հետաքրքիր, բայց և շատ պարզ ու սովորական երևույթի. ողջ գյուղը հացի ծառերով էր պատված, չկար մի տուն, բանջարանոց՝ շեն թե ավեր, որ հացի ծառափերով շրջապատված չլիներ: Ու ակնհայտ էր, որ Հյուբժմանի մեկնությունը հավաստի է: Ըստ այդմ՝ բնականունը *հացածառի* առատությունն է նշում: Ըստ կազմության՝ բնականունը պարզ է՝ բաղադրյալ հիմքով, իսկ իբրև բառական միավոր՝ բաղադրյալ է՝ կազմված *հաց/ վայրի անպտուղ ծառ*՝ *osk հնդեվրոպական արմատից [4, 65; 18, 453] և -ի *-iyō/-ā- հնդեվրոպական վերջածանցից [18, 806]: Այն, որ բնականունը բարբառում *ի>է* հնչյունափոխության է ենթարկվում, պայմանավորված է նշյալ ածանցի՝ ծառատեսակ նշող իմաստով, բարբառում օրինաչափորեն հնչյունափոխության ենթարկվելու իրողությամբ. ինչպես՝ բոխի-պէխէ, կաղնի-կաղնէ և այլն:

Այսպես՝ *Հացի* տեղանվան դեպքում -ի վերջածանցը, ունենալով ծառատեսակներ նշելու բառակազմական գործառույթ, նաև լեզվի տրնտեսման սկզբունքի համաձայն՝ զուգորդաբար ձեռք է բերել տեղանվանակազմիչ նշանակություն:

2. *Հաղորդի*⁴: Ս. Մելքումյանը նշում է, որ *Հաղորդի* գյուղի հին բնակատեղին եղել է այժմյան բնակավայրից մոտ 1 կմ դեպի հյուսիս-արևմուտք. եղել է ավելի քան 500 տարեկան մի չքնաղ թեղի ծառ, որի տակ եղել է մատուռ-աղոթատեղի: Մարդիկ նրա միջոցով հաղորդվում էին Աստծո հետ: Այստեղից էլ առաջացել է գյուղի անունը [16, 238]:

Հաղորտի գյուղի պատմությունը վկայող Ն. Ավետիսյանը գրում է, որ Հաղորտին խորհրդային շրջանում անվանվել էր օտարահունչ Քենդխուրդ, և *Հաղորդի* վերանվանվել է խորհրդային կարգերի փլուզումից

⁴ Լ. Հարությունյանը գյուղանունը կապում է Արև աստծո հաղորդակցության հետ: Գյուղի նախկին բնակիչներն ունեցել են իրենց հին բնակավայրը՝ Տերթնը, որը թերթ բաղի մի փոփոխակն է: Տերթն բառը հոմանիշ է Ծառեխ, Շեխեր և այլ տեղանունների [14, 41]:

հետո: Իսկ գյուղի անունը մեկնաբանվում էր *հաղորդել* բառով. թեղի ծառ մատուռ -սրբավայրի մոտ հաղորդվելու էին գալիս այլ բնակավայրերից, երբ հիմնադրվում է ներկայիս գյուղը, ստանում է այդ անունը[5, 6-9]:

Բնականվան առաջացման պայմանները հիմք ընդունելով՝ կարող ենք նշել, որ վերջնահնչյուն *ի*-ն տվյալ դեպքում ունի տեղանվանակերտ-գոյականակերտ գործառույթ: Արցախի բնականվանակազմության մեջ նախադասություն-անվանումներ չեն վկայվել, բայց *Հաղորդի* օրինակը հաստատում է տեղանվանագիտության մեջ գոյություն ունեցող այն երևույթը, որ մինչտեղանվանական իմաստը, հատկանշային կամ հաղորդակացական արժեք ունենալով և դառնալով տեղանուն, առարկայանում է: Նշյալ դեպքում *ի*-ի համանունության մեկնաբանության հնարավորություն ևս առկա է. մի դեպքում՝ 3-րդ դեմքով բայաձև՝ հաղորդակցական արժեք ունեցող բնականուն, մյուս դեպքում՝ բայահիմքի և *-ի* գոյականակերտ ածանցի համադրությամբ կազմություն: Վերջինիս լեզվաբանական հիմնավորումը տեղանվանագիտական իրողությունների վերլուծության համապատկերում արժանահավատ է լեզվական իրողությունների զարգացման տրամաբանությամբ ու լեզվի տնտեսման սկզբունքի հաշվառմամբ:

3. *Քռասնի*⁵: Այժմյան գյուղի պատմությունն սկսվում է 1630-ական թթ. [16, 139]: Արցախի տարածքում՝ Քռասնի գյուղի մերձակայքում, հայտնաբերվել են բրածո կենդանիներ. այս մասին վկայում է Վ. Բալայանը [6, 23]: Կ. Դավթյանը բնականունը նշում է *Քռասնէ* անվամբ ու նաև տալիս *Դըղաղան* գործառնող տարբերակը [9, 7]: Վերջինս *բոինչ* (բարբառում՝ *փըռըշնէ*) ծառանվան օտարալեզու պատճենումն է: Հ. Աճառյանը *փըռըշնէ* բառի գավառական մեկ այլ տարբերակ է նշում *դարդաղան*-ը [3, 207] ու նաև նշում, որ հայերեն այն անվանվում է *լորուր, դարդաղան* [4, 490]: Գյուղում այդ ծառատեսակի տարածվածության փաստը հաստատում են տեղաբնիկները: Ներկայիս գյուղը տեղափոխվել է այդ վայրից, և այն այսօր անվանվում է Հին շինատը՝ը: Արցախի բանահյուսության մեջ գյուղի անվանումն աղերսվում է քառասուն բառին՝ կապվելով քառասուն երիտասարդների կոտորածի ավանդության հետ [20, 199]: Բարբառում *քռասնէ* կարտաբերվել նաև красны́й

⁵ Ս. Սարգսյանը բնականունը համարում է քար+աս+նի բառարմատից ու մասնիկներից բաղադրություն, որ նշանակում է սուրբ քարի վրա /նկատի առնելով Բովուրխանը/ [22, 46]:

բառը՝ կապվելով խորհրդային հասարակարգի իրողություններին: Բայց վերջին վարկածը քիչ հավանական է այն առումով, որ փաստաթղթային-իրավաբանական վավերացում ստացած բնականվանացանկում գյուղը վկայված չէ красной տարբերակով (պաշտոնական լեզուն ռուսերենն էր): Եթե ներկայիս բնականունը красной բառի բարբառային արտասանությունն է, ապա տարակուսելի է թվում, որ ռուսերեն բառամիավորի բարբառային արտասանությունը՝ որպես պաշտոնական անվանում, իրավաբանորեն վավերացվեր հատկապես այն ժամանակահատվածում, երբ պաշտոնական լեզուն ռուսերենն էր: Բացի այդ՝ Արցախի տեղանվանական համակարգում վկայված են բնականուններ, որոնք красной բառի հայերեն թարգմանությամբ վավերացված են իբրև խորհրդային շրջանի գաղափարախոսության արտահայտություններ, ինչպես՝ *Կարմիր գյուղ*, *Կարմիր շուկա*, *Կարմիրավան*: Այս դեպքում անմեկնելի է մնում Քոսանի-ի՝ красной-ից առաջացած լինելու, անթարգման մնալու և բարբառային արտասանությամբ ամրագրումը:

Պատմական տեղեկանքը արժանահավատ վարկած չի առաջադրում, բայց լեզվաբանորեն հիմնավորելի է հետևյալը. որքան էլ բնականվան՝ իբրև բառամիավորի բնիմաստը մթագնված լինի, -ի ձևությո՝ բարբառում *ի > է* հնչյունափոխության ենթարկվելու փաստը հաստատում է այդ մասնիկի ոչ տեղանվանակերտ միավոր լինելը: Իբրև բնականուն՝ այն արդեն առկայացած էր վերջնահնչյուն *ի*-ով:

4. *Տումի*⁶: *Տումին* Արցախի հնագույն գյուղերից է: «Հիմնուած է Մոխրենիսի արևմտեան կողում, Շնաքարի գետ կոչուած վտակի ձախ ափի բարձրութեան վերայ: Բնակիչք բնիկ են», - հաղորդագրությամբ գյուղի մասին վկայում է Մ. Բարխուդարյանցը [8, 52]: Ղ. Ալիշանը բնակավայրը նշում է *Թում* անվամբ [1, 119]:

Հ. Կարապյոզյանը գյուղի անունը համարում է բաղադրյալ կազմություն՝ *Տում-ուր/վերջածանց/* և հավելում, որ այդ արմատը հիշվում է Հադրութի շրջանի Տումի գյուղանվան մեջ՝ *Տումու-Տումեյ-Տումէ-Տումի* անցումով: Ըստ նրա՝ Հայկական լեռնաշխարհի հարավում հանդիպող *Տումուրու* գյուղանուն-գավառանունը և նրա հյուսիսում վկայված *Տումի* գյուղանունը ծագում են միևնույն բառարմատից, որի իմաստը, դժ-

⁶ Ս. Սարգսյանը կասկածով բնականվան ծագումը կապում է ռուսական հնչողությամբ ձևին՝ Դոմի՝ Дома, Доми:

բախտաբար, հայտնի չէ [13, 124-125]: Հնչյունափոխական այդ երևույթը՝ *ու >եյ >է*, Կարապյոզյանը համարում է ընդհանրական նաև Գիշի, Լոռի տեղանունների դեպքում [13, 133-134]:

Առանց *-հ*-ի վկայված տարբերակները հիմք են տալիս ենթադրելու, որ վերջնահնչյուն *-հ*-ն կարող է լինել հետագա փոփոխության պատճառ: Ըստ այդմ՝ առավել հավանական է բնականվան է-ով վերջավորվելու և բարբառայինից գրական լեզու անցման ճանապարհին *է>հ* փոխադրման արտահայտություն լինելը: Բարբառային *-հ*-ի չլինելու հավանականության մասին է հաստատում նաև բարբառում *-ցի/-ըցէ* բառակազմական ձևույթ ստանալու փաստը, որը հատուկ է բաղաձայնով վերջավորվող բառերի կազմությանը՝ Տումէ-տումըցէ:

5. *Ծակուռի*: Ծակուռի գյուղ՝ նշված է Դիվանում [10, 172]: Ս. Մելքումյանը նշում է, որ բնակչության մեծ մասը բնիկ է, փոքր մասը՝ Ղարադաղից [16, 273]: Բնակավայրը *Ծիկուռի* անվամբ է նշում Ղ. Ալիշանը [1, 120]: *Ծակուռը* Արցախի բարբառում հյուղակն է, նեղ անցքը կամ ճեղքը [21, 296]: Կ. Դավթյանը բնականունը վկայում է Ծըկօռէ հնչատարբերակով [9, 9]: *Ծակուռի* բնակավայրի տեղադրությունը բառիմաստի փոխաբերացման ընկալում է. այն Վանեսա սարի ստորոտի ձորի երկու լանջին է ու կարծես բացում է ձորի անցքը [8, 48]: Բարբառում բառն արմատական ձևով վկայված է իբրև հասարակ անուն, իսկ *-ի* վերջածանցավոր կազմությամբ՝ որպես բնականուն: Վերջինիս տեղանշող իմաստն ընդգծվում է *-ի* ածանցի միջոցով:

6. *Կաղարծի*: *Կաղարծին*, ըստ Ս. Մելքումյանի, առաջացել է *կաղ արծիվ* կամ *կաղնու արծիվ* բառակապակցությունից [16, 240]: Լ. Հարությունյանը *Արցախ* և *Կաղարծի* տեղանունները նույն իմաստային դաշտում է մեկնում. «Արցախ /Արծախ/, Կաղարծի/կախված+ արծն+ի/ տեղանուններն ունեն նույն արմատները^ա արծ/ն/, որ նշանակում է քար, ժայռ [14, 81]:

^ա Անվան առաջացման մասին կա մի ավանդություն, որի համաձայն՝ այդ բնակավայրի հիմնադրման ժամանակ իբր մի կաղնու ծառի վրա երկար ժամանակ նստել է մի կաղ արծիվ [16, 240]: Ս. Սարգսյանը գյուղանունը մեկնաբանում է որպես կաղ-կիղ-գիղ ձևափոխության և արծ/լեռ, ժայռ/ բաղադրիչների միացմամբ առաջացած անվանում [22, 75]:

Հնարավոր է *Կաղարծիի կաղ* բաղադրիչը նշի *կաղնու ծառերով ծածկված* վայր լինելը, այսինքն՝ տարածքի անտառային ռեսուրսը բնութագրի, կամ էլ *կաղ-կախ*՝ արտահայտի թեթև թեքություն կամ դիրքային առանձնահատկություն՝ պայմանավորված տեղանքի լանդշաֆտով: Արծի բաղադրիչը կարող է նշել տեղանքի բարձրադիր կամ լեռնային բնույթը (արծիվ-ը նույնպես բարձունք է նշում), հնարավոր է նաև արծ/աթ/բառարմատի հետ աղերս ունենալու փաստը՝ այս դեպքում նշելով գունային կոնտեքստ՝ պայմանավորված արծաթի սպիտակավուն, մետաղական լույսով: Արծաթի հստակ գույնը կապվում է գեղատեսիլ բնապատկերների հետ: Բնակավայրի աշխարհագրական նկարագիրը համապատասխանում է անվան բնութագրին՝ քերծոտ, խճոտ, կավային գոյացություններով, սպիտակադեղնավուն տեղանք: Ըստ աշխարհագրական նկարագրի՝ թեք և սպիտակավուն իմաստներով մեկնաբանությունը հավաստի է թվում:

-*Ի*-ին այս դեպքում կարող է լինել թե՛ տեղանվանակերտ մասնիկ, թե՛ լեզվական համաբանությամբ (Գիշի, Ննգի, Հաղորտի տեղանունների համաբանությամբ) հատկանշվող տեղագրական առանձնահատկության նշույթ:

Երկրորդ խումբ. բառակազմական ձևույթ՝ առանց հնչյունափոխության

1. *Գիշի*: *Գիշին* հայկական հնագույն բնակավայրերից է: *Գիշի* ձևով վկայված է Դիվանում [10, 153]: Վ. Բալայանը նշում է, որ *Գիշին Գիշ* ձևով գոյություն է ունեցել նաև Արտաշեսյանների թագավորության ժամանակ (մ.թ.ա. 189-մ.թ.1) [7, 14]: Ս. Երեմյանը Գիշ անվամբ բնակավայր «տեղադրում է» Մեծ Հայքի Ծավդեք(Արցախ) աշխարհի տարածքում, Ամարասա վանքից հյուսիս, Միլիի դաշտի արևմտյան և Դիզափայտ լեռան հյուսիսարևելյան կողմում, պատմական Գիշ (այժմ՝ Գիշի) գյուղի մոտ: Գյուղի անվան մեկնությունը տրվում է նաև *գինեշապ* ու *գինեվեպ* բառերի աղերսակցությամբ [17, 867]:

Գիշի անվան առաջին վկայությունը, ըստ Հ. Կարապյոզյանի [13, 133-134], հասցեագրվում է հնագույն ժամանակներին: Հիշատակվում է Ռուսա Ա-ի (735-713)՝ Ծովինարի ժայռափոր արձանագրության մեջ թվարկված 19 երկրների 2-րդ շարքի 2-րդ տեղում որպես *Գիշուա*՝ տրրված հայերենի սեռական հոլովով: Հ. Կարապյոզյանը մեկնաբանում է, որ երկրանվան ուղիղ ձևն է *Գիշու*, որից հնչյունական օրինաչափ անցումնե-

րով կստացվի հետևյալ շարքը՝ *Գիշու* /տեղանվան ուղիղ ձևը/ > *Գիշեյ* /բառավերջում *ու>եյ* անցումով, ապա՝ *եյ>է* հնչյունափոխությամբ, որը հատուկ է հին հայերենին, և *է > ի* անցումով. նույնն է նաև՝ *Լաուէ > Լաուի*:

Բնականվան առանց *-ի*-ի վկայությունը և տրված վարկածների զուգադիր քննությունը հավանական են դարձնում վերջնահնչյուն *-ի*-ի տեղանվանակերտ մասնիկ լինելու և հետագա հավելման իրողությունը: Ասվածը կարող է հաստատվել նաև *-ի*-ի բարբառում հնչյունափոխության չենթարկվելու, իսկ բառակազմական այլ մասնիկներ կցվելու դեպքում՝ սղման փաստով՝ *Գիշի-գիշըցէ*: Ընդ որում՝ նշյալ տեղանվանակերտ մասնիկի հավելումը կարող է լինել նաև ծայնավորների ներդաշնակության օրենքի ազդեցություն: Ու դարձյալ դիտարկվում է լեզվի տնտեսման սկզբունքի օրինակը՝ *տեղանվանակերտ -ի*-ի և *արմատական -ի*-ի ներդաշնակության կանոնը:

2. *Ննգի*»: Ըստ Ս.Մելքումյանի՝ *Ննգի* գյուղի պատմությունն սկսվում է 16-րդ դարի 2-րդ կեսից: Մինչ այդ այժմյան գյուղի հողատարածքում եղել են 12 փոքր բնակավայրեր՝ *Յեղծե հողը, Բյարգյուզանը, Արցախպուրը, Քուլադակը, Շենի առաչը, Օխնը ախպուրը, Ըլաջու ճուրը, Մինակերը, Թանակ ախպուրը, Գոմերի հովիտը, Թաեանց տունը, Նիգ շենը*: Հետագայում այս բնակավայրերը պաշտպանական նպատակով միավորվել են, և ստեղծվել է միասնական գյուղ՝ *Ննգի* անվամբ: Ապա *Ննգի* գյուղի որոշ բնակիչներ տեղափոխվել են և մի քանի կմ հարավ գտնվող վայրում հիմնել նոր գյուղ՝ *Ննգիջան* անվամբ [16, 236-237]: Մ. Բարխուդարյանը *Նինկի* անվամբ է վկայում բնակավայրը [8, 111]: Դիվանում նշված է *Ննգի* [10, 158]:

Հ. Հյուբշմանը *Նիգ* անունը մեկնում է «աղխ, պարզունակ» [15, 386]: Հ. Աճառյանը բառի ծագումը մեկնաբանում է հնդեվրոպական *յենուիլ, փակել* նշանակությամբ [4, 450], որից բխում են *հենարան, հիմք, ամուր կառույց* նշանակությունները: Սա վկայում է, որ տարածքը կարևոր, ռազմավարական պաշտպանական վայր է եղել: Գ. Ջահուկ-

⁸ Ս.Սարգսյանը բնականունը մեկնաբանում է գետի վրա նշանակությամբ՝ նշելով, որ *Ննգին* գետանուն է՝ կազմված նաև և գի բաղադրիչներից, որից առաջինը իմաստով համադրվում է արեգակի, երկրորդը՝ գետի հետ [18, 568]:

յանը բառի ծագումը սերում է *թեքվել* իմաստով (*kneigh-) բառարմատից՝ *գերանակապ, նիզ սողնակ* նշանակություններով [18, 568]: Նիզ-ը մեկնաբանվում է նաև «*ճամբան փակելու չափ բարձրացած ավագ*» նշանակությամբ [23, 84]:

Բոլոր վարկածներն էլ հաստատում են, որ բնականունն ունի բաղադրյալ կազմություն, և վերջնահնչյուն *ի*-ն տեղանվանակերտ ձևույթ է:

3. *Շուշի*: Այս տեղանունը նույն *Շոշ* անվան ձևափոխությունն է: *Շոշը* Արցախի բարբառում նշանակում է *մաքաղ ճյուղ*, ինչպես նաև *ուռուցք, ցցվածք*: Ավելի քան 4-5 հազար տարի առաջ *Շոշ* է կոչվել շրջապատից առանձնացած սեղանանման այն բարձրավանդակը, որի վրա 1752թ. կառուցվել է *Շուշի* բնակավայրը (քաղաք է դարձել 1840-ին): Քաղաքն իր անվանումը ստացել է բարձրավանդակի անունից [12, 30]: Նույնն է հաստատում նաև Ղ. Ալիշանը. բերդաքաղաքի կառուցումից հետո այստեղ են տեղափոխվել *Շոշ* (*Շուշի*) գյուղի բնակիչները, և նոր բնակավայրը ստացել է *Շուշի* անունը [1, 109]: Պատմական աղբյուրներում նույնպես մեկնաբանվում է *Շոշի բերդ, Շոշի սղնախ, Շոշի ամրոց*, ապա կարճ *Շուշի* [26, գ. 11]:

Շուշի-ի ծագումնաբանությունը քաղաքական շահադրմամբ նաև նույնականացվել էր *շուշա* (հայելի) օտարահունչ բառին. *տարածք, որտեղ, ինչպես հայելու մեջ, տեսանելի է շրջապատը* [25, 48]:

Ս. Սարգսյանը, պատմական փաստերը հիմք ընդունելով, հաստատում է՝ ճշմարտությունն այն է, որ *Շուշին* բնակավայր է եղել անհիշելի ժամանակներից: Իրականում քաղաքն իր անունը ստացել է բարձրավանդակի անունից: Այն, որ մինչև XVIII դարը *Շուշին* եղել է ամրոց ու բնակավայր, հաստատում են աղբյուրագիտական տվյալները. արաբական աղբյուրներում այդ մասին կան տեղեկություններ: Սարգսյանը վկայակոչում է Գանձակեցու հիշատակումը Կարկառ բերդաքաղաքի մասին: Այն տեղակայված էր *Շուշիի* մերձակայքում: Հունոտի կիրճի Ավանա կարան կոչվող քարանձավին մերձ ամրոցի պեղումների արդյունքում հայտնաբերվել են XII-XIV դդ. վերաբերող հնագիտական նյութեր, որոնք հիմք են տալիս հաստատելու, որ այդտեղ էր տեղակայված Կարկառ ամրոցը: Բացի այդ՝ 1981թ. այստեղ հայտնաբերվել են 971 թ. և 1252 թ. խաչքարեր, որոնցից երկրորդն առնչվում էր Հասան Ջալալին: Դա հավաստում է, որ *Շուշին* XIII դարում գտնվում էր Խաչենի իշխանության սահմաններում [22, 63]:

Հետաքրքրական է Հ. Կարապյոզյանի զուգադրական քննության ընդգծումը: Նա նշում է, որ Բիայնական սեպագիր աղբյուրներում Շուշի քաղաքի անունը վկայված չէ: Սակայն այլ սեպագիր աղբյուրներում այդպիսի անվանում առկա է:

Այսպես՝ Էլամի տարածքում մ.թ.ա. III հազարամյակում հայտնի քաղաք-պետություններից մեկը կոչվել է Շուշեն, որը, մեկ հազարամյակ անց (որպես Շուշեն կամ Շուշուն), եղել է Էլամի բաղկացուցիչ մասերից մեկը, մի բնակավայր, որը գոյություն է ունեցել դեռևս մ.թ.ա. IV հազարամյակում: Եվ եզրահանգում է, որ *Շուշի* տեղանունը, հնարավոր է, առաջացել է երկու տարբեր տեղերում՝ մեկը մյուսից անկախ, թերևս բնակավայրի աշխարհագրական դիրքի պատճառով՝ ժայռի գլխին, բլրին տեղանշությամբ[13, 110-111]: Մեկնաբանելով Կարապյոզյանի զուգադրությունը՝ հատկանշենք, որ Շուշին միանշանակ ունի *ժայռի գլուխ, ցցվածք* իմաստային բեռնվածքը, ու եթե անգամ դա չի հասցեագրվում մ.թ.ա. հիշատակվող ժամանակաշրջանին, ապա հատկանշում է այն իրողությունը, որ Շուշին հայկական տեղանվանակոչման տիպական փաստ է՝ լինելով հնդեվրոպական արմատական բառամիավոր, նշելով աշխարհագրական իրողություն:

Իսկ այն, որ վերջնահնչյուն *հ*-ն հետագա հավելում է՝ տեղանվանակերտ մասնիկ, հաստատում է *Շոշ* անվան վկայությունը: Բարբառում հնչյունաբանական տեսանկյունից հիմնավորված է գրական լեզու-բարբառ փոխադրությամբ *ո-ու* հնչյունափոխությունը. ինչպես՝ *Սոս-սուսըցէք՝, Տոդ-տուդըցէք՝, Շոշ-շուշըցէք՝*:

Երրորդ խումբ. արմատական կամ իմաստային չեզոք ձևեր

Այս խմբի բնականունները հայկական կորսված բնակավայրերի պատմական անունների վերականգնումներն են: Այդ բնականուններն օտարացվել էին լեզվական-հնչյունական խմբագրումներով կամ թարգմանական պատճենումներով, և անկախության շրջանում ստեղծվել են նախադրյալներ՝ դրանք վերականգնելու և վերանվանելու: Պիտի ընդգծել, որ վերանվանելիս ոչ միշտ են պահպանվել պատմական տեղագրական ճշգրտությունը, նույնանուն հնագույն բնակավայրի համապատասխանությունը: Հաճախ դրանք պարզապես դարձել են հնագույն հայկական բնակավայրերի անունների հուշարձաններ:

1. *Եղցի*: Փաստ է, որ լեզվական եկամուտ տարբեր ձևերով մուտքագրվում էին տեղաբնիկների լեզու: Տեղանուններն այդ առու-

մով առավել «ընկալունակ» շերտ են, քանի որ առկա է նաև քաղաքական գործոնը: Տեղանվանական արմատների կամ մասնիկների իմաստային պատճենումը այդ երևույթի դրսևորման մի ձև էր: Այդպես էր Քիլիսա դարձել հին Եղցին, որը անկախության շրջանում նորից վերստացավ հայկական անունը: Եղցի-ն եկեղեցի բառի բարբառային հնչատարբերակն է: Բարբառում *վանք* կամ *յեղե* բառանուններով են նշվում սրբատեղիները, մատուռները: Բնականունը բարբառային հնչատարբերակի՝ *յեղե* ձևի գրականացված՝ Եղցի ձևն է:

2. *Կումայրի*. Քաշաթաղի շրջանում վերաբնակեցված գյուղ:

3. *Մշենի*⁹: Ներկայիս Մշենին օտարալեզու Միշնիի վերանվանումն է, որը մինչ օտարահունչ խմբագրությունը պատմական հայկական բնակավայր էր *Մշենի* անվամբ [24, 266]:

4. *Չափնի*¹⁰: Գտնվում էր Թարթառի ծախակողմյան վտակ Լև գետի հովտում: *Չափնին* օտարացած *Չափլիի* վերանվանումն է, որը պատմական աղբյուրներում հայտնի էր *Չանգի* անվամբ [10, 225]:

5. *Ջիվանի*: ԱՀ անկախությունից հետո Մարտունու շրջանում նոր հիմնադրված ու վերաբնակեցված գյուղ է. վերաբնակիչները հիմնականում Ջավախքից են, և նրանց խնդրանքով ու ԱՀ ղեկավարության համաձայնությամբ՝ բնականունն անվանակոչվել է ի պատիվ մեծ ջավախեցու՝ աշուղ Ջիվանու:

Չնայած երրորդ խմբի բնականունները չեն աղերսվում քննված տեղանունների բառակազմական կաղապարներին, բայց տեղանվանական համակարգում համասեռության և համաբանության սկզբունքի կիրառման տեսանկյունից ուշագրավ են:

Քննության արդյունքները զուգադրելով ՀՀ պաշտոնական բնականվանացանկի համանուն կաղապարով վկայված բնականուններին՝ հատկանշելի է, որ այդ ցանկում տեղանվանակերտ *ի*-ն կիրառության ակտիվությամբ զիջում է արմատահնչյուն կամ իմաստային չեզոք հնչյուն

⁹ Ս.Սարգսյանը անվան ծագումը լեռան տակ նշանակությամբ կապում է Մաս լեռնանվան հետ ու նշում, որ այն ժողովրդի ընկալումներում մեկնաբանվում էր մոշենու թփերի հետ ունեցած կապով [22, 149]:

¹⁰ Ս.Սարգսյանը չափ-ը դիտում է ջաբ-բազ դրափոխության արդյունք ու Չափար բնականվան իմաստին աղերսելով՝ անվանումը կապում բնակավայրի հյուսիսային վերնամասի բարձրադիր լեռան հետ, իսկ մյուս՝ Չանգի անունը, նույնական համարում բնակավայրի եզրամասով հոսող համանուն գետակին՝ Լևի վտակ Չանգիին [22, 195]:

ի-ին: ՀՀ բնականվանացանկում հաշվառված 998 բնականուններից 47-ը վերջավորվում է ի-ով, և դրանց շարքում մեծ թիվ են կազմում երրորդ խմբին բնորոշ բնականունները, ընդ որում՝ հիմնականում վերջնահնչյուն ի-ն բառակազմական ձևային հնչամասնիկ է: Այսպես՝ -նի վերջնամասնիկով են Մուղնի, Արծնի, Պարնի, Պարնի, Գառնի, Արզնի, Բջնի, Չափնի, -ենի, -ունի վերջնամասնիկով՝ Արփենի, Աղվանի, Չովունի, Քաշունի, Հովունի, Յղունի, Արփենի, Մարտունի, Շենկանի, -ի արմատահնչյունով բնականուններ են՝ Նոր ուղի, Նիզամի, Լենուղի: Ենթադրելի է, որ տեղանվանակերտ -ի մասնիկն առկա է Վեդի, Լոռի, Մեղրի, Գյումրի (Կումայրի), Աքորի, Գեղի, Կոթի, Կարբի բնականուններում: Առաջին և երկրորդ խմբերի առանձնացում այս դեպքում հնարավոր չէ, քանի որ բարբառային համատեքստում դրանց քննությունը չի տրվում:

Եզրակացություն

Այսպիսով՝ ունենալով նշյալ տեղանունների առանձնական քննությամբ -ի հայկական վերջածանցի լեզվաբանական նկարագիրը՝ կարող ենք նշել Արցախի տեղանվանական շերտագրության որոշ առանձնահատկություններ.

ա) Այն բնակավայրերը, որոնց վերջնահնչյուն ի-ն բարբառում չի հնչյունափոխվում, ի-ի՝ որպես տեղանվանակերտ ձևային իմաստը մթագնված է, և համաժամանակյա կտրվածքով այդ բնականունները գիտակցվում են որպես արմատական բառեր: Այդպիսի բնականուններ են Գիշի, Շուշի, Ննգի տեղանունները: Այդ երեք բնականունների ի-ի լեզվաբանական նկարագրի նույնականացումը հնարավոր է մեկ դիտանկյունով. երեք դեպքում էլ ի-ի հավելումը հաստատում է տեղանվանական նշանակությունը: Ի-ով կազմված տեղանունը, ունենալով արմատական՝ առանց ի-ի տեղանվանահիմք, երկրորդային անվանումն է, այսինքն՝ բաղադրյալ տեղանուն է արմատական տեղանունից: Բացի այդ՝ տարածամանակյա կտրվածքով դրանք հատկանշվում են համակարգի համասեռության սկզբունքի օրինաչափ կիրառությամբ: Սրանից բխում է նաև այն, որ նշյալ տեղանուններում չհնչյունափոխվող վերջնահնչյուն ի-ն հնչյունափոխվող ի-ից տարբերվում է ոչ միայն իմաստային, այլև գործառական հատկանիշով:

Առաջին դեպքում, կարծում ենք, ձևավորվել է գրական լեզու-բարբառ արտասանական տարբերակը, կամ փաստաթղթային-իրավաբա-

նականից եղել է անցում խոսակցականի(Շուշի, Գիշի, Ննգի), երկրորդ դեպքում եղել է անցում բարբառից գրական լեզվին կամ խոսակցականից՝ փաստաթղթային-իրավաբանականին (Ծըկօռէ՝Ծակուռի, Քըռասնէ՝Քռասնի, Հըղօրթէ՝ Հաղորտի, Հացէ > Հացի):

բ) Այն բնականունները, որոնց վերջնահնչյուն *-ի*-ն բարբառում հնչյունափոխվում է *-ի*, կազմվել են *-ի* վերջածանցով բաղադրված բառային միավորներից, այսինքն՝ նրանցում տեղանվան հիմքը ածանցավոր բառն է կամ արդեն իսկ *-ի*-ով վերջավորվող կազմությունը, ինչպես՝ *Հացի, Հաղորտի, Քռասնի, Տումի, Կաղարծի* և այլն: Այս դեպքում *-ի*-ի գործառույթը բնութագրելիս հատկանշվում է լեզվական համակարգի զարգացման մեկ այլ՝ տնտեսման սկզբունքը գործառույթությունը:

գ) *-ի*-ով վերջավորվող բնականունների քննությունը ևս մեկ դիտարկման հիմք է տալիս. *-ի*-ով վերջավորվող քննված հին բնականունների մեծ մասը՝ *Գիշի, Ննգի, Կաղարծի, Հաղորտի*, տեղակայված է աշխարհագրորեն մերձ տարածքում: Հնարավոր է՝ դա տեղագրական առանձնահատկության նշույթ է, որ լեզվական համաբանությամբ հատկանշում է տարածքային ընդհանրություն և ամբողջականություն, տեղանվանակերտման գործընթացում՝ համասեռության սկզբունքի արտահայտություն:

Գրականության ցանկ

1. Alishan Gh. Artsakh, Yerevan, 1993, 120 yezh. [Alishan Gh. Artsakh, Yerevan, 1993, 120 pages.]
2. Alishan Gh. Sisakan, Venice, 1893, 602 yezh. [Alishan Gh. Sisakan, Venice, 1893, 602 pages.]
3. Acharian H. Hayeren gavarakan barraran, Lazarian t'chemaran arevelyan lezvats, T'iflis, 1913, 207 yezh. [Acharian H. Armenian Provincial Dictionary, Lazarian Seminary of Eastern Languages, Tbilisi, 1913, 207 pages.]
4. Acharian H. Hayeren armatakan barraran, Yerevani hamalsarani hratarakhut'yun, h. A-D, Yerevan, 1971-1979, 2705 yezh. [Acharian H. Armenian Radical Dictionary, Yerevan University Press, vol. A-D, Yerevan, 1971-1979, 2705 pages.]
5. Avetisyan N. Haghorti, Stepanakert, "Sona", 2009, 216 yezh. [Avetisyan N. Haghorti, Stepanakert, "Sona", 2009, 216 pages.]
6. Balayan V. R. Artsakhi patmut'yun, "Amaras", Yerevan, 2002, 440 yezh. [Balayan V. R. History of Artsakh, "Amaras", Yerevan, 2002, 440 pages.]

7. Balayan V. Gishi, patmakan ants'yal yev nerkan, "Voskan Yerevantsi", Yerevan, 1997, 80 yezh. [Balayan V. Gishi, Historical Past and Present, "Voskan Yerevantsi", Yerevan, 1997, 80 pages.]
8. Barkhudarian M. Eps. Artsakh, "Amaras", Yerevan, 1996, 300 yezh. [Barkhudarian M. Eps. Artsakh, "Amaras", Yerevan, 1996, 300 pages.]
9. Davtyan K.S. Lernayin Gharabagh-i barbarayin k'art'ez, Hayk. SSSHR GA hratarakchut'yun, Yerevan, 1966, 508 yezh. [Davtyan K.S. Dialectal Map of Mountainous Karabakh, Armenian SSR Academy of Sciences Press, Yerevan, 1966, 508 pages.]
10. Divan hay vimagrut'yan, prak 5, Artsakh (kazm.: S. G. Barkhudarian), HSAH GA Hnagitut'yan yev azgagrut'yan institut, Yerevan, HSAH GA hratarakchut'yun, 1982, 348 yezh. [Divan of Armenian Epigraphy, vol. 5, Artsakh (compiled by S. G. Barkhudarian), Institute of Archaeology and Ethnography of the Academy of Sciences of the Armenian SSR, Yerevan, 1982, 348 pages.]
11. Zhamanakagitakan hayots' lezou, h'nch'yunabanut'yun yev barragitut'yan, h.1, (Arakelyan V., Khachatryan A., Eloyan S.), Hayk. SSSHR GA hratarakchut'yun, Yerevan, 1979, 488 yezh. [Contemporary Armenian Language, Phonology and Lexicology, vol. 1, (Arakelyan V., Khachatryan A., Eloyan S.), Armenian SSR Academy of Sciences Press, Yerevan, 1979, 488 pages.]
12. Khachatryan H. Vachagan, "Zangak", Yerevan, 1998, 301 yezh. [Khachatryan H. Vachagan, "Zangak", Yerevan, 1998, 301 pages.]
13. Karageozyan H. Sepagir teghanunner (Ayrraratum yev harakats' naghanknerum), "Magagat'h", Yerevan, 1998, 394 yezh. [Karageozyan H. Ancient Place Names (in Ararat and surrounding regions), "Magagat'h", Yerevan, 1998, 394 pages.]
14. Harutyunyan L. Nshkharner Artsakhi banahousut'yan, Ch'vortord girk', "Dizak Plus", Stepanakert, 2009, 388 yezh. [Harutyunyan L. Folklore Motifs of Artsakh, Fourth Book, "Dizak Plus", Stepanakert, 2009, 388 pages.]
15. Hyubshman H. Hin hayots' teghvoy anunner, Vienna, 1907, 448 yezh. [Hyubshman H. Ancient Armenian Toponyms, Vienna, 1907, 448 pages.]
16. Melkumyan S. A. Lernayin Gharabagh, Yerevan, 1990, 273 yezh. [Melkumyan S. A. Mountainous Karabakh, Yerevan, 1990, 273 pages.]
17. Melik-Bakhshyan St., Barseghyan H., Hakobyan T. Hayastani yev harakats' shrjaneri teghanunneri barraran, h. 1, Yerevan, 1986, 867 yezh. [Melik-Bakhshyan St., Barseghyan H., Hakobyan T. Dictionary of Place Names of Armenia and Surrounding Regions, vol. 1, Yerevan, 1986, 867 pages.]
18. Jahukyan G. Hayeren stughabanakan barraran, "Asoghik" hratarakchut'yun, Yerevan, 2010, 820 yezh. [Jahukyan G. Armenian Etymological Dictionary, "Asoghik" Press, Yerevan, 2010, 820 pages.]

19. Jahukyan G. Hayots' lezvi patmut'yun. Nakhagrayin zhamanagirayin dzhamanaksharj, Hayk. SSSHR GA hratarakchut'yun, Yerevan, 1987, 748 yezh. [Jahukyan G. History of the Armenian Language. Prehistoric Period, Armenian SSR Academy of Sciences Press, Yerevan, 1987, 748 pages.]
20. Sargsyan A. Artsakhi banahousut'yun, "Edit Print", Yerevan, 2015, 768 yezh. [Sargsyan A. Folklore of Artsakh, "Edit Print", Yerevan, 2015, 768 pages.]
21. Sargsyan A. Yu. Gharabagh-i barbar'i barraran, Artsakhi petakan hamalsaran, Yerevan, 2013, 846 yezh. [Sargsyan A. Yu. Dictionary of the Karabakh Dialect, Artsakh State University, Yerevan, 2013, 846 pages.]
22. Sargsyan S. Artsakhi bnakaavareh, Yerevan, 2018, 231+24. [Sargsyan S. Settlements of Artsakh, Yerevan, 2018, 231+24 pages.]
23. Urishyan Vardges Mer armatnery nor loysi tak, h. 1-2, Fresno, 1995, 460 yezh. [Urishyan Vardges. Our Roots in a New Light, vol. 1-2, Fresno, 1995, 460 pages.]
24. Orbelyan St. Syunik'i patmut'yun, 399 yezh. [Orbelyan St. History of Syunik, 399 pages.]
25. Zubov P. P. Karabakhsky ostrolog ili osnovanie kreposti Shushi v 1752g., faksimil'noe izdanie, "Izdatelskiy dom Lusabats", Yerevan, 2013, 284 s. [Zubov P. P. The Karabakh Astrologer or the Foundation of the Shushi Fortress in 1752, Facsimile Edition, "Lusabats Publishing House", Yerevan, 2013, 284 pages.]
26. HH azgayin ark'iv, fond 1159, ts'uts'ak 11, gorts' 11. [National Archives of Armenia, Fund 1159, Inventory 11, File 11.]

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ. СООБЩЕНИЯ. REPORTS.

ԼԵՂՎԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ» ԿԻՐԱՌՈՒՄԸ ԳՐԱԿԱՆ

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԼԻԼԻԹ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

բ.գ.թ., դոցենտ

lilit-abrahamyan9@rambler.ru

ՇԱՐՄԱՂ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Վ.Բրյուսովի անվան պետական համալսարան,

բ.գ.թ., դոցենտ

abrahamyansharmagh@yandex.com

DOI: 10.57236/1829-0183-2025.1(32)-80

Ամփոփում

Սույն հոդվածի սկիզբն ազդարարել ենք «լեզվական խաղ» եզրույթի տարաբնույթ մեկնաբանություններով: Քննության ենք առել լեզվաբանական մեկնաբանության շրջանակներում «լեզվական խաղի» տարատեսակ համարվող «բառախաղը», մասնավորապես, գեղարվեստական գրականության մեջ բառախաղի ամենատարածված տարատեսակ բառակապակցը:

Նպատակահարմար ենք գտել անդրադառնալ անգլիական գեղարվեստական ստեղծագործություններում (Ու. Շեքսպիրի “Romeo and Juliet,” “A Midsummer Night’s Dream,” “Richard III” և Օ. Ուայլդի “The Importance of Being Earnest”) ոճաբանության ուսումնասիրության առարկա ոճական հնար բառախաղի բազում օրինակների կիրառմանը:

Բանալի բառեր և բառակապակցություններ. ճանաչողական լեզվաբանություն, նշանային համակարգ, միջմշակութային հաղորդակցություն, գիտական հարթակ, նորարարական մեթոդներ

THE USE OF “LANGUAGE GAMES” IN LITERARY WORKS

LILIT ABRAHAMYAN

PhD, Associate Professor, EUA,

lilit-abrahamyan9@rambler.ru

SHARMAGH ABRAHAMYAN

PhD, Associate Professor,

abrahamyansharmagh@yandex.com

Abstract

The primary objective of the given article is to scrutinize “language games,” which

are not only linguoculturological, linguo-philosophical, linguopragmatic, but also communicative and semantic phenomena.

As far as the comprehensive survey of the “language game” is of paramount importance, it is studied in a number of scientific disciplines, such as cognitive linguistics, semantics, pragmatics, as well as philosophy.

In the present paper the main focus is on those language games whose detailed analysis lends support to the comprehension of the author’s message.

In the final analysis, we think it reasonable to mention that the rigorous scrutiny of “language games” sheds light on the interrelationship between language and culture.

Keywords and phrases: cognitive linguistics, sign system, intercultural communication, scientific platform, innovative methods.

**ИСПОЛЬЗОВАНИЕ ЯЗЫКОВЫХ ИГР В ЛИТЕРАТУРНЫХ
ПРОИЗВЕДЕНИЯХ
ЛИЛИТ АБРАМЯН**

к.ф.н., доцент каф. прикладной лингвистики,
Европейский университет Армении
lilit-abrahamyan9@rambler.ru

ШАРМАХ АБРАМЯН

к.ф.н., доцент каф. английского языка, ГУ им. В.Б
abrahamyansharmagh@yandex.com

Аннотация

Основной целью данной статьи является изучение “языковых игр,” которые представляют собой не только лингвокультурологические, лингвофилософские, лингвопрагматические, но и коммуникативно-семантические феномены.

Поскольку комплексное исследование “языковых игр” имеет первостепенное значение, оно рассматривается рядом научных дисциплин, таких как когнитивная лингвистика, семантика, прагматика, а также философия.

В настоящей статье основное внимание уделяется тем языковым играм, подробный анализ которых способствует пониманию основной мысли автора.

Таким образом, считаем целесообразным отметить, что подробное изучение “языковых игр” проливает свет на взаимосвязь языка и культуры.

Ключевые слова и словосочетания: когнитивная лингвистика, знаковая система, межкультурная коммуникация, научная платформа, инновационные методы.

Ներածություն

Սույն հոդվածի թեմայի ընտրությունը պայմանավորված է «լեզվական խաղերի» միջառարկայական կարևորությամբ: Լեզվական խաղերի դիտարկումը գիտության առանցքային խնդիրներից է, մի շարք գիտակարգերում՝ լեզվաբանության, (մասնավորապես, ճանաչողական լեզվաբանության, իմաստաբանության, գործաբանության, ոճաբանության

յան), փիլիսոփայության և մանկավարժության մեջ հանգամանորեն ուսումնասիրում են «լեզվական խաղերի» տեսությունը:

Տվյալ հետազոտության արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ XX դարի լեզվամշակութաբանության և լեզվափիլիսոփայության համար այդչափ որոշիչ դարձած «խաղ» փոխաբերական բազմաբովանդակ և բազմաշերտ հասկացությունը հույժ կարևոր է նաև ժամանակակից լեզվաբանության մեջ: Հիրավի, «լեզվական խաղ» եզրույթում բազմանշանակ «խաղ» բառի բուն էության վերլուծությունը ենթադրում է, որ «խաղ» հասկացությունը ժամանակակից լեզվաբանության մեջ միանգամայն այլ լույսի ներքո է ընկալվում:

Լ. Վիտգենշտայնը «խաղ» բառը կիրառում էր ոչ թե առաջնային իմաստով, այլ հավելիմաստով: Լեզվափիլիսոփան զուգահեռներ էր անցկացնում խաղի և լեզվական գործունեության միջև՝ նպատակ հետապնդելով բնութագրել *լեզուն՝ որպես խաղ*, որում բառերը տարբեր կերպ են կիրառվում՝ *խնդրելու, շնորհակալություն հայտնելու, մեկնաբանելու, թարգմանելու, կատակելու* և այլնի նպատակով:

Հոդվածի գիտական նորույթը. առաջին անգամ հայ լեզվաբանության մեջ այսչափ լայնամասշտաբ և համընդգրկուն հետազոտություն է կատարվել «լեզվական խաղերի» տեսության ոլորտում՝ ներառյալ վերջիններիս լեզվափիլիսոփայական ակունքների, <գործելու> պատճառահետևանքային կապերի ուսումնասիրությունը, առանցքային տարատեսակների դասակարգման վերլուծությունը:

«Լեզվական խաղերը» հայ լեզվաբանության մեջ քիչ ուսումնասիրված միավորներ են, նպատակահարմար ենք գտել գիտական հանրությանը ներկայացնել «լեզվական խաղերի» համակողմանի ուսումնասիրության շուրջ հայերեն գրականություն՝ անհրաժեշտ տեսական դատողություններով, գործնական օրինակների հանգամանալից վերլուծությամբ և համապատասխան եզրահանգումներով հանդերձ:

«Լեզվական խաղերի» ուսումնասիրությունը *տեսագործական* մեծ արժեք ունի:

Սույն հետազոտության *տեսական նշանակությունն* այն է, որ «լեզվական խաղերի» բովանդակության հանգամանալից քննությանը նվիրված այս հոդվածում առաջադրված հարցադրումներն ու հիմնավորումները կարող են նպաստել «*լեզու-խաղ-մշակույթ*» փոխհարաբերության խնդրի լուսաբանմանը, ինչպես նաև հետագա, նորանոր տեսական հար-

ցաղորումների նյութ ծառայել լեզվամշակութաբանության, իմաստաբանության, փիլիսոփայության և հաղորդակցման տեսության համար:

Բազմաբնույթ այս ուսումնասիրության **գործնական արժեքն** այն է, որ հետազոտության արդյունքները կարող են կիրառվել ոճաբանության, գործաբանության և նշանագիտության դասընթացների ու սեմինարների ժամանակ:

Հարկ է նշել, որ մի շարք գիտակարգերի տեսանկյունից կատարված սույն հետազոտության հիմնախնդիրները վերհանելու և լուծելու նպատակով կիրառել ենք **նկարագրական, զուգադրական և վերլուծական մեթոդները**:

Սույն հոդվածի **նպատակն է** ուսումնասիրել և վերլուծել «լեզվական խաղը»՝ իբրև մշակութային, ոճական, գործաբանական, փիլիսոփայական, իմաստագործառույթային երևույթ: Ուսումնասիրության առջև դրվել են հետևյալ **խնդիրները**.

1. անդրադառնալ խաղի, լեզվի և մշակույթի փոխկապակցվածությունը,

2. լուսաբանել հումորային ազդեցություն ստեղծելուն նպատակամիտված ոճական հնար բառախաղի կիրառման տիրույթը,

3. վերլուծել բառախաղի տարատեսակները:

Հետազոտության **մեթոդաբանական հիմքն** են դասական և արդի լեզվաբանության ականառու ներկայացուցիչների, մշակութաբանների և ականավոր փիլիսոփաների տեսական աշխատությունները:

«Լեզվական խաղերի» տեսությունը՝ որպես «լեզու-խաղ» փոխհարաբերությունը լուսաբանելու միջոց

Կյանքն ու իրականությունը որպես խաղ ընդունելու փաստը վաղուց է բնորոշ մարդկային գիտակցությանը (Маслова 2008). Խաղի հետ է զուգորդվում արարման գործողությունը, դեռևս հին եվրոպացիների ընկալմամբ, աշխարհարարումը մեկնաբանվում էր՝ որպես Բրահմա աստծո խաղ (Ригведа 1989).

Խաղը հասարակական աշխարհի և տիեզերքի կաղապարն է. Յու. Լոտմանը (1992) դիտարկում էր խաղը՝ որպես «կյանքի հիմնական հատկանիշներից մեկը»:

Ա. Բլոկի մեկնաբանմամբ՝ «Կյանքը ճակատագրի խաղն է՝ կրակի և ճակատագրի խաղը» (Маслова 2008).

Հոգեբանները կարծում են՝ խաղն աշխատանքի նախապատկերն է, մարդուն կերտող առաջնային գործունեություն (Потман 1996 : 729)։

Ըստ էության, խաղն անձի աշխարհայացքն ընդլայնելուն, անհատականությունը զարգացնելուն ու կատարելագործելուն ուղղված ստեղծագործական մտածողության և բովանդակալից գործունեության ուրույն տեսակ է։ Այլ կերպ ասած՝ խաղը ստեղծագործական ճկուն միտք, արագ կողմնորոշվելու, ակնթարթորեն, հանպատրաստից գործելու հնարամտություն և փայլուն տրամաբանություն պահանջող գործունեություն է։ Հատկանշական է, որ խաղի կանոնների պահպանման շնորհիվ խաղային ոլորտում լիակատար կարգուկանոն է տիրում։

«Խաղ» երևույթի հանդեպ հետաքրքրությունը տարբեր ուղղությունների գիտնականների կողմից հանգեցրել է բազում հետազոտությունների՝ սկսած հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը (Պլատոն, Ֆ.Շիլեր, Ի.Կանտ, Յ.Հյոյզինգա, Մ.Բախտին, Զ.Ֆրեյդ, Ռ.Բարտ, Մ.Ֆուկո) (Кирюшин А., Асташова А., Новиков Е. 2012. № 8. <https://web.snauka.ru/issues/2012/08/16350>)։

Փաստորեն, դեռևս վաղնջական ժամանակներում խաղային գործունեությանն իրենց աշխատություններում անդրադարձել են փիլիսոփաներ Արիստոտելն ու Պլատոնը։

Ըստ Հ. Գադամերի (1988) առաջադրած դրույթի՝ «խաղն օբյեկտիվ տիեզերական աշխարհ է»։

Հարկ է նշել, որ «խաղ» հասկացության լեզվափիլիսոփայական վերլուծությունը լեզվաբանության դաշտը փիլիսոփայության դաշտի հետ կապող օղակ է։

Լ. Վիտգենշտայնը (1994) «լեզվական խաղ» է անվանել լեզվի տարբեր կիրառումները՝ ինչ-ինչ առարկայի արտաքին տեսքը և չափսը նկարագրելը, իրադարձության մասին տեղեկացնելը, պատմություն հնարելը, թատրոնում խաղալը, կատակելը, վարկածներ առաջադրելը և այլն։

Հետևապես, լեզվական խաղը ոչ թե ինչ-ինչ առարկայի անվանումն է, այլ գործողություն։ «Լեզվական խաղ» ասելով՝ Լ.Վիտգենշտայնը խիստ հետաքրքիր սահմանում էր տալիս. նա ընկալում էր «լեզվական խաղերը՝ որպես կենսածն», «որպես կյանքի մեջ ընկղմված» լեզվի, գործողության և խաղի կանոնների միասնություն։

Փաստորեն, Լ.Վիտգենշտայնը դիտարկում էր լեզուն ոչ թե որպես նշանային համակարգ, այլ որպես <գործիք>, գործելակերպ, գործունեություն, լեզվական խաղերի <ընտանիք> և զանազանություն: Ընդ որում, լեզվափիլիսոփան գտնում էր, որ խաղերի զանազանությունը դիտարկելիս բոլոր խաղերին բնորոշ մեկ ընդհանուր հատկանիշ չենք կարող նշել: Այլ կերպ ասած՝ գոյություն չունի ընդհանուր հատկանիշ, որը կբնութագրի ցանկացած խաղ: Այսպիսով, ինչպես խաղերին առհասարակ, այնպես էլ տարատեսակ լեզվական խաղերին հնարավոր չէ տալ մեկ ընդհանուր սահմանում, քանզի խաղերը տարբեր հատկանիշներ ունեն: Հետևապես, խնդրո առարկա երևույթը սահմանում ենք՝ ելնելով ինչ-ինչ սահմանումներից:

Վերոշարադրյալն ամփոփելու նպատակով նշենք, որ Լ. Վիտգենշտայնի «լեզվական խաղերի» ուսմունքը դիտարկվում է իմաստագործաբանական և հաղորդակցական տեսանկյուններից՝ որպես լեզվական գործունեության արտապատկերում և կադապարում: Փաստորեն, նման ուսումնասիրությունը հույժ կարևոր է գործաբանական լեզվաբանության ակունքների լուսաբանման տեսակետից:

Ուշագրավ է այն փաստը, որ Լ. Վիտգենշտայնի գաղափարները լայն մեկնաբանությունների հնարավորություն են ընձեռում: Ուստի, XX դարի երկրորդ կեսին արձանագրված շրջադարձային փոփոխությունների արդյունքում գործաբանության արժևորման հետևանքով առաջացած «լեզվական խաղերի» տեսության ուսումնասիրությանն իր աշխատություններում հանգամանորեն անդրադարձել է հայազգի լեզվափիլիսոփա Գ. Գրիգորյանը (1986, 2006), որի արժեքավոր աշխատությունները նվիրված են Լ.Վիտգենշտայնին և լեզվաբանական հետազոտությունների համար ինքնին արժեքավոր «լեզվական խաղերի» ուսմունքին:

«Լեզվական խաղերի» քննությունը լեզվամշակութաբանական համատեքստում

Գիտության զարգացման արդի փուլում հույժ կարևոր է քննել լեզվի, խաղի և մշակույթի փոխկապակցվածության խնդիրը, «լեզվական խաղերի» տեսությունը դիտարկվում է լեզվամշակութաբանական համատեքստում՝ նպաստելով ոչ միայն լեզու-խաղ-մշակույթ փոխհարաբերության, այլև միջմշակութային հաղորդակցության առանցքային խնդիրների մանրազնին ուսումնասիրությանը:

Լեզվամշակութաբանական լայն համատեքստում դիտարկելի են «լեզվական խաղ» և «բառախաղ» եզրույթները, որոնց զուգադրական ուսումնասիրությունը խիստ կարևոր է մշակութաբանության ուսումնասիրության համար, քանի որ լեզվամշակութային տեղեկատվակիր խնդրո առարկա հասկացություններն արտացոլում են տվյալ ազգի մշակույթը, ազգային մտածողությունը, խառնվածքը, իրազեկում այս կամ այն լեզվի պատմամշակութային զարգացման ընթացքի մասին:

Վ. Մասլովան (2001) սահմանում է լեզվամշակութաբանությունը որպես «լեզվաբանության և մշակութաբանության սահմանագծին ծագած հումանիտար գիտաճյուղ, որն ուսումնասիրում է ազգային լեզվում <մարմնավորված> և լեզվական գործընթացներում դրսևորվող հոգևոր մշակույթը»:

Ուշագրավ է այն փաստը, որ տարբեր է բառախաղերի կիրառման հաճախականությունը յուրաքանչյուր լեզվում և ազգային մշակույթում՝ պայմանավորված հաղորդակցվողների՝ մշակութաբանական հիմքեր ունեցող համոզմունքներով: Բառախաղի թե՛ կիրառումը, և թե՛ ընկալումը փաստում են, որ անձը հաղորդակցման յուրօրինակ մշակույթով է օժտված: Փաստորեն, բառախաղերը հաճախակի կամ հազվադեպ կիրառելու միտումը պայմանավորված է մշակութային տարբերություններով: Այն է՝ առավել անմիջական շփման կողմնակից, կատակասեր ժողովուրդներն իրենց խոսքը հաճախ են «համեմում» բառախաղերով՝ ի տարբերություն առավել պահպանողական ժողովուրդների: Հաղորդակցության մեջ ընդգրկելով հումորային տարրը՝ հաղորդակցվողներն առավել դյուրին և սահուն են դարձնում հաղորդակցման գործընթացը:

Հարկ է նշել, որ միջազգային գիտական հարթակներում մշակութային հարթության վրա ժողովուրդների շփումը ենթադրում է գիտության զարգացման արդի փուլում չափազանց կարևոր խնդիրների՝ միջմշակութային հաղորդակցության, ինչպես նաև լեզվի և մշակույթի հարաբերակցության արծարծումը: Անդրադարձ է կատարվում նաև լեզվամշակութաբանական հետազոտությունների թիրախ «լեզվական խաղերին»:

Այսպիսով, լեզվամշակութաբանությունն ուսումնասիրում է մշակութային ուրույն դրսևորում «լեզվական խաղ» հասկացությունը, որի դերը հսկայական է լեզուն յուրացնելու գործընթացում:

Օտար լեզուները, մասնավորապես՝ անգլերենն արդյունավետ դասավանդելու նպատակով նորարարական մեթոդների կիրառմամբ խրախուսելի է գրական աղբյուրներից ընտրված լեզվական խաղի բազում օրինակներ պարունակող տեքստերի մանրագնին վերլուծությունը, որը նպաստում է տեքստի լիարժեք, խոր ընկալմանը, ուսանողների լեզվամտածողության և համապատասխան լեզվական հմտությունների զարգացմանը:

Փաստորեն, բառախաղերի կիրառումն առանձնակի կարևորություն ունի օտար լեզվի դասավանդման գործընթացում, քանզի այն նպաստում է ուսումնառական ակտիվ գործունեության կազմակերպմանը: Արդյունքում, յուրօրինակ մտքեր ձևակերպելու, հետաքրքիր տեսակետներ փոխանակելու շնորհիվ զարգանում է ուսանողների վերլուծական մտածողությունը, ընդլայնվում նրանց մտահորիզոնը:

Բառախաղի կիրառումը գեղարվեստական ստեղծագործություններում

Հետաքրքրական է այն փաստը, որ ժամանակակից լեզվաբանության մեջ «լեզվական խաղ» են համարվում գեղարվեստական ստեղծագործություններում հաճախադեպ *լեզվական արտահայտչամիջոցները*:

Լեզվաբանները համակ ուշադրությամբ են ուսումնասիրում լեզվական խաղի առավել լայն կիրառում ունեցող տեսակը՝ բառախաղը, որը ստեղծելու նպատակով գրողները խախտում են լեզվական նորմերը՝ նպատակ հետապնդելով յուրօրինակ արտահայտչականություն և ուրույն երանգավորում հաղորդել խոսքին:

Ստեղծագործական յուրօրինակ վարպետությամբ օժտված գրողները՝ Ուիլյամ Շեքսպիրը, Օսկար Ուայլդը, Լուիս Քերուլը և ուրիշներ, իրենց ստեղծագործություններում կիրառել են բավականին հետաքրքիր բառախաղեր, որոնք ի ցույց են դնում նշյալ գրողների ստեղծագործական ողջ ներուժը: Արդյունքում, միևնույն համատեքստում այս կամ այն բառի ունեցած հնարավոր նշանակությունների շուրջ ընթերցողի ընկալունակության շրջանակներում մի շարք զուգորդություններ են առաջանում:

Էլիզաբեթյան հանդիսատեսն առանձնակիորեն էր սիրում բառախաղեր, և Շեքսպիրը գրավում էր բոլորի ուշադրությունը՝ ստեղծագործություններում բառախաղեր կիրառելու բացառիկ շնորհով: «Ռոմեո և

Ջուլիենտի» շատ կերպարներ երկխոսության մեջ զավեշտական բնույթի, կերպարակերտ բառախաղեր են կիրառում (<https://punsnjokes.com/author/celestino-miller/>).

«Ռոմեո և Ջուլիետ» պիեսի սկիզբն ազդարարող կատակերգական երանգավորմամբ բառախաղերը մեծապես ոգեշնչում են ընթերցողին (<https://punsnjokes.com/author/celestino-miller/page/359/>).

Եվ այսպես, Կապուլետի երկու աշխատավորները՝ Սամփսոնը և Գրեգորին, բողոքում են կատարվելիք աշխատանքից: Նրանց կատակները հիմնված են *"carry coals," "collier," "choler,"* և *"collar"* բառերի նմանատիպ հնչողության վրա: Տվյալ համատեքստում Կապուլետի ծառաները բառացիորեն «*ածուխ տանելու*» շուրջ կատակում են:

Ընդ որում, Շեքսպիրի օրոք *"to carry coals"* արտահայտությունը նշանակում էր «*վիրավորանքի առարկա լինել*», մինչդեռ այժմ *"to carry coals"* արտահայտությունը բառարաններում ամրագրված է «*ածուխ կրել՝ անմիտ բան անել, զուր տեղն աշխատել*» նշանակությամբ:

SAMPSON: *Gregory, on my word we'll not **carry coals**.*

GREGORY: *No, for then we should be **colliers**.*

SAMPSON: *I mean, an we be in **choler**, we'll draw.*

GREGORY: *Ay, while you live, draw your neck out of **collar**. (1.1.1-4)*

SAMPSON: *I strike quickly, being **moved**.*

GREGORY: *But thou art not quickly **moved** to strike.*

SAMPSON: *A dog of the house of Montague **moves** me.*

GREGORY: ***To move** is to stir, and to be valiant is to stand. Therefore if thou art **moved** thou runn'st away. (p. 10)*

Երկխոսության վերջին հատվածում *"to move"* բայի հնգակի կիրառումը բառախաղի ստեղծման հրաշալի միջոց է ծառայում՝ մատնանշելով «*շարժվել*», «*հուզել*» (բարկություն, ծիծաղ) *առաջացնել*», «*դրդել, հարկադրել*» իմաստները: Առանցքային տեսարաններում հայտնի մեջբերումների շուրջ եզակի բառախաղերի մեկնաբանություններն ընթերցողներին ժպիտ են պարգևում:

Բառախաղի կիրառմամբ հեղինակներն ընթերցողներին թույլ են տալիս լարված պահերից դադար առնել: Ամենահայտնի ստեղծագործություններից մեկում՝ «*Ռոմեո և Ջուլիենտում*», հումորի վարպետ Շեքսպիրի հյուսած սրամիտ, փայլուն, հիշարժան բառախաղերը դարեր շարունակ գերել են ընթերցողներին

(<https://study.com/academy/lesson/puns-in-romeo-and-juliet-act-1.html>).

Առաջին ակտում, երբ Մերկուցիոն հորդորում է Ռոմեոյին շարունակել Կապուլետի դիմակահանդեսին մասնակցելու ծրագիրն ու պարել, Ռոմեոն հրաժարվում է՝ պատճառաբանելով, որ Մերկուցիոյի նման **«ճկուն ներքաններ»** չունի, թեև **«կապարե հոգի»** ունի (Romeo and Juliet by William Shakespeare. What are some examples of puns in Romeo and Juliet? <http://nosweatshakespeare.com/resources/shakespeare-puns/>)

Mercutio: Nay, gentle Romeo, we must have you dance.

Romeo: Not I, believe me: you have dancing shoes with nimble soles. I have a soul of lead. (Shakespeare 1997)

(<https://study.com/academy/lesson/puns-in-romeo-and-juliet-act-1.html>)

Հարկ է նշել, որ վերոնշյալ օրինակում **հնչյունական մակարդակի բառախաղի** ստեղծմանը նպաստել է **‘sole’** և **‘soul’** նույնահունչ բառազույգի կիրառումը: Հումորային ազդեցության վերջնարդյունքով նշյալ բառային միավորները թե՛ ուղղագրությամբ, և թե՛ իմաստներով տարբերվող, սակայն նմանատիպ հնչողություն ունեցող բառեր են՝ **համահունչ նույնանուններ**: **«Ներքան»** նշանակող **“sole”** և **«հոգի»** իմաստով **“soul”** բառերի շուրջ խաղ առաջացրած բառակատակը Ռոմեոյի բանաստեղծական էության և մեղամաղձոտ սիրո մասին է փաստում (<https://punsnjokes.com/author/celestino-miller/>).

Romeo and Juliet by William Shakespeare. What are some examples of puns in Romeo and Juliet?

Ստորև մեջբերենք առաջին գործողության առաջին տեսարանից մեկ այլ օրինակ, որում Ռոմեոն բառախաղ է կերտում սիրահարված լինելու գաղափարի շուրջ.

BEN: In love?

ROM: Out-

BEN: Of love?

ROM: Out of her favour, where I am in love. (p. 165)

Խառնաշփոթ առաջացնող այս օրինակում սիրահարված Ռոմեոն ամենակին ծիծաղելու տրամադրություն չունի: Այնուամենայնիվ, այն ոչ էլ աներևակայելի տխուր տեսարան է համարվում, քանի որ Շեքսպիրը բառախաղ է կիրառում՝ անհեթեթության որոշակի տարր ներմուծելու նպատակով:

Առաջին ակտի 4-րդ տեսարանում Ռոմեոն և Մերկուցիոն կիրառում են հետևյալ բառախաղը.

ROMEO: *Well, what was yours?*

MERCUTIO: *That dreamers often lie.*

ROMEO: *In bed asleep while they do dream things true. (I.IV.54-56)*

Ինչ խոսք, բառակատակի թիրախ *"to lie"* բայն առաջնային իմաստի շրջանակներում ենթադրում է՝ «երազողները պատկած են», մինչդեռ այլ անկյան տակ վերլուծելիս պարզորոշ է դառնում, որ գրողը նկատի է ունեցել՝ «երազողները երազների միջոցով իրենք իրենց են խաբում» (<https://punsnjokes.com/author/celestino-miller/>).

Ստորև ներկայացնենք *"clouds"*-«ամպեր» և *"clouds"*-«դժգոհություն, թախիծ» բառազույգի կիրառմամբ բառախաղի ևս մեկ հետաքրքրական օրինակ.

MONTAGUE: *Many a morning hath he there been seen,*

With tears augmenting the fresh morning's dew,

*Adding to **clouds** more **clouds** with his deep sighs. (p.19)*

Ռոզալինի սիրո փնտրտուքներով մտահոգ Ռոմեոն բառախաղի կիրառման է դիմում «Ռոմեո և Ջուլիետի» առաջին գործողության չորրորդ տեսարանում Մերկուցիոյի հետ քայլելիս: Ռոմեոն, որին Բենվոլիոն հորդորում է մասնակցել Կապուլետի խնջույքին, պատասխանում է.

ROMEO: *Give me a torch: I am not for this ambling;*

*Being but **heavy**, I will bear the **light**. (I.iv.11-12)*

«Լույս»-*"light"* բառի շուրջ հյուսված բառախաղը վերաբերում է և՛ «ոգու կորովը մեղմելու» փորձին, և՛ «ջահի լույսին»: Ռոմեոն հակադիր բառերի երկակի իմաստների հետ է «խաղում»՝ նախ ակնարկելով, որ «տխուր» է (*"heavy"*)՝ Ռոզալինի հանդեպ անպատասխան սիրո հարուցած թախիծի պատճառով, սակայն միևնույն ժամանակ հավաստում է, որ «հոգով ուժեղ է», ուստի կտանի ջահը՝ լույսի, լուսավորելու համար (Puns by Romeo.

<https://study.com/academy/lesson/puns-in-romeo-and-juliet-act-1.html>)

Վերաձննդի դարաշրջանում բառախաղը բարձր գնահատականի արժանացած զենք էր բանաստեղծի զինանոցում:

Շեքսպիրի հանճարը խորհրդանշող բառախաղերի կիրառումը լուսաբանում է, թե ինչպես են գործում լեզուն և բանաստեղծական արվեստը

(<http://drama->

education.suite101.com/article.cfm/shakespeare_in_the_classroom#ixzz0Pk8mclRF).

«Բանաստեղծական արվեստը նախնական գործառնություն ծնվում է խաղի մեջ և որպես խաղ՝ սրբագործված խաղ» (Хейзинга 1997:141).

Շեքսպիրն այնքան հաճախ և համակողմանիորեն էր խաղում լեզվի հետ, որ այդ թեմայով ամբողջական գրքեր են գրվել: *“A Midsummer Night’s Dream”* ստեղծագործության բաղադրյալ բառախաղերում Շեքսպիրի կերպարները փոքրիշատե նման հնչող, սակայն խիստ տարբեր իմաստներով բառերն այլ բառերի հետ են շփոթում: Օրինակ, *“there we may rehearse most **courageously**”* մալապրոպիզմ պարունակող նախադասության մեջ *“courageously”* բառը կիրառվում է *“correctly”* բառի փոխարեն, թե՛ *«քաջաբար, խիզախորեն»*, և թե՛ *«հիանալի, հրաշալի, գեղեցիկ, շքեղ հագնված»* իմաստներով (<https://www.folger.edu/explore/shakespeares-works/a-midsummer-nights-dream/>).

Բառախաղ պարունակող օրինակները բովանդակային պատշաճ վերլուծության են ենթարկվում **սեմանտիզացիայի՝ իմաստավորման** միջոցով, այն է՝ լեզվական միավորին իմաստ վերագրելու, վերջինիս նշանակությունը բացահայտելու գործընթացի միջոցով:

Մակդիիներ, փոխաբերություն, շրջուն շարադասություն պարունակող ներքոհիշյալ հատվածում բառախաղի ստեղծմանը նպաստել են *“sun”* (արև) և *“son”* (որդի) համահունչ բառերը.

BENVOLIO: *Madam, an hour before the worshiped **sun** peered forth the golden window of the east* (120), <...>

*So early walking did I see your **son**.* (125)

Շեքսպիրի բառակատակներն անգլերենում ամենահաճախ մեջբերվող արտահայտություններն են, օրինակ՝ *«Ռիչարդ երրորդ»* ստեղծագործության բացման տողերը.

“Now is the winter of our discontent made glorious summer by this sun of York (Shakespeare “Richard III,” 2000),” որում Ռիչարդը ներկայանում է՝ որպես *“a son of the house of York.”*

Վերոնշյալ բառակատակը կիրառելով՝ Շեքսպիրը ձմռան ու ամռան եղանակները ներկայացնում էր *«մռայլ և լավ ժամանակների»* գաղափարով (<http://nosweatshakespeare.com/resources/shakespeare-puns/>).

Բերված օրինակում բառախաղ է «հյուսվել» **sun** և **son** **հնչյունական՝ համահունչ նույնանունների** կիրառմամբ: Քննարկման ենթակա **sun** և **son** բառերի ընդհանուր եզրն է հնչողության նմանությունը, որն առավել տպավորիչ է դարձնում խոսքը՝ յուրօրինակ արտահայտչականություն հաղորդելով վերջինիս:

Հարկ է նշել, որ Օսկար Ուայլդի ստեղծագործություններում ևս բառախաղի կիրառման հետաքրքրական օրինակներ են առանձնանում: “*The Importance of Being Earnest*” գեղարվեստական ստեղծագործությունը հոմոֆոնային բառախաղերի բազում օրինակներ է պարունակում: Օր” բառախաղային միավորներ են նմանատիպ հնչող “*earnest*” ածականը և “*Ernest*” կերպարի անունը: Սեսիլին ցանկանում է ամուսնանալ “*Ernest*” անունը կրող անձնավորության հետ, քանի որ լրջություն խորհրդանշող “*earnest*” համանուն ածականը վստահություն է ներշնչում՝ արտացոլելով Էռնեստին սիրելու պատճառը (<https://study.com/academy/lesson/puns-in-the-importance-of-being-earnest.html>).

*Cecily: You must not laugh at me, darling, but it had always been a girlish dream of mine to love someone whose name was **Ernest**.*

*There is something in that name that seems to inspire absolute confidence. I pity any poor married woman whose husband is not called **Ernest** (Wilde, 1961).*

Հատկանշական է, որ բառախաղի միջոցով հեղինակը նպատակ է հետապնդում արտահայտել կերպարի հանդեպ իր դիրքորոշումը: Արդյունքում, ընթերցողը հեղինակի վերաբերմունքի մասին գործաբանական բնույթի տեղեկատվություն է ստանում:

Եզրակացություն

«Լեզու-խաղ» փոխհարաբերության խնդիրը որոշելիս պարզորոշ դարձավ, որ Լ. Վիտգենշտայնը լեզուն որպես խաղ էր դիտարկում:

«Լեզվական խաղ» եզրույթի համակողմանի ուսումնասիրությունը թույլ է տալիս ենթադրել, որ նշյալ եզրույթը հնարավորություն է ընձեռում ամենայն ճշգրտությամբ և լավագույնս արտապատկերել խոսքային իրադրությունը, հաղորդակցական իրադրությունը:

Լեզվական նորմերի պահպանման «հորդորով» հանդերձ՝ «**լեզվական խաղը**» լեզվական տիրույթում արտացոլում է *ավանդականը*, մինչ-

դեռ «**բառախաղի**» զանազան տարատեսակները *լեզվական արդի երևույթների խորհրդանիշ* և *նոր խոսք* են լեզվաբանության մեջ:

«Լեզվական խաղ» և «բառախաղ» բառային միավորների զուգադրական ուսումնասիրությունը լեզվամշակութաբանության ուսումնասիրության հարուստ նյութ է:

Ինչպես կատարված վերլուծություններն են ցույց տալիս, լեզվական խաղերն արտահայտչական և հաղորդակցական գործառույթներ իրականացնող, իմաստային հսկայական ներուժով լեզվամշակութաբանական, լեզվաոճական, գործաբանական և նշանագիտական բնույթի միավորներ են, որոնցում արտացոլվում են լեզվակրի մտքի թռիչքն ու աշխարհայացքը:

Գրականության ցանկ

1. Alekseeva L. (2003). *Interpretatsiya. Stilisticheskiy entsiklopediyskiy slovar' russkogo yazyka*. Retrieved from <https://rus-stylistics-dict.slovaronline.com/40>.
2. Wittgenstein L. (1994). *Filosofskie issledovaniya* (FI) // *Filosofskie raboty*. Moscow: Gnozis, 274 pages.
3. Gadamer H.-G. (1988). *Istina i metod: Osnovy filosofskoy germeneytiki*. Moscow: Progress, 704 pages.
4. Grigoryan G. (1986). Wittgenstein i Strawson o probleme chuzhikh soznaniy // *Istoriko-filosofskiy ezhegodnik*. Moscow, pp. 191–207.
5. Grigoryan G. (2006). *Diskurs, yazykovye igry i ponimanie chuzhikh kultur // Yazyk, kommunikatsiya i etnicheskii mentalitet*. Yerevan: Zangak-97, pp. 158–169.
6. Kiryushin A., Astashova A., Novikov E. (2012). *Metodologiya issledovaniya fenomena igry: klassicheskie i innovatsionnye predstavleniya // Sovremennye nauchnye issledovaniya i innovatsii*. Issue 8. Retrieved from <https://web.snauka.ru/issues/2012/08/16350>.
7. Krongauz M. (2005). *Semantika*. Moscow: Russian State University for the Humanities, 400 pages.
8. Lotman Yu. (1992). "Pikovaya dama" i tema kart i kardovoy igry v russkoy literature nachala XIX veka // *Izbrannye stat'i v trekh tomakh*. Vol. 2. Tallinn, 391 pages.
9. Lotman Yu. (1996). *O poetakh i poezii*. St. Petersburg: Iskusstvo - SPB, 846 pages.
10. Maslova V. (2008). *Politicheskii diskurs: Yazykovye igry ili igry v slova?* (Politicheskaya lingvistika). Yekaterinburg, Vol. 1(24), pp. 43–48.

11. Maslova V. (2001). *Lingvokul'turologiya: uchebnoye posobiye*.
12. Novyy slovar' metodicheskikh terminov i ponyatiy. Teoriya i praktika obucheniya yazykam. Retrieved from https://methodological_terms.academic.ru/1770.
13. Rigveda. *Mandaly I-IV*. Moscow: Nauka, 1989, 768 pages.
14. Riker P. (1995). *Konflikt interpretatsiy. Ocherki o germeneytike*. Moscow.
15. Tretyakova I. (2019). *Interpretatsiya kak sposob ponimaniya khudozhestvennogo teksta. Yazykoznanie i literaturovedenie*. Retrieved from <https://hedclub.com/ru/article/41>.
16. Huizinga J. (1997). *Chelovek igrayushchiy*. Moscow: Progress. Traditsiya, 416 pages.
17. Barbara Mowat and Paul Werstine. Reading Shakespeare's Language: A Midsummer Night's Dream. <https://www.folger.edu/explore/shakespeares-works/a-midsummer-nights-dream/>
18. Benjamin Unfried, Meredith Spies. Puns in Romeo and Juliet. Act I, 11/21/2023. <https://study.com/academy/lesson/puns-in-romeo-and-juliet-act-1.html>
19. Celestino-Miller. (March 18, 2024). Puns. <https://punsnjokes.com/author/celestino-miller/page/359/>
20. Ellen Wilson. Shakespeare in the Classroom. Shakespearean Puns Grab Students' Attention. Jan 23, 2008. <https://www.worldtranslationcenter.com/blog-posts/shakespeare-for-all>
21. Examples of Pun in Literature. <http://nosweatshakespeare.com/resources/shakespeare-puns/>.
22. Jan Madden. The "Punny" Language of Shakespeare. June 14, 2013. <https://www.worldtranslationcenter.com/blog-posts/shakespeare-for-all>
23. Oscar W. (1961). *Plays. The Importance of Being Earnest*. Moscow, Foreign Languages Publishing House, pp. 281-350.
24. Poetic puns. http://drama-education.suite101.com/article.cfm/shakespeare_in_the_classroom#ixzz0Pk8mcIRF
25. Puns in "The Importance of Being Earnest." Characters & Examples. <https://study.com/academy/lesson/puns-in-the-importance-of-being-earnest.html>
26. Romeo and Juliet by William Shakespeare. What are some examples of puns in Romeo and Juliet? <http://nosweatshakespeare.com/resources/shakespeare-puns/>
27. Shakespeare W. (2008). *Much Ado About Nothing*. The Floating Press.
28. Shakespeare W. (2000). *Richard III*. Oxford University Press, 414p.
29. Shakespeare W. (1997). *Romeo and Juliet*. Thomas Nelson & Sons, 280p.

30. What are 10 puns in Romeo and Juliet and what do they mean?
<http://www.enotes.com/homework-help/what-10-puns-romeo-juliet-what-do-they-mean-49547>

31. William Shakespeare Biography.
<https://www.shakespeare.org.uk/explore-shakespeare/shakespedia/william-shakespeare/william-shakespeare-biography/>

**ԿԱՐԵՎՈՐ ՆԵՐԴՐՈՒՄ Հ. ՇԻՐԱԶԻ ԼԵԶՎԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Լույս է տեսել Ս. Վ. Համբարձումյանի աշխատությունը՝ նվիրված անվանի բանաստեղծ Հովհաննես Շիրազի «Հայոց դանթեականը» պոեմի բառապաշարին:

Մենագրության սկզբում՝ «Երկու խոսք» վերնագրի ներքո, հեղինակը նախ նշում է, որ ուսումնասիրությունը իր թեկնածուական ատենախոսությունն է, որ տպագրվում է մասնակի լրացումներով և շտկումներով:

Ձեռնամուխ լինելով Հ. Շիրազի «Հայոց դանթեականը» պոեմի բառապաշարի ուսումնասիրությանը՝ Ս. Համբարձումյանը, բնականաբար, նախ պատշաճ մակարդակով անդրադարձել է խնդրո առարկային որոշակիորեն առնչվող աշխատություններին, բարեխղճորեն նշել, թե ինչ ծավալի ու բնույթի աշխատանքներ են մինչ այդ կատարվել նշված ուղղությամբ, ապա և ներկայացրել, թե ինչ է ավելացրել նախորդների աշխատանքին՝ կատարելով բառապաշարի համապատասխան դասակարգում և վերլուծություն:

Կարևոր է նշել, որ հեղինակը հատկապես փորձել է վերհանել նշված պոեմի բառապաշարի այն շերտը, որը նորություն է, ինքնատիպ կիրառություն ունի և առանձնապես բնորոշ է Շիրազի ստեղծագործությանը: Այսպիսով, ինչպես և հարկն է, խուսափել է հանրահայտ համագործածական բառերի ավելորդ վերլուծություններից՝ հատկապես շեշտը դնելով նորահայտ, նոր իմաստներով ու ոճական յուրօրինակ դրսևորումներով առկայացած բառապաշարին, ինչպես նաև արևելահայերենի գրական նորմերից շեղվող, այդ թվում և գրաբարյան, արևմտահայերենյան և օտարամուտ բառերին, որոնք ոճական որոշակի դեր և նշա-

¹ Ս. Վ. Համբարձումյան, Հովհաննես Շիրազի «Հայոց դանթեականը» պոեմի բառապաշարը», Ե. ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2025 թ., 214 էջ:

նակություն ունեն խնդրո առարկա պոեմի բանաստեղծական հյուսվածքում:

Արդի հայերենի հանրահայտ ծավալուն բառարանների և մի շարք այլ բառացանկերի միջոցով հեղինակն առանձնացրել է պոեմի չբառարանագրված բառերը, բառարանային տվյալներից ելնելով՝ որոշել միմիայն կամ առաջինը <. Շիրագի երկերում գործածված բառապաշարը: Նման դեպքերում բաղադրյալ բառերը հիմնականում ընկալվում են որպես հեղինակային նորակազմություններ: Միաժամանակ ուսումնասիրության հեղինակը իրավացիորեն նկատում է, որ նորահայտ բաղադրյալ բառերը ոչ միայն հեղինակային են, այլև առնվել են մայր ժողովրդի խոսակցական լեզվի հարուստ գանձարանից:

Աշխատանքի երկրորդ գլխում կատարվել է բառապաշարի բառակազմական վերլուծություն: Նախ ներկայացվել են այն պարզ բառերը, որոնք ոչ լայն գործածության ունեն և մասամբ չեն վկայվել հանրահայտ ծավալուն բառարաններում: Այնուհետև անդրադարձ է կատարվել նորահայտ բաղադրյալ բառերին՝ ներկայացվելով բարդ, ածանցավոր, բարդաձանցավոր և բազմաբարդ տեսակներով: Բարդ բառերը բնութագրվել են նախ ըստ հոդակապով և անհոդակապ դրսևորումների, ապա և բաղադրիչների խոսքիմասային պատկանելությամբ, առանձին ենթակետով տրվել են միացման գծիկով կազմությունները:

Ածանցավորների մեջ առանձնանում են բառակազմական *-վ-* ածանցով կազմությունները, որոնք բավական լայն գործածություն ունեն պոեմում: Հեղինակը նկատում է, որ *-վ-* մասնիկը, բաղադրվելով անորոշ դերբայի *-ել* վերջավորության հետ, գոյականներից սերում է բայեր, ուստի և այդ դեպքում *-վել* մասնիկն ունի բառակազմական գործառույթ (էջ 124): Կասկածելի է թվում հետևյալ բայերի՝ *-վել* ածանցով կազմությունը բարդ բաղադրող այնպիսի հիմքերից, որոնց երկրորդ բաղադրիչը ներգործական սեռի բայ է՝ *աստղափնջվել, հրթիռվել, բազկալքվել, վրեժավառվել, քարայրվել* և այլն (էջ 129): Օրինակ, բառերից առաջին երկուսը, անկասկած, *աստղափնջ* և *հրթիռ* գոյականներից *-վել* ածանցով կազմված բայեր են:

Աշխատանքի երրորդ՝ «Իմաստային-գործառական վերլուծություն» գլխում, անդրադառնալով հեղինակային-անհատական բառապաշարին, Ս. Համբարձումյանը նկատում է. «Դրանք բանաստեղծի գեղարվեստական խոսքի մեջ սովորական կամ դիպվածային կազմություններ են,

որոնք անհրաժեշտաբար ստեղծվել և գործածվել են հեղինակային ոճի հիմունքով, որոնց շնորհիվ նաև երևույթի նկարագրությունը դառնում է պատկերավոր և ինքնատիպ» (էջ 138): Այսպիսով, նշված բառաշերտը ներկայացվում է իմաստային 14 խմբով՝ նկատի առնվելով նաև բառերի սերող հիմքի իմաստային մերձությունը կամ ընդհանրությունը: Յուրաքանչյուր իմաստային խմբում էլ առանձնացվում են չբառարանագրված բառերը, ինչպես՝ *ազգ-անտառ, մարդագանգ, սելջուկաժին, հայակերպ, մասիսաչափ, հիսուսախաչ, վրիժաճարավ, վշտազորք, գաղտնաեղեռն, եղեռնապետիլ, մահակսկիժ, սպանդվել, ահեղազարհուր, մտախեղել, կես-Հայաստան, հազարավերք, նարեկամոռնչ* և այլն (էջ 139-152):

Այնուհետև առանձին ենթագլուխներում քննվում են նախ փոխաբերական իմաստներով կիրառված բառերը՝ այս դեպքում ևս չբառարանագրված օրինակների նշումով, ապա և բառային կապակցությունները, որոնք, ինչպես և հեղինակն ինքն է վկայում, սովորական բառակապակցություններից տարբերվում են՝ լինելով բառային մակարդակի իրողություններ (էջ 155): Փաստորեն վերջիններս հարադրավոր կազմությամբ բառեր են կամ դիտվել են որպես այդպիսին՝ ներկայացվելով ըստ բաղադրիչների շարահյուսական հարաբերության, այսպես՝ որոշային կապակցություններ՝ երկանդամ, եռանդամ, նախադաս, հետադաս՝ *անաստված երկիր, անգղյաթաղան, գազաներախ գերեզման, եղեռնավկա անապատ, հայոց արյուն, ազգ արնաքամ, անապատ մահաշուրջառ, ռոմակ վագրենագրահ, ցնորք դժնարես, հիսուսյան ահեղ դատաստան, եղեռն հայոց աղերես* և այլն (էջ 155-167), հատկացուցչային կապակցություններ՝ դարձյալ երկանդամ, եռանդամ, նախադաս, հետադաս՝ *ապշանք-շմանքի փուշ, Աստծո լաց, արյան գիրք, գայլ լեռների, դեղնադագաղ անապատի, կանթեղ երկնի, հայոց արմատի արմատ, առեղծվածի շնական շրթունք, հայության կարմիր արցունք, անմեղ ցեղ Հայաստանի* և այլն (էջ 169-174): Պետք է նկատել, որ դեռևս խիստ հստակեցման կարիք կա, թե նման օրինակներից որոնք պետք է համարել բառային կապակցություն կամ հարադրավոր բառ և որոնք սովորական բառակապակցություններ, չնայած որ հեղինակն ինքն էլ տեղ-տեղ բառակապակցություն տերմինով է կոչում որոշ օրինակներ, չնայած որ ի սկզբանե դրանք համարել է բառային մակարդակի իրողություն՝ ներկայացնելով «Բառային կապակցությունների գործածությունը» վերնագրի ներքո:

Ուսումնասիրության վերջին գլխում քննության է ենթարկվել արևելահայ գրական լեզվի նորմերից շեղվող բառապաշարը, առանձին ենթագլուխներով անդրադարձ է կատարվել ժողովրդախոսակացական բառերին ու բառաձևերին, փոխառյալ բառապաշարին և դրանց հիմքով կազմություններին, ի վերջո նաև քննվել են պոեմում ոճավորման այս կամ այն միտումով գործածված գրաբարյան և արևմտահայերեն բառերն ու բառաձևերը:

Սույն մենագրությունը ուրույն ներդրում է հայերենագիտության մեջ՝ հայերենի բառակազմական լայն հնարավորությունները նորովի ներկայացնելու, բառապաշարի ողջ հարստությունը, իմաստային նոր զարգացումները բացահայտելու, այդպիսով և դեռևս չբառարանագրված միավորները ապագայի համապարփակ բառարաններում ընդգրկելու և մի շարք այլ տեսանկյուններից:

Բանասիր. գիտ. թեկնածու. Վ. Մ. Խաչատրյան

ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՓՈՓՈՂ
«ՏԵՂԵԿԱԳԻՐՔ»

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը ի թիվս իր մի շարք կարևոր և հաշվետվական ձեռնարկումների լույս է ընծայում իր ամենամյա գիտական գործունեությունն ամփոփող տեղեկատվական ժողովածու:

Լույս է տեսել 2024 թ. գիտական գործունեությունը ներկայացնող «Տեղեկագիրքը» (կազմողներ՝ Վ. Կատվալյան, Գ. Մխիթարյան, Ն. Հովհաննիսյան):

Գրքի կառուցվածքը բավականին պարզ է, բաղկացած է երկու մասից, առաջինում՝ «ինստիտուտի 2024 թ. գիտական գործունեության հիմնական արդյունքները» (էջ 7-29), երկրորդում՝ «ինստիտուտի 2024 թ. գիտական գործունեության հիմնական արդյունքները՝ ըստ ուղղությունների» (էջ 30-121): Երկրորդ մասում ներկայացված ուսումնասիրությունների վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում են նաև ռուսերեն և անգլերեն ամփոփումներով (էջ 122- 237):

Հիմնական արդյունքները բաժնում նշվում է երկու կարևորագույն արդյունք՝ Ռիվոլյալի հայտնի բառարանում «ազգային ինքնության բառային շերտին», այլև Ս. Գրքի շարահյուսական յուրօրինակ կառույցի քննությունը, նշվում են բազային ֆինանսավորմամբ ստացված՝ «Հայ բարբառների ուսումնասիրություն» (ղեկ.՝ Վ. Կատվալյան), «Հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր» (ղեկ.՝ Գ. Մխիթարյան), «Ընդհանուր և համեմատական, կիրառական լեզվաբանության հարցեր» (զեկ.՝ Վ. Համբարձումյան, Գ. Գրի-

¹ ՀՀ ԳԱԱ Գ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի «Տեղեկագիրք» (2024 թ.), Ե., 2025, ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 240 էջ:

գորյան), «Արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և կոնոնարկման խնդիրներ» (ղեկ.' Թ. Ասոյան) և թեմատիկ ֆինանսավորմամբ ստացված Շիրակի մարզի բարբառային համապատկեր» թեմատիկ ծրագրով (ղեկ.' Վ. Կատվալյան) արդյունքները), այնուհետև՝ մանրամասն տեղեկացվում են «կիրառական աշխատանքների արդյունքները»:

Այդ բաժնի վերջում բերվում է ինստիտուտի տարվա հրապարակումների ցանկը, որը բավականին ընդգրկուն է (էջ 14-29), որից իմանում ենք, որ ինստիտուտի գիտաշխատողները՝ 1) գիտական «ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում» տպագրել են շուրջ վեց տասնյակ (թվով՝ 59) հոդված, ինստիտուտի «Լեզու և լեզվաբանություն» հանդեսի էջերում շուրջ մեկ տասնյակ (թվով՝ 8) հոդված, ինչպես նաև հոդվածներ՝ լույս տեսած «Ջահուկյանական ընթերցումներ», ինստիտուտի կազմակերպած վեց միջազգային և հանրապետական գիտաժողովների նյութերի ժողովածուներում՝ շուրջ հինգ տասնյակ (թոով՝ 46):

Ինչպես կարելի է նկատել, «հունձքը առատ» է, իսկ թե ինչպիսին է նրա բովանդակությունը՝ արծարծվող հարցերի («նյութի») սերտությունը, դա մնում է գիտական միջավայրին՝ մեր օրերի հայերենագիտությանը, որն ունի իր պահանջներն ու խստությունները մեր լեզվի ներկայից հանգուցային խնդիրների ձեռնարկման և լուծումների տեսանկյունից:

Այստեղ, իբրև ընդհանուր տպավորություն նկատենք, որ հիշյալ աշխատանքներում կան բավականին արդիական և կարևոր հարցադրումներով երևան եկածներ, կա նաև հայտնի իրադրությունների վերաբերյալ նոր միջամտություն, որ չենք վարում հիշելու այն հայտնի ասույթը, թե ամեն մի նոր լավ (կամ վատ) մոռացված հինն է, ավելացնենք՝ մոռացության տալու փորձն է: Նման դեպքում առաջ է գալիս խնդիր՝ ավելի հետևողական և գիտական առումով ավելի խիստ լինելու ամեն մի աշխատանքի (վերլուծության, դրույթի շարադրանքի) դեպքում՝ կանխել նախկինում արվածը անտեսելը, շրջանցելը և այլն:

«Տեղեկագրքի» մեծ արժանիք ենք համարում ռուսերեն և անգլերեն լեզուներով ամփոփումներ ունենալը, որոնցում համապատասխանաբար ներկայացվում է լույս տեսած գիտական հոդվածների բովանդակության վերաբերյալ տեղեկություն. ինչպես նշվում է «Երկու խոսք»-ում, «Ըստ գիտահետազոտական աշխատանքների վերոհիշյալ չորս ուղղությունների՝ ներկայացվում են տարվա ընթացքում հրապարակված գրքերի և հոդվածների համառոտ ամփոփագրերը, նախ՝ հայերեն, ապա՝ անգլերեն և ռուսերեն: Հոդվածների օտարալեզու, համառոտ ամփոփագրերը նույնությամբ արտատպվում են համապատասխան գիտական հանդեսներից» (էջ 6):

Ինչպես նախկինում ասել ենք, ինստիտուտի տնօրինության նման ձեռնարկումն ունի գիտակազմակերպական նշանակություն, ավելացնենք՝ այն տեղեկատվական որոշակի նպաստ է հայերենի ուսումնասիրության բնագավառի ատաջընթացին:

Սույն «Տեղեկագրքի» էջերում ամփոփված գիտական հոդվածներից նկատում ենք մի ուշադրության տեղիք տվող իրողություն, դա այն է, որ ինստիտուտի գիտական անձնակազմի ոչ բոլոր ներկայացուցիչներն են, որ հանդես են գալիս գյտական հրապարակումներով, որ տեղին է:

13/01/2025

Տեղի ունեցավ ՀՀԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժնի նախաձեռնությամբ կազմակերպված նյարդահոգեբանության ուղղվածության միջազգային առցանց խորհրդակցությունը: Օրակարգ՝ նյարդահոգեբանական չորս հարց՝ «Կիրառական լեզվաբանությունը և ժամանակակից տեխնոլոգիաները. արհեստական բանականություն», «Նյարդալեզվաբանության ժամանակակից խնդիրները. լեզվամտածողության վերականգնումը լեզվական թեստերի միջոցով», «Հոգեբանականության զարգացման կանխատեսումներ. XXI դ. երկրորդ կեսի նախաշեմին, «Դաշտային մեթոդները լեզվական և միջգիտակարգային հետազոտությունների մեջ»:

Հանդիպմանը մասնակցում էին ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի, փորձաքննությունների ազգային բյուրոյի, ԵՊՀ և ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի, ԵՊՀ, Սանկտ-Պետերբուրգի համալսարանի, ՌԴ գիտությունների ակադեմիայի, ՌԴ լեզվի և ուղեղի կենտրոնի ներկայացուցիչները:

Հաղորդումներով հանդես եկան ոլորտի առաջատար մասնագետներ (Օ. Միտրենինա, Ե. Ռիեխակայնեն, Օ. Դրագոյ, Վ. Զուբով, Պ. Էյսմոնտ, Մ. Կորոլկովա): Քննարկվեցին մի շարք կարևոր խնդիրներ, առանձնապես ուշագրավ էր տեքստի ուսումնասիրության ուղղությունների վերաբերյալ քննարկումը, երկխոսության փոխազդեցության հետազոտության մասին հաղորդումը: Եղան հաղորդումներ ժամանակակից բարբառագիտության մեջ դաշտային մեթոդի կիրառության մասին, ընդգծելի էր խոսակցական լեզվի բնութագրի կազմության և բանավոր խոսքի կորպուսների ստեղծման վերաբերյալ հաղորդումը:

Ներկայացվեց հայ-գերմանական համատեղ աշխատանքով հայերենի, անգլերենի և գերմաներենի զուգադիր շտեմարանի հիմքով ստեղծված LexTale լեզվական իմացության չափման հարցաթերթիկը, նրա զարգացման հեռանկարները: Առաջարկվեց այս ուղղությամբ համատեղ աշխատանք ՌԴ գործընկերների հետ:

24/03/2025

Լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնում քննարկում և ճշգրտում էին այն չափորոշիչները, որոնցով պիտի առաջնորդվեինք տեսակապի միջոցով ՌԴ Կրասնոդարի երկրամասի հայկական դպրոցների աշակերտներին տրված առաջադրանքի կատարման արդյունքները գնահատելիս: Օտար միջավայրում մայրենի բարբառների պահպանությանը նպաստելու խնդիրը կարևորելով՝ հայերենի ուսուցիչների միջազգային միավորման ՌԴ մասնաճյուղի ղեկավարները դիմել էին ԳԱԱ լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի գիտաշխատողներին՝ խնդրելով մասնագիտորեն գնահատելու օտար միջավայրում իրենց մայրենի բարբառների իմացությամբ առանձնացող հայ դպրոցականներին: Առաջադրանքի թեման էր հայերենի տարբեր բարբառներով ներկայացնել Հ. Թումանյանի «Սուտասանը» հեքիաթի բեմադրությունը: Կարևոր էր համարվելու նաև բեմական համոզիչ խաղը, ազգային կոլորիտ ստեղծելու ունակությունը և այլն: Առաջնահերթ համարվեց բարբառային ճշգրիտ թարգմանությանը: Թումանյանի «Սուտասանը» հեքիաթն իր «հաղթարշավը» կշարունակի նաև մերձավոր ու հեռավոր հայ-

կական այլ գաղթօջախներում:

06/05/2025

Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժնի փորձառական հնչյունաբանության խումբը հանդիպում ունեցավ WAV-ի աշխատակիցների հետ: WAV-ը նորաստեղծ հարթակ է, որը ձևավորվել է Առաջատար ծրագրային տեխնոլոգիաների կենտրոնի (CAST) հետ համատեղ: Նա ստեղծում է բնական լեզուների և խոսքի մշակման լավագույն տեխնոլոգիաները հայերենի և այլ լեզուների համար: WAV-ը գերժամանակակից տեխնոլոգիական մեխանիզմ է, որը արհեստական բանականության (AI) գործառույթի միջոցով հնարավորություն է տալիս խոսքը փոխակերպել տեքստի, իսկ տեքստը՝ բնական խոսքի, ինչպես նաև ստեղծել աուդիոգրքեր: Այն հիմնված է խոսքի վերլուծության մոդելների ներդրմային ցանցերի վրա, որը վերջին ժամանակների ամենահուսալի մեթոդներից է լավագույն արդյունք ստանալու համար:

Հնչյունաբանները պարզեցին, որ արհեստական բանականության վրա հիմնված այս գործիքը ընկալում է և՛ բառերը, և՛ առանձին հնչյունները: Շեշտի, տոնայնության, հնչերանգի, ռիթմի և առոգա-

նության հետ կապված խնդիրները լուծում և կարգավորում է WAV-ի թիմը՝ ընտրելով համապատասխան ծայնագրություններ:

Հանդիպման ընթացքում անդրադարձ կատարվեց որոշակի հարցերի՝ կապված կետադրության, ծայնագրությունների մեջ մակարյժ հնչյունների, ինչպես նաև օտար բառերի փոխակերպման և հոմոգրաֆ բառերի հետ:

Խոսվեց նաև բարբառներով կատարված ծայնագրությունները տեքստի վերածելու մասին: Պարզ դարձավ, որ այս ուղղությամբ դեռևս լայնածավալ աշխատանք կա իրականացնելու: Նշվեց, որ բավականին տվյալներ կան հավաքված Գյումրիի բարբառով, աշ-

խատանքներ են տարվում նաև Արցախի բարբառի և արևմտահայերենի շուրջ:

WAV-ի թիմը ներկայացրեց այն միջոցները, համաձայն որի կատարվում է իրենց բազայում ունեցած ծայների փոխակերպման գործընթացը, որը ակտիվորեն կիրառվում է աուդիոգրքերի պատրաստման գործում:

Փոխադարձ հետաքրքրությունները և ընդհանրական նպատակները կարող են հիմք հանդիսանալ հետագա համագործակցության համար: Առաջիկայում հնարավոր են փորձի փոխանակման, տվյալների համատեղ վերլուծության և տեխնոլոգիական համագործակցության տարբերակներ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Գալստյան Ա. Վ., Արշակյան Թ. Ն., Եղանակավորման ըմբռնումը լեզվաբանական ուսումնասիրությունների հարացույցում.....	3
Մեսրոպյան Հ. Հ., Ռշտունիքի բարբառային հայերենի ընդհանուր բնութագիրը (Ըստ ոշտունցիների պատմած ժողովրդական հեքիաթների)	17
Ներսիսյան Վ. Ա., Բառակազմության տեսական և մանկավարժա- կան հարցերի քննությունը Արարատ Ղարիբյանի աշխատություն- ներում	36

ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Թադևոսյան Հ. Մ., Բառերի նոր իմաստային կիրառություններ հայ միջադարյան բժշկարաններում.....	51
Մարգարյան Լ. Գ., Արցախի բնակավայրերի / ի վերջնահնչյուն բաղադրիչով անվանումների քննություն.....,,.....	63

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Աբրահամյան Լ. Ռ., Աբրահամյան Շ. Ռ., «Լեզվական խաղերի» կիրառումը գրական ստեղծագործություններում.....	80
--	----

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Խաչատրյան Վ. Մ., Կարևոր ներդրում Հ. Շիրազի լեզվի բառա- պաշարի ուսումնասիրության մեջ.....	96
ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ	100
ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ	103

CONTENTS

Articles: A. V. Galstyan, TH. Arshakyan. The perception of modality within the linguistic paradigm.– 3. *A. O. Mesripyan*, On the general character of dialectal speech of RShtunik (According to materials of folk-tale of rshtunik).- 17. *V. A. Nersisyan*. Analysis of theoretical and pedagogical aspects of word-formation in the works of Ararat Garibyan. -36. **Discussion:** *H. M. Tadevosyan*. New word-meanings according to the medical books (Grigoris. "Analysis of the nature of man and his ailments", "Book of horse cures").- 51. *L. G. Margaryan*. An analysis of the place names of Artsakh ending in the final sound - *h* [i].- 63. **Reports:** *L. R. Abrahamyan, Sh. R. Abrahamyan*. The use of "language games" in literary works.- 80. **Review:** *V. M. Khatchatryan*, Essential contribution in investigation of Ov. Shiraz's lexicon .- 96. **Book reviews - 100: Science News -103:**

СОДЕРЖАНИЕ

Статьи: *А. В. Галстян, Т. Аршакян*. Восприятие модальности в лингвистической парадигме - 3. *А. О. Месропян*, Общая характеристика диалектной речи Рштуника (По материалам народных сказок рштунцев).- 17. *В. А. Нерсисян*. Анализ теоретических и педагогических вопросов словообразования в трудах Арарата Гарибяна:- 36. **Дискуссии и обсуждения:** *А. М. Тадевосян*. Новые лексические значения по лечебникам (Григорис, "Анализ природы человека и его недугов" "Лечебник лошадей и вообще выючных животных").-51. *Л. Г. Маркарян*. Исследование топонимов населенных пунктов Арцаха с финальным компонентом -*h* [i]. – 63. **Сообщения:** *Л. Р. Абрамян, Ш. Р. Абрамян* - Использование языковых игр в литературных произведениях. – 80. **Рецензия:** *В. М. Хачатрян*, Важное внедрение в изучении лексики языка Ов. Шираза.- 96. **Книжное обозрение - 100: Научная жизнь – 103.**

Ի Գ Ի Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը հրատարակում է «Լեզու և լեզվաբանություն» հանդեսը, որի առաջին համարը լույս է տեսել 2003 թ.:

Մեր հասցեն՝ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

ՀՀ, 3750015, Երևան, Լուսավորչի 15

Հեռ.՝ (+374 10) 565 337

Կայքէջ՝ www.language.sci.am

Էլ. փոստ՝ lezu.lezvabanutyun@gmail.com

К С В Е Д Е Н И Ю

НАН РА институт языка имени Р. Ачаряна издает журнал “Языкиязыкознание”, первый номер которого был издан в 2003г.

Наш адрес: НАН институт языка имени Р. Ачаряна

РА, Ереван, Лусаворича 15

Тел.: (+374 10) 565 337

Веб. сайт: www.language.sci.am

Эл.-почта: lezu.lezvabanutyun@gmail.com

A C K N O W L E D G E M E N T

NAS RA language institute named after H. Acharyan is publishing afresh «Language and linguistics» magazine, the first number of which was published in 2003.

Our address: NAS language institute named after H. Acharyan

RA, Yeravan, Lusavorich 15

Phone: (+374 10) 565 337

Web page: www.language.sci.am

E-mail: lezu.lezvabanutyun@gmail.com

ԼԵՂՈՒ ԵՎ ԼԵՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
(Հայերենագիտական հանդես)

ЯЗЫК И ЯЗЫКОЗНАНИЕ
(Журнал арменоведческих исследований)

LANGUAGE AND LINGUISTICS
(Journal of Armenian Studies)

1 (32)
2025

Գլխավոր խմբագիր Վ. Գ. Համբարձումյան

Ձևավորումը և էջադրումը՝ Մ. Հ. Խառատյանի
Կազմը՝ Ս. Ս. Արևշատյանի

Հրատ. պատվեր № 1061
Ստորագրված է տպագրության՝
Չափսը՝ 60x84^{1/16} տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 100 օրինակ:

ՀՀ ԳԱԱ տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24: